То есть, можно сделать вывод, что обеспеченность начальными школами в областях не увязывалось с числом поселений. Есть существенные различия по структуре базовых и средних школ. Так в Гродненской области в сельской местности больше всего базовых школ – 32,5%, а меньше всего в Минской – 24,1%, тогда как в среднем по стране 28,7%. В Минской области, где самая низкая доля начальных и базовых школ, самая высокая доля средних школ - 60,6%.

Примерно одинаковая структура школ по областям в городской местности начинает отличаться, если ее соотнести с обеспеченностью на тысячу жителей. Сведения о числе дневных общеобразовательных школ всех ведомств на начало 2000-2001 учебного года, приходящихся на тысячу жителей, приведены в табл. 6. Как в городской, так и сельской местности количество школ, приходящихся на тысячу жителей по типам школ в областях имеют различия. Из данных табл. 6 видно, что больше всего начальных школ, приходящихся на тысячу жителей уже в городах Гомельской области - 0,009, а меньше всего опять в Минской - 0,002. В сельской местности по начальным школам лучшая обеспеченность в Витебской области - 0,3 (табл. 7), а меньше всего в Минской и Гомельской областях (0,1). Больше всего на тысячу жителей городов базовых школ в Могилевской области - 0,01, а меньше всего в Минской - 0,005 (не учитывая г. Минск). В сельской местности больше всего на тысячу жителей базовых школ в Витебской и Гродненской областях (по 0,4) и меньше всего в Минской области (0,2). В Минской области была самая высокая доля средних школ, но на тысячу жителей их в сельской местности столько же, как и в некоторых других областях (0,5), а в городской меньше всех среди областей - 0,09, (лидирует по этому показателю в сельской местности Могилевская область – 0,7). Не сопоставимы между собой и обеспеченность городских поселений гимназиями, лицеями и колледжами, но эти типы учебных заведений создавались в самые последние годы.

Таблица 6.

Число дневных общеобразовательных школ всех ведомств на начало 2000-2001 учебного года, приходящихся на тысячу жителей в городской местности, ед.

Область	Все школы	В том числе:					
		начальные	базовые	средние	гимназии	лицей	колледжи
г. Минск	0,1	0,005	0,001	0,1	0,01	0,003	0,002
Брестская	0,2	0,006	0,006	0,1	0,03	0,004	-
Витебская	0,2	0,004	0,007	0,2	0,007	0,002	-
Гомельская	0,2	0,009	0,009	0,2	0,007	0,003	-
Гродненская	0,2	0,003	0,007	0,2	0,007	0,004	-
Минская	0,1	0,002	0,005	0,09	0,01	0,001	-
Могилевская	0,1	0,003	0,01	0,1	0,007	0,004	0,002
Республика Беларусь	0,2	0,005	0,007	0,1	0,01	0,003	0,001

Из этого анализа можно сделать вывод о том, что пространственная доступность школ существенно различается для жителей различных областей и существует неравенство в возможности потребления благ школьного образования.

Аналогичный вывод можно сделать, если проследить изменение структуры школ по количеству поселений в сельской местности, приходящихся на одну школу (табл. 8). Анализ выполнен только для трех типов школ: начальных, базовых и средних. Лицеи и гимназий есть по одному в двух областях, а колледжей в областях нет вообще, и нет смысла проводить для них подобные расчеты.

Таблица 7.

Число дневных общеобразовательных школ всех ведомств на начало 2000-2001 учебного года, приходящихся на тысячу жителей в сельской местности, ед.

Область	Все школы	В том числе:					
		начальные	базовые	средние	гимназии	лицеи	колледжи
Брестская	1,03	0,2	0,3	0,5	-	-	-
Витебская	1,2	0,3	0,4	0,5	0,002	0,002	-
Гомельская	1,1	0,1	0,3	0,6	-	-	-
Гродненская	1,1	0,2	0,4	0,5	-	-	-
Минская	0,9	0,1	0,2	0,5	0,003	-	-
Могилевская	1,2	0,2	0,3	0,7	-	-	-
Республика Беларусь	1,07	0,2	0,3	0,6	0,001	0,002	-

Из данных табл. 8 видно, что меньше всего сельских поселений, приходящихся на одну школу в Брестской области – 3,6. Это в два раза меньше, чем в среднем по стране. В этой области по всем типам школ на любую из них приходится меньше поселений, чем в других областях. В связи с этим, в этой области больше всего школ проводят занятия во 2-ю смену - 30,5% (за исключением г. Минска, где во 2-ю смену проводят занятия 71,0% (см. табл. 4).

Больше всего в сельской местности на одну школу приходится поселений в Витебской (10,9) и в Гродненской (9,0) областях. Отсутствие школ в большинстве поселений Витебской области объяснимо с позиций восприятия природы благ образования как услуг населению.

Таблица 8.

Число поселений в сельской местности, приходящихся на одну школу, ед.

Область	Все школы	В том числе:		
		начальные	базовые	средние
Брестская	3,6	18,8	13,0	7,0
Витебская	10,9	45,9	33,5	25,4
Гомельская	5,1	40,8	18,7	8,7
Гродненская	9,0	50,4	23,7	20,8
Минская	7,9	55,5	32,7	13,0
Могилевская	7,4	36,3	32,9	13,1
Республика Беларусь	7,3	40,7	25,4	13,9

Так как в этой области число жителей на один сельский населенный пункт самое малое в стране – 6,5 чел., то и «услуги» школ предлагаются там, где есть соответствующая численностью населения. Но общественные блага нельзя отождествлять с услугами (о различии природы общественных благ и услуг см. [8]).

Экономическая теория подобные блага включает в группу общественных благ, которые, в силу так называемых «дефектов» рынка, им не производятся. Данные блага предлагаются бесплатно, и реализуя задачу обеспечения благами школьного образования жителей поселений, государство через республиканский бюджет и бюджеты местных исполнительных органов финансирует их производство. В соответствии с этим, каждый житель страны имеет равное право на получение равной выгоды в возможности их потребления, и предельные издержки на производство подобных благ равны нулю, так как, например, на обучение одного школьника, преподавание любой дисциплины в классе, требуются равные издержки, независимо от того, сколько учеников в школе или находится в классе.

Самое большое количество поселений в расчете на одну начальную школу приходится в Минской области – 55,5. В этой области и в городской и в сельской местности (см. табл. 8) самое низкое количество школ на тысячу жителей и соответственно одна начальная школа охватывает почти самую большую территорию – 418,8 кв. км. Площадь территории области одна из самых больших среди всех областей, и опрос, проведенный в школах г. Столбцы и Столбцовском районе показали, например, что 53,8% детей, которые попали в выборку в городских и 68,5% в сельских школах вынуждены пользоваться транспортом, чтобы добираться в школу. Из них 41,0% пользуются общественным транспортом, 12,8% школьными автобусами и 17,9% подвозят на своих автомобилях родители. В сельской

местности Столбцовского района 7,4% учеников пользуются общественным транспортом и 59,3% доставляются на школьных автобусах. Вообще ученики достаточно часто пользуются общественным транспортом, чтобы добраться в школу. Например, в школах г. Солигорска таких 27,6%, в г. Червеня – 20,0%. В сельской местности этих районов, соответственно 69,6% и 73,3% учеников добираются в школу на общественном транспорте.

Но необходимость пользоваться транспортом, чтобы добраться в школу, заставляет детей, которые учатся в первую смену вставать рано утром с 6⁰⁰ до 7⁰⁰. И если основная масса детей встает с 7³⁰ до 9⁰⁰, то с 6⁰⁰ до 7⁰⁰ встает в городской местности 23,0%, в сельской – 3,7% детей (табл. 9).

Таблица 9.

Ответы на вопрос: в котором часу необходимо вставать в школу, если учиться в первую смену?

	С 6 ⁰⁰ до 6 ³⁰	С 6 ³⁰ до 7 ⁰⁰	С 7 ⁰⁰ до 7 ³⁰	С 7 ³⁰ до 9 ⁰⁰	позже	
Городские поселения	5,1%	17,9%	23,1%	53,8%	-	100,0%
Сельские поселения	--	3,7%	18,5%	75,9%	1,9%	100,0%

Поэтому 15,8% детей, пользующихся транспортом, ссылаются на то, что их утомляют поездки в школу и домой на автобусе, а 27,8% опрошенных школьников ответили, что на их возможность участвовать в школьных мероприятиях влияет именно расписание приезда и отъезда домой на автобусе. Из этой группы детей регулярно участвуют в школьных мероприятиях в праздничные и торжественные дни только 49,7%, 29,4% редко и 16,1% не участвуют (табл. 10), в вечерах отдыха, соответственно, 25,5%, 32,3% и 30,3%.

Таблица 10.

Ответы на вопрос: участвуете ли Вы в проводимых школьных мероприятиях, %

Мероприятия	Не ответили	Да	Редко	Нет	Всего
Праздничные и торжественные дни	4,8	49,7	29,4	16,1	100,0
Вечера отдыха	11,9	25,5	32,3	30,3	100,0
Спортивные выступления	8,4	42,3	23,2	26,1	100,0
Общие собрания	17,1	31,3	16,5	35,2	100,0
Посещение музеев, концертов	13,2	42,6	20,3	23,9	100,0

Аналогичная ситуация с участием в спортивных мероприятий, посещением музеев, концертов, общих собраний и т.п. (см. табл. 10).

В продолжение анализа, следует отметить, что сегодня существуют примеры, когда не только в сельской местности возникает неравенство для детей в пространственной доступности школ. Так по данным Минздрава Республики Беларусь: «В последние годы стало обычным явлением, когда новые жилые микрорайоны остаются без детских садов и школ (микрорайоны «Вулька-1», «Вулька-2» г. Бреста, «Жилгородок» г. Пинска, ул. Промышленная г. Барановичей и др.)» [1].

Приведенные примеры позволяют сделать вывод о том, что пространственная доступность школ существенно различается для жителей различных поселений, и существующее неравенство приводит к тому, что дети не имеют равных возможностей для отдыха, подготовки домашних занятий, участия в общественной жизни, занятий спортом и т.п., а это становится предпосылкой затрудняющей каждому из них попасть в класс тех, кто способен создавать знания, снижает их возможности равно конкурировать на глобальном мировом рынке труда, нахождению пути к достойной жизни. Со временем влияние этого фактора может негативно сказаться на уровне человеческого потенциала страны.

ЛИТЕРАТУРА

1. Государственный доклад «О санитарно-эпидемической обстановке в Республике Беларусь в 2001 году», Мн.: Министерство здравоохранения Республики Беларусь, Республиканский центр гигиены и эпидемиологии, 2003. – 67 с.

2. Итоги работы системы образования в 2002 году и основные направления ее развития на 2003 год. – Мн.: Министерство образования Республики Беларусь, 2003. – 91 с.

3. **Карпов А. О.**, Научное познание и системогенез современной школы // Вопросы философии, №6, 2003. С. 37-54.

4. **Коленюк И.**, Образование в рыночной среде и неэкономические ценности // Экономика Украины, № 3, 2003. С. 67-73.

5. **Мясникович М.**, Проблемы модернизации экономики Беларуси в контексте цивилизационного процесса // Общество и экономика, № 6, 2003. С. 21-37.

6. Основные показатели здоровья населения, деятельности санэпидслужбы и состояния окружающей среды. Сборник. Мн.: Министерство здравоохранения Республики Беларусь, Республиканский центр гигиены и эпидемиологии. – 2000.- 67 с. (здоровье 2002)

7. Параўнальны аналіз развіцця адукацыі ў раёнах Рэспублікі Беларусь (статыстычны даведнік).- Мн.: Міністэрства адукацыі Рэспублікі Беларусь, Галоўны інфармацыйна-аналітычны цэнтр. – 2003. – 72 с.

8. **Харевич Г.Л.**, К содержанию понятия “государственные услуги” в отношении производства общественных благ //Проблемы управления, № 4, 2003. – С. 53-58.

9. **Щетинии В.П.**, Образование в контексте теории человеческого потенциала // Педагогика, №6, 2003 С. 40-47

G. CHAREVICH

*Candidate of Sciences (Economics), Docent
of the Chair of the State Economy Regulation of
Academy of Administration under the auspices of
the President of the Republic of Belarus.*

**THE IMPACT OF THE POSTINDUSTRIAL SOCIETY
DEVELOPMENT ON BASIC (HIGH SCHOOL) EDUCATION
AVAILABILITY IN THE REPUBLIC OF BELARUS**

The author of the article focuses on the problem of distance education availability as to community high school institutions in a country with developing postindustrial society. The research is based on the information from the sociological field study research conducted among the high school pupils from seven regions of the Republic of the Belarus.

The author come to the conclusion that distance availability of high schools differs from the type and size of the region, so the children have no equal rights as to the recreation, home tasks preparation, attending community activities, sports. The inequality may influence the global labor market price of the specialists from the regions.

ՎՐԵԺ ԳԱՄՊԱՐՅԱՆ

*ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
օրենսդրության վերլուծության և զարգացման
վարչության պետի տեղակալ*

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ցանկացած պետության ազգային իրավական համակարգը ներառում է տվյալ հասարակությունում առկա իրավական ինստիտուտներն ու երևույթները, մասնավորապես, իրավական ակտերն իրենց բազմազանությամբ, իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեությունը, իրավական գաղափարախոսությունն ու իրավական մշակույթը [1, շ. 594], [2, շ. 108-113], [3, շ. 4-14]:

Ազգային իրավական համակարգի միջուկը և շարժիչ ուժը սահմանադրությունն է, որի շուրջ են ձևավորվում իրավական համակարգի մյուս բաղադրիչները [4, շ. 113-124]: Սահմանադրությունը՝ որպես իրավական կառուցակարգ (մեխանիզմ), հասարակական կյանքում իրագործվում է իրավական, պետական ինստիտուտների մի ողջ համակարգով, հասարակական իրավագիտակցությամբ և իրավակիրառ պրակտիկայում: Սահմանադրական նորմերի ճնշող մեծամասնությունը չունի իրացման սեփական մեխանիզմ (օրինակ՝ նորմ-սկզբունքներ, նորմ-նպատակներ և այլն): Այստեղ որպես կառուցակարգ հանդես է գալիս ողջ իրավական համակարգը, որի փոխկապակցված բաղադրատարրերն ուղղակի կամ անուղղակի առնչվում են սահմանադրական նորմերի և սկզբունքների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Սա սահմանադրական նորմ-նպատակ է, որին ձգտում է սոցիալական առաջադիմության ուղին ընտրած ազգային պետականությունը: Սակայն այդ նորմ-նպատակի իրագործման համար, ինչպես նշում է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Հարությունյանը, «պահանջվում է այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են՝ սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը և երաշխավորումը պետության ու ողջ հասարակության կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու

սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանվածությունը և այլն» [5, էջ 45]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է մի շարք սկզբունքներ և դրույթներ, որոնց ներհատուկ է իրավական կարգավորման բազմամակարդակ բնույթը: Վերջինս իր հերթին ենթադրում է իրավական համակարգում սահմանադրական նորմերի իրագործման բազմամակարդակ գործընթաց: Այդ պատճառով էլ իրավական բարեփոխումների գործընթացում որոշակի խնդիրներ են առաջանում՝ կապված օրենսդրությունում և դատական ու իրավակիրառ պրակտիկայում սահմանադրական նորմերի փոխակերպման հետ: ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո ազգային սահմանադրական իրավունքի տեսությունում և պրակտիկայում սկսեց ձևավորվել զարգացման նոր ուղղություն, որը միտված է ընդարձակելու սահմանադրական նորմերի և սկզբունքների գործադրման սահմաններն ազգային իրավական համակարգում: Այս առումով կարելի է համաձայնվել ՌԴ - Սահմանադրական դատարանի դատավոր, պրոֆեսոր Գ.Ա.Գաջիևի կարծիքի հետ, համաձայն որի «սահմանադրական սկզբունքների իմացությունը և կիրառումը պարտադիր է ոչ միայն օրենսդիրների և դատարանների, այլ նաև գործադիր իշխանության մարմինների համար» [6, c. 9]:

Արդի ժամանակաշրջանի ժողովրդավարական հասարակությունների զարգացման հիմնական միտումներից է նաև ներպետական իրավական համակարգի սահմանադրականացումը [7], [8, c. 113-124], [9, c. 5-12]: Այս կապակցությամբ պրոֆեսոր Գ.Հարությունյանը գրում է. «Միջազգային սահմանադրաիրավական միտքը ներկայումս, առավել քան երբևէ, կարևորում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ» [5, էջ 44]:

Այս առումով անհրաժեշտ է պարզել «սահմանադրականացում» երևույթի բովանդակությունը, նրա նշանակությունն ազգային պետականության և ողջ իրավական համակարգի համար:

Հասարակության իրավական համակարգի սահմանադրականացումն առավել ցայտուն դրսևորվեց անցյալ դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբներին, երբ ընդունվեցին ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող սահմանադրություններ, իսկ Եվրոպական Միությունը՝ մշակեց իր սահմանադրությունը [10]:

Սակայն, հասարակական կյանքի իրականացումը համաշխարհային-պատմական գործընթաց է՝ կապված հասարակական հարաբերությունների իրավական կանոնակարգման կայուն և հարաշարժ զարգացման միտվածության հետ, որը բնորոշ է անցմանն ագրարային հասարակարգից արդյունաբերական հասարակարգին և արդյունաբերա-

կան հասարակարգից՝ ինֆորմացիոն (տեղեկատվական) և բարձր տեխնոլոգիաների հասարակությանը:

Սահմանադրությունը և դրա հետ կապված սահմանադրականությունը՝ որպես գերապատիվ իրավական երևույթներ, իրավունքի համաշխարհային-պատմական զարգացման գործընթացում երևան եկան 18-րդ դարի վերջերին և հասարակական կյանքում գրավեցին իրենց հաստատուն առաջնային դիրքը: Դեռ ավելին, ժամանակակից գիտական գրականությունում խոսում են «վերպետական սահմանադրության» և «վերպետական սահմանադրականության» մասին, որի ներքո հասկանում են եվրոպական իրավունքի սահմանադրական հիմքերը (Եվրոպական համայնքի և Եվրոպական Միության հիմնադիր ակտերը), ինչպես նաև եվրոպական Սահմանադրությունը՝ որպես կողիֆիկացված ակտ [11]:

Համեմատական սահմանադրական իրավունքի տեսության մեջ սահմանադրականացումը մեկնաբանվում է որպես սահմանադրական նորմերի իրականացում և իրավական ու քաղաքական համակարգի վրա սահմանադրության ներգործության ապահովում: Սահմանադրականացումը սահմանադրության ուղղակի իրավաբանական ազդեցության հետևանք է և կարող է դիտարկվել որպես իրավական համակարգի վրա սահմանադրական նորմերի ներգործության տեխնիկական կառուցակարգ [12, p. 183-184]:

Սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանները, որոնց առկայության դեպքում հնարավոր է սահմանադրության կայուն ազդեցությունը իրավական համակարգի վրա, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը ենթադրում է կայուն ժողովրդավարական սահմանադրական ռեժիմի գործառնություն և հաստատուն իրավական համակարգ: Այդ պարագայում սահմանադրական նորմերի և սկզբունքների ներգործությունը իրավական համակարգի վրա կրում է բնականոն ու անընդմեջ բնույթ:

Այս պայմաններում սահմանադրական նորմերի մեկնաբանումը և կիրառումը ենթադրում է ճյուղային օրենսդրության ու դատական պրակտիկայի համապատասխանեցումը սահմանադրության պահանջներին: Այստեղ սահմանադրական նորմերի ներգործության ծավալը պայմանավորված է հասարակական զարգացման պահանջների ու սահմանադրական նորմերի բովանդակության միջև ուղղակի և հակադարձ կապերի բնույթով:

Սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանների երկրորդ խումբը բնորոշ է, այսպես կոչված, անցումային կամ փոխակերպվող հասարակություններին: Ժամանակակից գիտական գրականության մեջ ի հայտ եկավ գիտական հետազոտության հատուկ ճյուղ կամ համակարգ, որը կոչվում է «տրանզիտոլոգիա» («փոխակերպություն») [13, c. 6-26], [14, p. 5-31], [15, p. 789-825]: Հայաստանն այդպիսի «փոխակերպվող» հասարակությունների թվին է պատկանում, քանզի մեզանում նույնպես տեղի է ունենում հասարակական կարգի փոփոխութ-

յուն, որի հետևանքով կատարվում են արմատական վերափոխումներ քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական ոլորտներում [16]:

Իրավական համակարգի սահմանադրականացման իրավական հիմքը սահմանադրությունն է, որի նորմերն օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով՝ ողջ իրավական համակարգում: Հասարակության իրավական համակարգի սահմանադրականացման հիմնական պայմաններն են՝ սահմանադրության գերակայությունը, նորմատիվությունը և նրա նորմերի ուղղակի գործողությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված է. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»:

Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն սահմանադրությանը և օրենքներին»:

Սահմանադրորեն ամրագրելով սահմանադրության, որպես պետության Հիմնարար օրենքի գերակայության սկզբունքը՝ երաշխավորվում է մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտոնական ճանաչումը, որի ուժով «օրենքը դառնում է անհատի ազատության, նրա իրավունքների իրացման երաշխավորը» [17, շ. 26]: Այս առումով, ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը. «Սահմանադրական հիմնական պահանջն այդ իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի, անօտարելիության ճանաչումն ու ամրագրումն է: Եթե չկա այդ ճանաչումը, ապա անխուսափելիորեն առաջին պլան կարող է մղվել իշխանության իրավունքի թելադրող դերը, իսկ սահմանադրությունը, տվյալ դեպքում, «սահման կոնի» ոչ թե իշխանության իրավունքի, այլ մարդկանց ազատությունների վրա, դրանով իսկ ամրագրելով բռնապետության սկզբունքներ» [18, էջ 22]:

Ազգային իրավական համակարգում միջազգային իրավական նորմերի փոխակերպման գործընթացում որոշիչ դերակատարումը պատկանում է սահմանադրությանը, որը յուրատեսակ «կամուրջ» է միջազգային իրավունքի և ազգային օրենսդրության միջև: Սահմանադրությունն է սահմանում միջազգային իրավունքի և ազգային օրենսդրության փոխազդեցության հիմնարար կանոնները և դրանց հարաբերակցությունն՝ իրավաբանական ուժի տեսանկյունից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»:

Սահմանադրական դրույթներն իրենց կոնկրետացումն են ստացել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում [19]: Մասնավորապես, հիշյալ օրենքի 21-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

Հայաստանի Հանրապետության օրենքներն ու իրավական այլ ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին ու սկզբունքներին»: Սահմանադրական նորմերը որպես կանոն և առավել հաճախակի իրագործվում են իրավունքի զանազան ճյուղերի նորմերի հետ համատեղ: Դա պայմանավորված է նրանով, որ ոչ միշտ են սահմանադրական նորմերը բավարար Հիմնարար օրենքի դրույթների իրագործման համար: Սահմանադրությունն ամրագրում է միայն գլխավոր, հիմնարար սկզբունքները, սահմանում է քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, պետության գործունեության կազմակերպչական ու գործառույթային հիմունքները: Դրանց իրականացումը ենթադրում է սահմանադրական նորմերի ձևափոխում սովորական օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում:

Սահմանադրական ընդհանուր իրահանգումների այդպիսի փոխակերպումը ճյուղային (քաղաքացիական, աշխատանքային, վարչական, քրեական և այլն) օրենսդրության լեզվով պետք է ուղեկցվի սահմանադրության կարգադրագրերի կոնկրետացումով, մարդու հիմնական իրավունքները, ազատությունները ու պարտականությունները մանրամասնող ընթացիկ օրենսդրության միջոցներով, ինչպես նաև Հիմնարար օրենքի նորմերի իրականացման դատավարական ձևերի մշակմամբ: Սահմանադրական նորմերի կոնկրետացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիների իրավունքներին վերաբերող նորմերից շատերը գործում են ճյուղային օրենսդրության միջոցով, ինչպես նաև այն բանով, որ հարկավոր է բարձրացնել իրավունքների ու ազատությունների իրագործման դատավարական ձևերի արդյունավետությունը: Բացի այդ, սահմանադրությունը միշտ ընկալվում է որպես երկարատև գործողության իրավական փաստաթուղթ: Ընդունելով Հիմնարար օրենքի դրույթները կոնկրետացնող նորմատիվ ակտեր՝ օրենսդիրը հնարավորություն է ստանում ավելի լիարժեք կերպով օգտագործել նրա կարգավորիչ ու նաև քաղաքական, սոցիալական, բարոյական ներուժը՝ ի շահ հասարակական առաջընթացի:

Անհրաժեշտ է շեշտել, որ խոսքը պետք է գնա սահմանադրական նորմերի հենց կոնկրետացման, դրանց սուբյեկտների պաշտպանության բուն միջոցների ու իրականացման դատավարական ձևերի մանրամասն մշակման մասին: Այդպիսի կոնկրետացման ընթացքում անբույլատրելի է հեռանալ սահմանադրության տառից ու ոգուց, նրա

մարմնավորած արժեքային ուղենիշներից, սահմանափակել սահմանադրական նորմով նախատեսված լիազորությունների կամ համապատասխան իրավունքներ ու պարտականություններ կրողների շրջանակը: Նման հեռացումը կնշանակի կամ սահմանադրության խախտում և, հետևաբար, կլինի հակասահմանադրական, կամ սահմանադրության փոփոխում, ինչը նույնպես անթույլատրելի է, եթե պահպանված չեն դրա համար անհրաժեշտ պայմաններն ու ընթացակարգերը:

Այսպիսով, կոնկրետացումը հանդիսանում է իրավական համակարգում սահմանադրական նորմերի իրագործման կարևոր պայման: Սահմանադրության նորմերի բովանդակությունը ոչ միշտ է միանշանակ, ինչը հնարավորություն է տալիս մեկնաբանել դրանք տարբեր կերպ՝ ըստ իրավակիրառողի կողմից արվող շեշտադրումների: Այդ նորմերի գնահատականը տարբերվում է նաև՝ կախված կոնկրետ պատմական հանգամանքներից ու պահանջումներից՝ ինչպես դա մեկնաբանվում է իրավակիրառող մարմինների կողմից: Օրենսդիրը, կոնկրետացնելով սահմանադրական նորմը, հարմարեցնում է այն իրացման համար կատարման, իրականացման, կիրառման ընթացքում:

Սակայն, սահմանադրական նորմերի կոնկրետացումը կատարվում է ոչ միայն օրենսդրի, այլև իրավակիրառող մարմինների կողմից, քանի որ դրանք օժտված են անմիջական գործողությամբ: Իրավակիրառողը ոչ թե ներկարար է, որը պետք է ներկի մակերեսն այս կամ այն որոշակի գույնով, այլ նկարիչ, որ կոչված է պատկեր ստեղծել այդ մակերեսի վրա: Եվ ինչպես գոյություն ունեն գեղանկարչության կանոններ, այնպես էլ կան կանոններ, որոնք վերաբերում են Հիմնարար օրենքի կոնկրետացմանը դատական և այլ իրավակիրառ մարմինների գործունեության մեջ դրանց անմիջական գործողության և կիրառման ընթացքում:

Խոսքն, ըստ էության, գնում է սահմանադրական նորմերի կիրառման ընթացքում դրանց պատմական, տրամաբանական, համակարգային, քերականական և այլ մեկնաբանությունների մասին: Սակայն, ցանկացած դեպքում նման մեկնաբանությունը պետք է հիմնվի սահմանադրության ոգու և նրա բովանդակության միասնականության վրա [20, շ. 98-100]: Ինչպես առանձին սահմանադրական նորմերը, այնպես էլ սահմանադրական ինստիտուտները կազմում են ամբողջի մաս և ամբողջի շրջանակներում կատարում են իրենց գործառույթները: Սահմանադրության մեջ ամեն առանձին նորմի կամ նորմերի ֆունկցիոնալ նշանակությունն անհրաժեշտ է հաշվի առնել ու համարել նրա ընդհանուր գործառնության հետ և մեկնաբանել այդ նորմերը սահմանադրական հիմնարար դրույթների ոգով: Այլ խոսքով, առանձին սահմանադրական նորմի կոնկրետացման ընթացքում ստացված արդյունքները չպետք է հակասեն այլ սահմանադրական նորմերի, ընդհանրապես սահմանադրության բովանդակությանը, նրա հիմնարար դրույթներին և սկզբունքներին:

Այսպիսով, հասարակական հարաբերությունների նորմավորման ծրագիրը պարունակվում է բուն Հիմնարար օրենքում, նրա տարբեր բաժիններում, գլուխներում, հոդվածներում: Բայց քանի որ դրանք փոխայանմանավորված են, փոխկապակցված և կազմում են միասնական ակտ, ապա սահմանադրական նորմի կոնկրետացումը պետք է իրականացվի սահմանադրության համակարգում. նրա տեղի հաշվառմամբ և սահմանադրական կարգավորման ընդհանուր ուղղվածության համա-տեքստում: Այստեղ խոսքը դարձյալ գնում է սահմանադրության և ընթացիկ օրենսդրության նորմերի փոխգործողության և զուգակցման մասին, որոնք և կազմում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման անբաժանելի մասը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրության և սովորական օրենքների հարաբերակցությունը դրանց կիրառման ընթացքում դուրս է գալիս տեսաբանական հետազոտությունների շրջանակներից. դա մի հիմնախնդիր է, որն էական նշանակություն ունի դատական և իրավակիրառ այլ մարմինների գործունեության համար:

Սահմանադրական դոկտրինայի մեջ ներկայումս հնարավոր է առանձնացնել համատեղ կիրառման ընթացքում սահմանադրության և ընթացիկ օրենսդրության հարաբերակցության մի քանի գլխավոր ասպեկտներ.

Առաջինը սահմանադրության ազդեցությունն է երկրում կատարվող նորմատեղծ գործընթացի վրա: Կարելի է խոսել իրավական համակարգի վրա Հիմնարար օրենքի իրավակազմավորման աճող ազդեցության մասին: Սահմանադրությունն ուղղակիորեն նախատեսում է մի շարք օրենսդրական ակտերի ընդունում:

Երկրորդը՝ իրավական համակարգում սահմանադրության տեղի, ինչպես նաև նրա իրավաբանական ուժի հարցն է: Լինելով իրավական համակարգի հիմնական բաղադրիչը՝ սահմանադրությունը կատարում է առաջատար դեր: Այն «օրենքների օրենքն» է, որն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և իրավաբանական բազա է ընթացիկ ամբողջ օրենսդրության համար: Այստեղից տրամաբանորեն բխում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական բոլոր անձանց, որոնց վրա տարածվում է պետության տարածքային գերակայությունը, պարտականությունն է պահպանել և պաշտպանել Հիմնարար օրենքը: Դա է սահմանադրական օրինականության, ընդունվող նորմատիվ իրավական ակտերի՝ սահմանադրությանը, նրա տառին ու ոգուն համապատասխանելու երաշխիքներից մեկը:

Սահմանադրական վերահսկողության կազմակերպչական ձև է Սահմանադրական դատարանը, որն օժտված է բավականաչափ համապատասխան իրավասությամբ:

Երրորդը՝ հասարակական հարաբերությունների կարգավորման գործում սահմանադրության և ընթացիկ օրենքների փոխգործողության հարցն է: Այն առաջատար դերը, որն իրավական համակարգում ու-

Նեն սահմանադրական իրավունքը և դրա հիմնարար աղբյուրը՝ սահմանադրությունը, կանխորոշում ու պայմանավորում են այն գործառույթները, որոնք դրված են իրավունքի ճյուղերի վրա և կոչված են նախատեսել ու ապահովել սահմանադրական նորմերի իրագործման համար անհրաժեշտ և հուսալի կառուցակարգեր: Հասարակական հարաբերությունների ոլորտում չկա այնպիսի բնագավառ, որտեղ չարտահայտվի սահմանադրական նորմերի կարգավորիչ ազդեցությունը: Սակայն այդ հարաբերությունները կարգավորվում են նաև իրավունքի այլ ճյուղերի նորմերով: Ինչ խոսք, դա չի նշանակում ո՛չ սահմանադրության ուղղակի և անմիջական գործողության բնույթի, ո՛չ էլ իրավունքի այդ ճյուղերի արժեքի և դերի նսեմացում: Մենք ընդգծում ենք այն միտքը, որ սահմանադրական նորմերի իրագործման կառուցակարգը սահմանվում է ոչ միայն սահմանադրության և ընդհանրապես պետական իշխանության կողմից, այլև ճյուղային օրենսդրությամբ, ինչն իր հերթին անխուսափելիորեն հարց է ծնում այդ կառուցակարգերի սահմանների մասին:

Հիմնարար օրենքի իրագործման սահմանադրական կառուցակարգը գործում է դրա սուբյեկտների միջև հարաբերությունների բնականոն զարգացման ժամանակ: Որևէ շեղում առաջանալու դեպքում, դրա բնույթից կախված, գործի է դրվում նաև իրագործման ճյուղային մեխանիզմը (խախտված իրավունքի վերականգնում, պարտականության կատարման ապահովում և այլն):

Սահմանադրության խնդիրը չէ բոլոր հասարակական հարաբերությունների կարգավորումը: Այն ամրագրում է սահմանադրական կարգի հիմունքները, սահմանում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպման և գործունեության հիմքերը, ամրագրում պետական կառուցվածքը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը, ինչպես նաև պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության կարգը:

Սահմանադրությունն այն իրավաքաղաքական փաստաթուղթն է, որի վրա կառուցվում են ողջ իրավական համակարգը և նրա սկզբունքները:

Սահմանադրությունը նաև հիմնարար նորմատիվ-իրավական չափորոշիչ է՝ իրավական ակտերի և իրավաբանական գործողությունների մեկնաբանման ու պարզաբանման համար:

Այստեղից էլ խիստ արդիական է իրավական ակտերի սահմանադրականության որոշման չափորոշիչների հարցը:

Սահմանադրական իրավունքի տեսությունը և պրակտիկան առանձնացնում են իրավական ակտերի սահմանադրականության որոշման հետևյալ չափորոշիչները.

1. իրավական ակտերի նորմատիվ բովանդակության համապատասխանությունը սահմանադրական դրույթներին, գաղափարներին և սկզբունքներին,

2. սահմանադրական հասկացությունների և տերմինների ճիշտ ընդունումը,

3. իրավասու սուբյեկտների կողմից իրավական ակտերի ընդունումը,

4. իրավական ակտերի ընդունման ընթացակարգի պահպանումը,

5. իրավական որոշումների համապատասխանությունը սահմանադրական նորմերին,

6. իրավական նորմերի մեկնաբանման կայուն պրակտիկայի արմատավորումը:

Սահմանադրականության տեսանկյունից իրավական ակտերի վերլուծության և գնահատման օբյեկտ կարող են լինել.

ա) իրավական ակտն ամբողջությամբ,

բ) իրավական ակտի կառուցվածքային մասը,

գ) իրավական ակտի հոդվածը կամ հոդվածները,

դ) իրավական նորմը:

Իրավական ակտերի սահմանադրականության որոշման խնդրում կարևորագույն դերը պատկանում է սահմանադրական արդարադատությանը [21], [22]: Ջարգացած իրավական համակարգերում դատական իշխանության ակտերը կարևոր դեր են կատարում օրենսդրական բացերի և հակասությունների հարթման խնդրում [23, c. 5-10]:

Արդարադատության ինստիտուտը իրավական համակարգի կարևորագույն մասն է և, հիմնականում, նրանով է որոշվում տվյալ իրավական համակարգի զարգացվածության աստիճանը:

Դատական իշխանությունը յուրօրինակ չափորոշիչ է հասարակության քաղաքական վարչակարգի մասին պատկերացում կազմելու համար:

Սահմանադրությունը նաև աղբյուր է ազգային իրավական համակարգի սկզբունքների ձևավորման և դրանց նորմատիվ բովանդակության համար: Ընդհանրապես, իրավական համակարգի սկզբունքներն այն ելակետային ու հիմնարար դրույթներն են, որոնք կանխորոշում են հասարակության իրավական համակարգի էությունը, նորմատիվ բովանդակությունը, իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեության բովանդակությունն ու բնույթը [24]:

Սահմանադրությունը հասարակության կայունության, սոցիալական ու քաղաքական հակասությունների բնական լուծման և փոխգիշտումների հասնելու հիմնական իրավական միջոցն է [25], [26, c. 147-158]:

Սահմանադրությունը կարգավորում է հասարակության մեջ բախումների հաղթահարումը, կանոնավորում է քաղաքական միասնության կազմակերպման և ձևավորման գործընթացն ու պետության գործունեությունը, դրանով իսկ ապահովելով քաղաքացիական հասարակության ձևավորման հնարավորությունը, քանզի առանց քաղաքա-

ցիական միասնության հնարավոր չէ նախադրյալ ստեղծել քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Այդ իմաստով սահմանադրությունը ստեղծում և նորմավորում է ընդհանուր պետաիրավական ռեժիմի հիմքերը: Ընդհանուր առմամբ, այն կշռադատված, որոշակի սկզբունքների վրա խարսխված, հասարակության կյանքի կանոնակարգման հիմնական իրավական ակտն է կամ, համենայնդեպս, այդպիսին պետք է լինի, քանի որ սահմանադրությունը իրավաբանական փաստաթուղթ է, որի տառը, ոգին, նորմերն ու սկզբունքները կանխորոշում են իրավունքի սուբյեկտների վարքը [27, с. 37-38]: Եվ որքան շատ հասարակության անդամներ համաձայնեցնեն իրենց վարքը սահմանադրության հետ, այնքան ավելի լիարժեք ձևով կարտահայտվի ժողովրդավարական ինստիտուտների ներուժը, ավելի հուսալի կլինեն ժողովրդավարության, ազատության և անձի իրավունքների իրականացման երաշխիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Сырых В.М.**, Теория государства и права: Учебник. 3-е изд., М., 2004.
2. Актуальные теоритические проблемы правовой системы общества. – “Государство и право”, 2004, №7.
3. **Сорокин В.В.**, К понятию правовой системы.- “Правоведение”, №2(247), 2003.
4. **Кравец И.А.**, Российская Конституция и конституционализация правового порядка (некоторые вопросы теории и практики). – “Журнал российского права”, №11, 2003.
5. **Փազիկ Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ, Երևան, 2005:
6. **Гаджиев Г.А.**, Конституционные принципы рыночной экономики (Развитие основ гражданского права в решениях Конституционного Суда Российской Федерации). М., 2002.
7. **Փազիկ Հարությունյան**, Սահմանադրությունից սահմանադրականություն, Երևան, 2004.
8. **Кравец И.А.**, Конституционализация правового порядка (некоторые вопросы теории и практики). – “Журнал российского права”, №11, 2003.
9. **Эбзеев Б.С.** Диалектика индивидуального и коллективного в организации социума и ее отражение в Конституции (к методологии исследования).- “Государство и право”, 2004, №2.
10. Draft Treaty establishing a Constitution for Europe: adopted by consensus by the European Convention on 13 June and 10 July 2003

- submitted to the European Council in Rome on 18 July 2003. http://europa.eu.int/futurum/constitution/index_en.htm.
11. **Shaw Jo.**, Postnational Constitutionalism in the European Union // journal of European Public Policy. 1999. Vol.6. Issue 4. Constitutionalization // Con WEB No.3/ 2000. Constitutionalism WEB-Papers, <http://www.gub.ac.uk/ies>.
 12. **Fokelkloou A.**, Constitutionalism and the Presidency in the Russian Federation // International Sociology. 2003. Vol.18. No.1.
 13. **Капустин Б.Г.**, Конец "транзитологии" ? // Полис. 2001, №4.
 14. **Lukin A.V.** The Transitional Period in Russia // Russian Social Science Review. Jul./ Aug. 2000, Vol.41. Issue 4.
 15. **Solnick S.L.**, Russia's <Transition>: Is Democracy Delayed Democracy Denied? // Social Research. Fall 1999. Vol 66. Issue 3.
 16. **Погосян Г.А.**, Армянское общество в трансформации. Ереван, 2003.
 17. **Четвернин В.А.**, Понятие права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997.
 18. **Չափիկ Հարությունյան**, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երևան, 2003:
 19. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №15 (190), 21 մայիսի 2002:
 20. **Хабриева Т.Я.**, Толкование Конституции Российской Федерации: теория и практика. М., 1998.
 21. **Չափիկ Հարությունյան**, Սահմանադրական վերահսկողություն: Հանձնատական վերլուծություն, Երևան, 1997:
 22. **G.Narutyunyan**, A. Mavciê. Constitutional Review and its development in the Modern World (A comparative Constitutional analysis). Yerevan – Ljubljana, 1999.
 23. **Багдановская И.Ю.**, Судебный прецедент – источник права? – "Государство и право", 2002, №12.
 24. **Федорченко А.А.** Принципы правовой системы России (теоритический аспект). Автореферат дисс... канд. наук. М., 2003.
 25. **Эшдинос Курис**, О стабильности конституции, источниках конституционного права и мнимом всемогуществе конституционных судов. "Конституционное правосудие", Ереван, 2004.
 26. **Юрий Батурин**. Конституция как искусство развязки в классической трагедии. "Конституционное право: Восточноевропейское Обозрение", №2(47) 2004.
 27. **Кутафин О.Е.**, Источники конституционного права Российской Федерации. М., 2002.

VREZH GASPARYAN

*Deputy Head of the Legislation Analysis
and Development Department of the Staff of the
National Assembly of the Republic of Armenia*

ROLE AND SIGNIFICANCE OF THE CONSTITUTION IN THE NATIONAL LEGAL SYSTEM

The constitution, as a legal mechanism, is realized in the social life through the system of legal, state institutions, social legal consciousness and legal practice.

One of the main directions of the development of a modern democratic society is the constitutionalisation of the legal system.

Constitution and constitutionalism related to it, as legal phenomena, came into being in the process of world historical development at the end of the 18th century and took their primary place in social life.

In the theory of comparative constitutional law, constitutionalism is defined as realization of constitutional norms and provision of bringing the constitution into legal and political systems. And realization of constitutional provisions supposes their transformation in laws and other legal acts, defining of these acts.

Adopting normative acts defining provisions of the main law, the legislature gets an opportunity to use fully the regulatory, as well as political, social, moral potential of the constitution for the good of the development of the society.

Defining of constitutional norms is realized also through judicial and other law-practicing bodies.

Constitution is also the source for the formation of fundamental principles of the national legal system and their normative essence.

ԳՐԻԳՈՐ ԲԱԴԻՐՅԱՆ

*Չայաստանում ֆրանսիական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի դեկան
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից և մի քանի ամիս գոյատևեց իբրև ինքնուրույն պետական կազմավորում, որտեղ սկզբում իշխանությունն իրականացնում էր Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ 1918թ. փետրվարին 23-ից՝ Անդրկովկասյան սեյմը: Անդրկովկասյան իշխանությունները չճանաչեցին Խորհրդային Ռուսաստանին, ինչպես նաև սեպարատ հաշտության մասին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և շարունակում էին պատերազմը Թուրքիայի դեմ: Սակայն այդ հարցում ադրբեջանցիների, հայերի և վրացիների շահերը չէին համընկնում, առկա էին լուրջ հակասություններ, որոնց պատճառով 1918թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը կազմալուծվեց և ստեղծվեցին անդրկովկասյան երեք հանրապետություններ:

1918թ. մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը Չայաստանը հռչակեց անկախ պետություն [1, էջ 58-84]:

Ճակատագրի հեզմանքով Չայաստանի անկախության հարցում շահագրգիռ Թուրքիան, որն առաջին հայացքից հասկանալի չի թվում, սակայն, իրականում, Թուրքիան նպատակ էր հետապնդում անկախ պետության հետ պայմանագիր կնքելով օրինականացնել հայկական տարածքների զավթումը ինչն անխոցելի կլիներ իրավական տեսանկյունից: Դա էլ կատարվեց 1918թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրով, որի պայմանները Չայաստանի համար զգալիորեն վատթար էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրից:

Չայաստանի հանրապետությունը գոյատևեց երկուսուկես տարի՝ մինչև 1920թ. նոյեմբերի 29-ը: Ընդունված է այն անվանել Չայաստանի առաջին, խորհրդային ժամանակաշրջանը՝ երկրորդ, իսկ հետխորհրդայինը՝ երրորդ հանրապետություն: Առաջին հանրապետությունն ընդունված է անվանել նաև դաշնակցական հանրապետություն, քանի որ այդ պետության կազմավորումից մինչև դրա գոյության վերջին օրը իշխանությունը պատկանում էր հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությանը:

Առաջին հանրապետության ժամանակաշրջանը քիչ է ուսումնասիրված, եղածն էլ խորհրդային գիտնականները կատարել են՝ էլնե-

լով քաղաքական կողմնորոշումներից: Մռայլ գույներով են ներկայացված հատկապես անձի իրավական դրությամբ վերաբերող իրողությունները [2], [3], [4], [5], [6], [7], [8]: Խնդիրը վերաբերում է, իհարկե, ոչ թե պատմական իրողությունների զեղծարարությանը, այլ դրանց մեկնաբանություններին և գնահատումներին: Չնայած իրականում ժամանակաշրջանն այնպիսին էր, որ ինչպիսի կառավարություն էլ որ լիներ չէր կարող այդքան կարճ ժամանակահատվածում վերացնել պատերազմի հետևանքները, հոգալ և ապահովել հարյուր հազարավոր փախստականների համար կյանքի և գոյատևման նվազագույն պայմաններ, հաղթահարել համատարած սովն ու համաճարակները, ստեղծել մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող իրավական դաշտ և համապատասխան երաշխիքներ այդ բնագավառի օրենքների իրականացման համար, ինչպես նաև արդյունավետ պայքար կազմակերպել երկիրը կլանած հանցավորության՝ մասնավորապես, զինված խմբավորումների դեմ, իսկ այս բոլորը վրացիների և ադրբեջանցիների հետ սահմանային կռիվների, երկրի ներսում ազգամիջյան կռիվների ու բուլշևիկյան շարժումների ու խռովությունների առկայության պայմաններում:

Այս ժամանակաշրջանի մասին Հայաստանի վարչապետ Հովհաննես Քաջազնունին գրում է, որ փախստականները Թուրքահայաստանից, որոնց հաջողվել էր ազատվել ջարդերից, տասնյակ ու հարյուր հազարներով լցվել էին Արևմտյան Հայաստանի գավառները: Քաղցած, հիվանդ, սարսափահար ու բարոյալքված մարդիկ գալիս էին ու հեղեղում մեր գյուղերն ու քաղաքները: Արդյունքում կուտակվում էին փախստականները, Շիրակն ու Արարատյան դաշտը վերածվել էին հիվանդանոց-անկելանոցի, ուր հայ մարդիկ մեր աչքի առջև, մեր դռների շենին սովից ու հիվանդություններից մեռնում էին հազարներով...

Ու մենք անգոր էինք փրկելու այդ թանկագին կյանքերը [9, էջ 16-17]:

Նշված ժամանակաշրջանում երկրի իրավիճակն իրենց հուշերում նույն ձևով են ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետներ Ալեքսանդր Խատիսյանը և Սիմոն Վրացյան [1], [10] (Հայաստանի առաջին հանրապետությունն իր գոյատևման 2.5 տարում ունեցել է չորս վարչապետ):

Ահա այսպիսի ծանր պայմաններում դաշնակցական կառավարությունն սկսեց անկախ պետականության շինարարությունը:

Դաշնակցությունը պատմական ասպարեզ իջավ որպես սոցիալիստական ուղղվածության ժողովրդավարական կուսակցություն և իր ծրագրում ընդգրկել էր բազմաթիվ առաջադիմական գաղափարներ.

- խոսքի, մամուլի, խղճի, միություններ կազմավորելու և գործադուլների կատարյալ ազատություն,
- եկեղեցու բաժանումը պետությունից, կրոնն անհատական գործ է,

- ազգային ինքնորոշման իրավունք, բոլոր ազգային և կրոնական համայնքների կատարյալ հավասարություն, դասակարգային բոլոր առանձնահատկությունների վերացում,
- ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրություններ առանց որևէ խտրության,
- անձի և բնակարանի անձեռնամխելիություն, նամակագրության գաղտնիություն, տեղաշարժման ազատություն, անցագրերի վերացում
- ընդհանուր պարտադիր և ձրի սկզբնական ուսում պետության հաշվին, դպրոցների աշխարհականացում,
- անվճար դատավարություն և այլն:

Ծրագիրն ուշագրավ դրույթներ էր պարունակում նաև սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող բնագավառում, այն է.

- հողերի համայնացում, հողը դադարում է մասնավոր սեփականություն կամ վաճառքի առարկա լինելուց, արքունական, կալվածատիրական, կրոնական հիմնարկություններին պատկանող հողերը դարձնել ժողովրդի սեփականություն
- հողերի տնօրինությունը և նրանց օգտվելու ձևերի մանրամասն որոշումը պատկանում է գյուղական և քաղաքական համայնքներին,
- պետական ապահովագրություն երաշտի, կարկուտի, հեղեղի և ուրիշ նման պատահարների դեմ, բանվորների ապահովագրում դժբախտ պատահարներից պետության և գործատուների հաշվին,
- ութժամյա աշխատանքային օր թե՛ քաղաքաներում, թե՛ գյուղերում, աշխատանքի օրենսդրական հովանավորում գիտական, առողջապահիկ պահանջների համաձայն,
- անվճար բժշկություն և այլն [11]:

Դաշնակցական կառավարությունն իրենց կուսակցության ծրագրում նախատեսված բոլոր սկզբունքների հիման վրա կառուցեցին իրենց կառավարական ծրագիրը, հանդես եկան հայտարարությամբ և, իհարկե, ամեն կերպ փորձեցին օրենսդիր և գործադիր գործունեությամբ կյանքի կոչել դրանք ու կարողացան հասնել թեկուզև շատ համեստ, բայց որոշ արդյունքների:

Հանրապետության երկուսուկես տարվա գոյության ընթացքում խորհրդարանի կողմից ընդունվել է 290 օրենք: Մինչև խորհրդարանի ընտրությունները Հայաստանում օրենսդիր իշխանությունն իրականացնում էր Հայոց Ազգային խորհուրդը: Օրենքներ են ընդունվել նաև կառավարության կողմից, որոնք ավելի մեծ թիվ են կազմում: Հայաստանի կառավարությունն օժտված էր պատվիրակված օրենսդրության իրավունքով [12, էջ 37]: Հայաստանի կառավարությունը օրենսդրական գործառույթ է իրականացրել 1919թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը՝ խորհրդարանի բացման օրը և 1920թ. մայիսի 5-ից մինչև գոյատևման իր ավարտը [13, էջ 51-53]:

Օրենսդրական դաշտի ձևավորման բնագավառում առաջին կարևոր քայլերից մեկը հատուկ օրենքի ընդունումն էր, որով ցարական Ռուսաստանի օրենսդրությունը, ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի կողմից ընդունված օրենքները ժամանակավորապես գործողության մեջ էին դրվում Հայաստանի տարածքում [14, թ. 15]: Մինչև սեփական օրենսդրության ստեղծումը սա պարտադրված քայլ էր: Սակայն պատմության տնօրինմամբ դրանք գործեցին Հայաստանի առաջին Հանրապետությունում գոյության ողջ ժամանակաշրջանում:

Հայաստանի առաջին Հանրապետությունն իր գոյատևման կարճ ժամանակաընթացքում չհասցրեց ընդունել հիմնական օրենք՝ Սահմանադրություն, որի պատճառով անձի իրավական վիճակը կարգավորող օրենսդրություններն իրենց արտացոլումն են գտել սովորական օրենսդրական ակտերում: Այդ օրենսդրությունն ընդհանրապես համակարգված բնույթ չստացավ, սակայն, ելնելով կարգավորման բնագավառներից, այն պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- ա) անձի սոցիալ-տնտեսական դրությանը վերաբերող,
- բ) քաղաքացիական և քաղաքական իրավունքներին վերաբերող,
- գ) արդարադատության հարցերի կարգավորմանը վերաբերող:

Պետք է կարևորումով արձանագրել, որ չնայած Հայաստանի առաջին Հանրապետությունը գտնվում էր քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր վիճակում, սակայն առաջին իսկ օրերից որդեգրեց ընդգծված սոցիալական քաղաքականության կողմնորոշում, որն իր արտացոլումը գտավ իրավական մի շարք ակտերում:

Հանրապետության առաջնահերթ խնդիրներից մեկը բազմահազար գաղթականների և որբերի խնդիրների լուծումնանն ուղղված միջոցառումների իրականացումն էր: 1918-ի սեպտեմբերի 28-ին ընդունվեց «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենք [14, թ. 6]: Այդ օրենքի 1-ին հոդվածով սահմանված էր շատ կարևոր դրույթ, այն է՝ կարիք ունեցող գաղթականներին օգնությունը տրվում է աշխատանքով ապահովելու միջոցով: Առավել կարևոր էր այս հոդվածի ծանոթագրությունը՝ համաձայն որի գաղթականին աշխատանք տալու անհնարինության կամ նրա աշխատանքի անընդունակության դեպքում նա ստանում է նպաստ:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում էր, որ Հայաստանի սահմաններում գտնվող պետական ազատ, ինչպես նաև լքված և չմշակված հողերը տրվում են գաղթականներին՝ մշակելու: Գաղթական յուրաքանչյուր ընտանիքին հողը տրվում է աշխատավոր ձեռքերի թվի համեմատ:

Գաղթականներին աշխատանքով ապահովելու համար առանձին դեպքերում պետության միջոցներով բացվում էին տարբեր բնույթի արհեստանոցներ և աշխատատեղեր: Այս առումով հատկանշական է 1918թ հոկտեմբերի 8-ին ընդունված «Կարիքավոր գաղթականների համար ջուլիականոցներ բանալու մասին» օրենքը [14, թ. 7-8]: Այդ

օրենքի 1-ին հոդվածում սահմանվում էր՝ կարիքավոր գաղթականների, առավելապես կանանց համար, բանալ պետական ջուլիականոցներ: Եվ 2-րդ հոդվածով նախատեսվում էր այդ նպատակով հատկացնել 6.7 միլիոն ռուբլի և 85.7 փուֆ բամբակ:

Նույն թվականի հոկտեմբերի 11-ին ընդունվեց «Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակության մասին» օրենքը [14, թ. 8-9]: Այս օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի սահմաններում բուլոր գաղթական որբերի խնամատարության և դաստիարակության գործը պետությունը վերցնում է իր վրա, որի անմիջական վարումը հանձնվում է խնամատարության նախարարին: Այդ օրենքին կից նախահաշվի համաձայն, 1918թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար, որպես որբերի պահպանման ծախսերի նախատեսված էր 12.7 միլ. ռուբլի: 1918թ. հոկտեմբերի 1-ին ընդունված մեկ այլ օրենքով նախատեսվում էր 750 հազար ռուբլու վարկ հատկացնել ներքին գործոց նախարարությանը հոկտեմբեր ամսվա ընթացքում որբերի խնամատարության համար [14, թ. 7]:

1919թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեցին որբերի խնամատարներին վերաբերող ևս երկու օրենք:

Խնամատարության և աշխատանքի նախարարությանը 2670 որբերի համար արհեստանոցներ հիմնելու և գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով 2.2 միլիոն ռուբլու վարկ բանալու մասին [9, թ. 142] և երկրորդ օրենքը՝ 15100 որբ խնամելու համար խնամատարության և աշխատանքի նախարարությանը 64.9 միլիոն ռուբլու վարկ բանալու մասին [15, թ. 132]:

Այն ժամանակվա Հայաստանի համար սրանք խոշոր գումարներ էին: Համեմատության և նաև տեսնելու համար, թե ինչպիսի խնայողությամբ էր գործում Հայաստանի կառավարությունը հատկանշական է հիշատակել 1919թ. հունվարի 13-ի օրենքը զինվորների աշխատավարձերի ավելացման մասին [16, թ. 34], որի 1-ին հոդվածում սահմանված է, որ նկատի ունենալով կենսամթերքների ծայր աստիճան թանկությունը, զինվորների աշխատավարձերն սկսած 1919թ. հունվարի 1-ից ավելացնել տասը ռուբլով:

1919թ. մայիսի 3-ին գաղթականների վերաբերյալ ընդունվեց ևս մեկ օրենք [17, թ. 17], համաձայն որի Ղարսի նահանգի փախստականների ներգաղթը կազմակերպելու համար նախատեսվում էր հատկացնել խնամատարության նախարարությանը երեսունվեց միլիոն երկու հարյուր հազար ռուբլու վարկ:

Ձեռնարկված ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել փախստականների համար կենսագոյության իրավունքի նվազագույն պայմաններ և թեկուզև մեծ կուրուստներով նրանք գոյատևեցին և դարձան Հայաստանի լիիրավ քաղաքացիներ:

Հայաստանի Հանրապետությունն իր խնդիրն էր համարում օգնություն ցուցաբերել նաև հարևան հանրապետություններում գտնվող մեր հայրենակիցներին, որոնք նույնպես ծայրահեղ կարիքի մեջ էին:

Այս առումով վարչապետ Սիմոն Վրացյանը գրում է. «Իր խղճուկ միջոցներից Հայաստանն ստիպված էր բաժին հանել և երկրից դուրս գտնվող կարոտյալներին»: 1918թ. հոկտեմբերի 26-ին Հայաստանի խորհրդարանը կես միլիոն ռուբլի հատկացրեց Բաքվի հայ աղետյալներին, նույն թվականի նոյեմբերի 4-ին հինգ միլիոն ռուբլի՝ Վրաստանի Հայոց Ազգային խորհրդին միանվագ նպաստ տալու համար, իսկ դեկտեմբերի 3-ին՝ 300 հազար ռուբլի վարկ բաց արավ Պարսկաստանի հայ փախստականների օգնության և այլն: Փշրանքներ էին սրանք տիրող ծով կարիքի համեմատությամբ, բայց Հայաստանի սեղանի վրա էլ փշրանքներից գատ բան չկար, հայ ժողովուրդը չունեցածից էր տալիս» [10, էջ 202]:

Գաղթականության խնդիրը միակ դժվարությունը չէր Հայաստանի առաջին Հանրապետությունում: Սոցիալական դրության առումով կարիքի մեջ էին բնակչության գրեթե բոլոր շերտերը: Նրանց կենսագոյության իրավունքի ապահովման ուղղությամբ ձեռնարկված կարևորագույն քայլ էր հողի ազգայնացումը, որը տարածվեց մասնատիրական, վանքապատկան և լքյալ հողերի վրա: Պետականացված հողերը ենթակա էին բաշխման հողագուրկ գյուղացիներին: Յուրաքանչյուր անձ կարող էր ստանալ այնքան հողակտոր որքան ի վիճակի էր մշակել անձամբ իր ընտանիքի անդամների հետ միասին առանց ուրիշի աշխատանքի շահագործման, և որը բավարար էր ընտանիքի սպառողական պահանջները բավարարելու համար:

Այս գործընթացը տևեց առաջին հանրապետության գոյության ողջ ժամանակաընթացքում: Հայաստանը լեռնային և հողագուրկ երկիր էր, ուստի անհրաժեշտ էր լինում ձեռնարկել բոլոր միջոցները հողն անմիջապես մշակող գյուղացիներին հանձնելու համար: Օրինակ 1918թ. հոկտեմբերի 11-ին «Տեղական ինքնավարությունների հողերը կապալով տալու մասին» օրենքով սահմանվեց հետևյալը.

Միջնորդ կապալառուների կողմից գյուղացիների շահագործումը վերացնելու համար Հայաստանի խորհուրդը որոշում է.

1. Տեղական ինքնավարությունները տալիս են իրենց պատկանյալ վարելահողերն ու խոտհարքը կապալով անմիջապես հողի կարիք ունեցող և այն սեփական աշխատանքով մշակող անհատներին կամ արհեստավորական ընկերություններին:

2. Տեղական ինքնավարություններին իրավունք է տրվում լուծել իրենց վարելահողերի և խոտհարքի այն պայմանագրերը, որ կնքել են նրանք մինչ այս օրենքի հրատարակությունը [14, թ. 8]:

Հողային հարցի, մասնավորապես այն պետականացնելու և ընչազուրկ գյուղացիներին բաշխելու գործընթացի վերջնական լուծման համար 1920-ի հունիսի 4-ին ընդունվեց «Հողային հատուկ մարմինների մասին» օրենքը [18, թ. 71]: Օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է. «Հայաստանի սահմաններում հողային հարցն արագ լուծելու համար կազմվում են հողային հատուկ մարմիններ, իսկ 3-րդ հոդվածը սահմանում է՝ հողային հատուկ մարմինների պարտականությունն է շրջել գա-

վառները և կարճ ժամանակում պետականացնել բոլոր մասնատիրական, վանքապատկան և լքյալ հողերը: Պետականացված հողը բաշխել գյուղացիությանը, նոր ազգաբնակչության տեղավորելու համար հատկացնել հող, լուծել գյուղերի ներսում և միջգյուղային հողային վեճերը»:

Նշված օրենքների կիրարկման արդյունքում գյուղական վայրերում հնարավոր եղավ բազմահազար ընչազուրկ գյուղացիների, ինչպես նաև գաղթականների համար ապահովել կենսագոյության, իսկ ավելի ուղղակի ասած՝ մարդու ի վերուստ ունեցած բնական իրավունքը, այն է՝ կյանքի իրավունքը:

Կառավարությունը գյուղի և գյուղատնտեսության զարգացման համար ձեռնարկում էր նաև այլ միջոցառումներ, մասնավորապես լուծվում էին հողատարածքների ջրարբիացման, ագրոտեխնիկական միջոցների ներդրման, գյուղական ճանապարհների կառուցման, սերմացուի հատկացման և այլ հարցեր: Օրինակ՝ 1919թ. մարտի 29-ին ընդունվեց օրենք սերմացու և գյուղատնտեսական գույք ու սարքավորումներ ձեռք բերելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակչությունը դրամական անտոկոս փոխառություն տալու համար վարկ տրամադրելու մասին [14, թ. 28]:

Օրենքի 1-ին հոդվածը նախատեսում էր՝ պարենավորման նախարարության տրամադրության տակ դնել 50 միլիոն ռուբլի՝ սերմացու և գույք ձեռք բերելու և ցանքի համար փոխառության տալու նպատակով: Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում էր հետևալը՝ թույլ տալ Մինիստրների խորհրդին հրատարակել կանոններ բնակչությանը սերմացուի համար անտոկոս դրամական փոխառություն տալու և սերմացուով ու գույքով բնակչությանն օգնություն ցույց տալու վերաբերյալ: Իսկ 1919թ. հուլիսի 30-ին ընդունվեց մեկ այլ օրենք՝ «Ազգաբնակչությանը սերմացու և գյուղատնտեսական իրեր մատակարարելու և այդ նպատակով 30 միլիոն ռուբլու վարկ բացելու մասին» [19, թ. 138]:

Կառավարության կողմից անհրաժեշտ միջոցառումներ էին ձեռնարկում նաև քաղաքային բնակչության սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ: Ուսումնասիրվող ժամկետում, իհարկե, Հայաստանում խոշոր քաղաքներ չկային հիմնականում գյուղաքաղաքներ էին, որոնց բնակչության մի մասը բանվորներ ու արհեստավորներ էին, իսկ մյուս մասը կապված էր հողագործության հետ:

Քաղաքային բնակչության սոցիալական իրավունքների պաշտպանության առումով ուշագրավ է 1920-ի հուլիսի 5-ին ընդունված օրենքը՝ «Պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողների և բանվորների համար մթերքների հայթայթիչ վարչության մասին» [20, թ. 8]: Այս օրենքի 1-ին հոդվածի համաձայն, պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողներին ու բանվորներին մատչելի գներով մթերքներ հայթայթելու և բաշխելու գործը հանձնվում է աշխատավորական կոոպերատիվների կողմից ընտրվող

հայթհայթիչ վարչությանը: Իսկ 5-րդ հոդվածի համաձայն, հայթհայթիչ վարչությանը կից կազմվում է ներքին վերահսկողության բաժին՝ գլխավոր վերահսկիչի գլխավորությամբ, որն անմիջականորեն վերահսկողության է ենթարկում վարչության գործունեությունը:

Քաղաքներում զարգանում էր առևտուրը, ամենուր բացվում էին մանր և միջին արհեստանոցներ, Երևանում գործում էին կոնյակի և գինու գործարանը, կաշվի գործարանը, պահածոների գործարանները, սակայն նոր մեծ գործարաններ և ֆաբրիկաները բացելու համար հանրապետության հնարավորությունները սուղ էին: Լավագույն ծրագրեր էին մշակվել լեռնարդյունաբերության զարգացման համար՝ հաշվի առնելով Հայաստանի բնական հարստությունները, սակայն դրանք հնարավոր եղավ իրականացնել միայն հետագա տասնամյակներում:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության կողմից ընդունվեցին քաղաքացիների սոցիալական իրավունքների պաշտպանությունն ուղղված ևս մի շարք օրենքներ: Այսպես 1918-ի նոյեմբերի 5-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկությունների քաղաքացիական պաշտոնյաներին միանվագ նպաստ տալու մասին» օրենքը, [14, թ. 11-12], 06.06.1919թ.՝ «Հաշմանդամ զինվորականներին նշանակված կենսաթոշակի չափը 50%-ով ավելացնելու մասին» [17, թ. 43], 16.10.1919թ.՝ «Շրջանային դպրոցական տեսուչների աշխատավարձի հավելման մասին» [15, թ. 61], 21.10.1919թ.՝ «Հանրային կրթության և արվեստի նախարարության պաշտոնյաների ստանալիք հնգամյա հավելումների մասին» [15, թ. 67], 03.07.1919թ.՝ «Բնակարանների և այլ շինությունների առավելագույն գների մասին» [22, թ. 154-158], 09.09.1919թ.՝ «Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան հիմնելու մասին» [15, թ. 24], 04.04.1919թ.՝ Հայաստանի Հանրապետության բանտարկյալների սննդադրամն ավելացնելու մասին [14, թ. 4] և այլ օրենքներ:

Սոցիալ-տնտեսական խնդիրներին զուգահեռ օրենսդրական լուծումներ էին ստանում նաև սոցիալ-մշակութային հարցերը:

Առաջին իսկ օրերից պետությունը ձեռնամուխ եղավ հանրակրթական գործի կազմակերպմանը: Ուսումը դպրոցներում անվճար էր, այն տարվում էր պետության հաշվին: Սակայն «Դպրոցների կառավարման մասին» 1918-ի սեպտեմբերի 11-ի օրենքի 1-ին հոդվածում սահմանված էր, որ դպրոցը Հայաստանի Հանրապետության մեջ պետության մենաշնորհի չէ, յուրաքանչյուր հասարակական կամ համայնական կազմակերպություն, խմբակցություն, ընկերակցություն ինչպես և առանձին անհատ իրավունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախորեն վարելու սեփական միջոցներով [14, թ. 30]: Չնայած այս դրույթի առկայությունը դպրոցական գործի կազմակերպման և ֆինանսավորման հարցեր գործնական կյանքում լուծվում էին միայն պետության կողմից և պետության միջոցներով: Պետությունը ձգտում էր ապահովել քաղաքացու կրթություն ստանալու իրավունքը, միջոցներ էին ձեռ-

նարկվում չափահաս անձանց շրջաններում վերացնելու անգրագիտությունը: 1920թ. հունվարի 5-ին ընդունվեց «գրագիտական և գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների մասին» օրենք [23, ք. 5], որի 1-ին հոդվածում ամրագրվում է.

ժողովրդի կրթությունը նպաստելու համար հիմնվում են՝

ա) անգրագետ հասակավորների համար գրագիտական դասընթացներ,

բ) թերավարժ հասակավորների համար գրավարժական դասընթացներ,

գ) գրագետ հասակավորների համար ժողովրդական համալսարաններ:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դասընթացներն ու ժողովրդական համալսարաններն անվճար են, իսկ 7-րդ հոդվածի համաձայն, դրանց կարող են հաճախել ամեն ոք՝ առանց կրոնի, ազգի և սեռի խտրության:

Պետության կողմից քաղաքացիների կրթության իրավունքի պաշտպանության ակնառու օրինակ է 1918թ. հոկտեմբերի 26-ին ընդունված «Միջնակարգ դպրոցի աշակերտների զինվորական պարտադիր ծառայությունը հետաձգելու մասին» [14, ք. 10-11] օրենքը, որի 1-ին հոդվածում սահմանված է, որ Հայոց Ազգային խորհուրդի որոշումով գործի շարքերը կանչված միջնակարգ դպրոցների աշակերտներին իրավունք է տրվում ժամանակավորապես ազատվելու զինվորական ծառայությունից՝ միջնակարգ կրթությունը վերջացնելու համար: Սեկ՝ այլ օրենքով, որն ընդունվեց 1919թ. հոկտեմբերի 21-ին զինվորական պարտականություններից ազատվում էին դպրոցական տեսուչները, դասատուներն ու վերակացուները [24, ք. 77]:

Կրթական գործին նպաստելու և հատկապես չունևոր խավի կրթության իրավունքի պաշտպանությանն էր ուղղված 1920թ. հունվարի 5-ի օրենքը, որով սահմանված էր հետևյալը. «Պետության հաշվին ձրի դասական պիտույք մատակարարել Հայաստանի Հանրապետության դպրոցներում սովորող բոլոր այն չքավոր դպրոցականներին, որոնց ծնողները զոհվել են Հայաստանի ազատության ու պաշտպանության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար [23, ք. 4] »:

1919թ. վերջի դրությամբ Հայաստանում կար 431 տարրական դպրոց՝ 1096 ուսուցչով և 38015 աշակերտով և 20 միջնակարգ դպրոց՝ 288 ուսուցչով և 5162 աշակերտով [10, էջ 375]:

Պետությունը, ըստ ամենայնի փորձում էր օգնել մտավորականներին գիտության և մշակույթի զարգացումը խթանելու նպատակով: Այսպիսի բովանդակություն ուներ 1919թ. հուլիսի 7-ի «հայ գրողներին, զիտնականներին և հրապարակախոսներին օգնություն հասցնելու համար հարյուր հազար ռուբլի հատկացնելու մասին» օրենքը [25, ք. 132]:

Քաղաքացիների կրթության իրավունքի և հանրապետությունում գիտության զարգացման տեսանկյունից առանձնահատուկ նշանակության իրադարձություն էր 1919թ. մայիսի 16-ին «Հայաստանում հա-

նալսարան բացելու մասին» [25, թ. 35] օրենքի ընդունումը: Այդ օրենքի 1-ին հոդվածի համաձայն, նախատեսվում էր Երևանում հիմնել համալսարան հետևյալ չորս բաժիններով՝ պատմալեզվաբանական, տնտեսաիրավաբանական, բժշկական, ֆիզիկամաթեմատիկական, իսկ հինգերորդ հոդվածով նախատեսված էր համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլու վարկ:

Կարևոր էր նաև հայերենի դերի բարձրացման հարցը: 1919թ. դեկտեմբերի 26-ին ընդունվեց օրենք պետական լեզվի մասին [14, թ. 83]: Այդ օրենքով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է և պարտադիր՝ զորքի ու բոլոր պետական և հասարակական հաստատությունների համար: Օրենքի 2-րդ հոդվածում սահմանվում էր, որ պետական և հասարակական հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել գործավարության պաշտոնական լեզու:

Պետության կողմից նպատակաուղղված գործունեություն էր իրականացվում նաև առողջապահական գործի կազմակերպման ուղղությամբ: Այս խնդրի գերկարևորությունը կայանում էր նրանում, որ երկրում տարածված էին համաճարակ հիվանդություններ՝ խոլերա և տիֆ, այսինքն՝ հարցը կրկին վերաբերում է մարդկանց կյանքի իրավունքին: Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունված թվով երրորդ օրենքը, որն ընդունվեց 1918թ. օգոստոսի 21-ին, վերաբերում էր խոլերայի դեմ պայքարին [14, թ. 2]: Այդ օրենքի 1-ին հոդվածում սահմանված է. «Հայտարարել ամբողջ Հայաստանի տերիտորիան խոլերայի կողմից վտանգված»:

1919թ. ապրիլի 3-ին համաճարակների դեմ պայքարելու մասին ընդունվեց նոր օրենք, որով նախատեսվում էր այդ նպատակով բացել երեք միլիոն ռուբլու վարկ [14, թ. 29]:

Պետությունը ձեռնարկում էր նաև միջոցառումներ համաճարակներից տուժած առողջապահության բնագավառի աշխատողներին կամ այլ ծառայողներին, իսկ մահվան դեպքում նրանց ընտանիքի անդամներին նյութական օգնություն ցույց տալու առումով: 1919թ. ապրիլի 10-ին ընդունվեց օրենք վարակիչ հիվանդություններից իրենց պարտականությունները կատարելիս մահացած բժիշկների, ֆելդշերների, զթոթյան քույրերի և սանիտարների ընտանիքներին նպաստ տալու մասին [26, թ. 38]: Այս օրենքի համաձայն, նշված անձանց ընտանիքները ստանում են պետական զանձարանից միանվագ նպաստ՝ հինգ հազար ռուբլի: Նույն թվականի ապրիլի 11-ին ընդունվեց մեկ այլ օրենք համաճարակից հիվանդանալու կամ մահանալու դեպքում պետական ծառայողներին նպաստ տալու մասին [14, թ. 31]: Այս օրենքի համաձայն, պետական ծառայողներին համաճարակից հիվանդանալու դեպքում պետական զանձարանից տրվում էր միանվագ նպաստ յոթ հարյուր հիսուն ռուբլի, իսկ մահվան դեպքում ընտանիքին տրվում է հազար ռուբլի:

1920թ. հունիսի 10-ին ընդունվեց նոր օրենք՝ «Համաճարակների ժամանակ տարափոխիկ հիվանդություններով հիվանդացած կամ վախճանված քաղաքացիական և զինվորական մասի պետական պաշտոնյաներին նպաստ տալու մասին» [27, ք. 97]:

Այս օրենքով ավելի մեծ չափերի նպաստներ էին սահմանված համաճարակներից հիվանդացած կամ դրանից մահացած բժիշկների ու միջին և կրտսեր բուժաշխատողների, ինչպես նաև իրենց պարտականությունները կատարելու ընթացքում քաղաքացիական և զինվորական մասի պաշտոնյաների նույն պատճառով հիվանդանալու կամ մահվան դեպքերի համար:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, խնամատարության նախարարությանը հատկացվում էր հինգ միլիոն ռուբլի՝ նպաստների բաշխում կատարելու նպատակով:

Առողջապահության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական ինչպես նաև տարաբնույթ գործնական միջոցների իրականացումն, իհարկե, ամարդյունք լինել չէր կարող, բայց միևնույնն է շատերին չհաջողվեց օգնել, նրանք համաճարակների զոհ դարձան:

Այս առումով Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը գրում է. «Տիֆի համաճարակը հարյուրավոր զոհեր կտաներ, առավուները Երևանի փողոցների մեջ տասնյակներով, իսկ հետո հարյուրներով դիակներ կգտնվեին: Ժամանակ չէր լինում նույնիսկ հավաքելու այդ դիակները: Տիֆով հիվանդացան և մահացան ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը, Հայաստանի գլխավոր առողջապահական տեսուչ՝ դոկտոր Անդրեասյանը: Այնուհետև նա նշում է, որ 1918թ. աշնան և 1919թ. ձմռան ամիսներին Հայաստանում սովից և տիֆից մահացավ շուրջ 150 հազար մարդ» [1, էջ 117-118]:

Այսպիսով ընդհանրացնելով՝ կարող ենք պնդել, որ Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունները գործադրեցին անուրանալի ջանքեր, իրականացրին մարդկանց սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, առողջության պահպանման իրավունքների ապահովմանն ուղղված օրենսդրական և գործնական բազմաթիվ միջոցներ, նշված բնագավառներում ձեռք բերվեցին որոշ հաջողություններ, սակայն, ցավոք արդյունքները հեռու էին բավարար լինելուց, որի մասին անաչառ նշում են նաև այդ իշխանությունների առավել հայտնի ներկայացուցիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ալ. Խատիսյան*, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», Բ տպագրություն, Բեյրութ, 1968:
2. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 7, Հայկ. ԽՍՀ Գիտությունների ակադ. հրատարակչություն, պատ. խմբագիր *Ճ.Պ. Աղայան*, Երևան 1967:
3. *Ананikian Б.Г.*, "Идейно политический крах партии дашнакцутюн", изд. Айастан, Ереван 1972.
4. *Бадирян М.Г.*, "Государство и право буржуазной Армянской Республики" (1918-1920гг.), диссертация на соискания ученой степени кандидата юридических наук, Москва 1983.
5. *Галоян Г.А.*, Борьба за Советскую власть в Армении. М. Госполииздат, 1957.
6. *Бегиян А.З.*, Образование и упрочение суверенного Советского армянского государства, Ереван, изд-во АМ Арм. ССР 1962.
7. *Агаян Ц.П.*, Октябрьская революция и освобождение армянского народа, Ереван изд-во Ан Арм ССР 1957.
8. *Կ. Ղազարյան, Ս. Ներսիսյան*, «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում» (Մայիսյան ապստամբությունը), Հայպետհրատ, Երևան, 1932:
9. *Հովհաննես Քաջազնունի*, «Հայ հեղափոխական դաշնակցությունն անելիք չունի այլևս», Թիֆլիս, 1924:
10. *Միմոն Վրացյան*, «Հայաստանի Հանրապետություն» Երևան, 1993թ. . (Սույն աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Փարիզում 1928թ.):
11. Հայ հեղափոխական դաշնակցության ծրագիրը (վավերացված 1907թ. ընդհանուր ժողովի կողմից), Թիֆլիս, Ն. Աղանեան տպ., 1917:
12. *Սաֆարյան Գառնիկ*, Իրավաստեղծ գործունեության պրոբլեմները Հայաստանի երրորդ Հանրապետությունում, իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու մասին ատենախոսության սեղմագիր, Երևան 2002:
13. *Արթուր Վաղարշյան*, Օրենսդիր մարմինները Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.), Իրավագիտության հարցեր, 1997, թիվ 1:

14. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 200, ցանկ 1, գործ 86:
15. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 66:
16. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 27:
17. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 61:
18. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 166:
19. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 221:
20. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 168:
21. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 66:
22. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 33:
23. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 200, ցանկ 1, գործ 490:
24. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 200, ցանկ 1, գործ 66:
25. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 57:
26. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 201, ցանկ 1, գործ 1174:
27. ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվի ֆոնդ 199, ցանկ 1, գործ 155:

GRIGOR BADIYAN

*Dean of Law Faculty of French University of Armenia
Member of Council of Justice
Doctor of Law*

**THE SOCIAL-ECONOMIC AND CULTURAL RIGHTS OF
A PERSON IN THE FIRST REPUBLIC OF ARMENIA**

The article contains a detailed analysis on basic issues regarding the provision of social-economic and cultural rights usage of citizens of the First Republic of Armenia.

On the basis of the research of a huge number of archive materials and critical analysis of legal documents, the author gives detailed characteristics on the legislative policy of the First Republic of Armenia oriented to the provision of the usage of social-economic and cultural rights of its citizens, which, according to the author's comment, are connected to the perspectives of possession and usage of a person's rights the basis of which is formed by the acknowledgement and provision of human and citizen's rights. The material is presented in a systematized way which gives a complete idea about the legal and political status of a person, particularly about his/her social-cultural goods and rights (a job, a place for living, health care, social security, a right of property and others) and cultural rights (free education, an access to cultural values and others).

Meanwhile the author pays attention to the circumstance that despite all social-economic and political difficulties of that time, the Government of the Republic took certain positive measures for giving people a chance to use the above mentioned various material and spiritual goods.

ԱՐՏՅՈՍ ԳԵՂԱՄՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի իրավագիտության
ամբիոնի ասպիրանտ*

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Եվրոպական խորհրդարանը, իրավամբ, անվանում են ԵՄ ամենաժողովրդավարական ինստիտուտը: Դա պատահական չէ, քանի որ խորհրդարանի պատգամավորներն ընտրվում են ԵՄ քաղաքացիների կողմից՝ համընդհանուր և ուղղակի քվեարկության միջոցով: Դրանով իսկ ապահովվում է բնակչության անմիջական մասնակցությունը և ազդեցությունը պետական ինստիտուտների քաղաքականության վրա:

Ընտրությունների միջոցով Եվրոպական խորհրդարանի ձևավորման հնարավորությունը նախատեսված էր արդեն Փարիզի և Հռոմի պայմանագրերով [1, էջ 66-110]: Սակայն Եվրոպական խորհրդարանի, իսկ ավելի ճիշտ՝ խորհրդարանական վեհաժողովի առաջին գումարումները կազմավորվում էին ոչ թե համընդհանուր և ուղղակի ընտրությունների, այլ անդամ-պետությունների կողմից խորհրդարանական վեհաժողովի անդամներ նշանակելու միջոցով: Յուրաքանչյուր պետություն սեփական հայեցողությամբ էր որոշում պատգամավորների նշանակման ընթացակարգը [2, էջ 10]:

1974 թ. Փարիզում Եվրոպական համայնքների անդամ-պետությունները համաձայնություն ձեռք բերեցին Եվրոպական խորհրդարանը համընդհանուր ընտրությունների միջոցով ձևավորելու վերաբերյալ, որն իր իրավական ամրագրումն ստացավ 1976 թ. սեպտեմբերի 20-ին ընդունված «Համընդհանուր և ուղղակի քվեարկության միջոցով խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչներ ընտրելու մասին» խորհրդի ակտում:

Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կանոնակարգումը հանդիսանում է Եվրոպական Միության և անդամ-պետությունների համատեղ վարման առարկա: Հինք ընդունելով խորհրդարանի ձևավորման իրավական կառուցակարգում առկա երկփեղկվածությունը՝ սույն հոդվածի բովանդակությունը նույնպես տարանջատված կլինի երկու մասի՝ առաջինում կվերլուծվեն Եվրոպական խորհրդարանի ընտրությունների կարգավորման առանձնահատկությունները վերազգային իրավական հարթությունում, իսկ երկրորդում՝ յուրաքանչյուր անդամ-պետությունում, այսինքն, ներպետական հարթությունում Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորումը:

Եվրոպական համայնքի հիմնադիր պայմանագիրը պարունակում է մի շարք նորմեր, որոնք ամրագրում են Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորման թույլատրելի սահմանները. «Եվրոպական խորհրդարանն առաջարկություններ է մշակում հանրնդհանուր ուղղակի ընտրությունների վերաբերյալ՝ բոլոր անդամ-պետությունների համար միասնական ընթացակարգի համաձայն կամ բոլոր անդամ-պետությունների համար ընդհանուր սկզբունքներին համապատասխան» [3, էջ 202]:

Վերոնշյալ երկու ձևերից՝ միասնական ընթացակարգ և ընդհանուր սկզբունքներ, կիրառվում է վերջինը: Մեր կարծիքով սրա հիմնական պատճառներից է այն, որ Եվրոպական համայնքի պայմանագիրը չափազանց բարդեցված կարգ է նախատեսում Եվրոպական խորհրդարանի ընտրությունները կանոնակարգող իրավական ակտերի ընդունման համար: Մասնավորապես, պայմանագրի 190-րդ հոդվածը սահմանում է, որ «Խորհուրդը, ստանալով անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված Եվրոպական խորհրդարանի համաձայնությունը, միաձայն որոշում է կայացնում համապատասխան դրույթները հաստատելու վերաբերյալ և անդամ-պետություններին հանձնարարում է ընդունել դրանք իրենց ներպետական սահմանադրական ընթացակարգերին համապատասխան»:

Եվրոպական խորհրդարանի կողմից բազմիցս ներկայացվել են ընտրությունները մանրամասն կարգավորող իրավական ակտերի նախագծեր, սակայն դրանցից ոչ մեկն այդ բարդ ընթացակարգի հետևանքով առայսօր չի ընդունվել: Արդյունքում Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական բազան սահմանափակվում է «բոլոր անդամ-պետությունների համար ընդհանուր սկզբունքներով»:

Ինչպես արդեն նշվել է, այդ նույն ձևաչափով է ընդունվել և ցայսօր գործում է «Հանրնդհանուր և ուղղակի քվեարկությամբ Եվրոպական խորհրդարանի պատգամավորներ ընտրելու մասին» 1976 թ. սեպտեմբերի 20-ի ակտն (այսուհետ՝ Ակտ) այն փոփոխություններով և լրացումներով, որոնք կատարվել են Խորհրդի կողմից 2002 թ. հունիսի 25-ին և սեպտեմբերի 23-ին:

Խորհրդի վերոնշյալ որոշման նախաբանում վերազգային մակարդակում Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորման սահմանները բնութագրվում են հետևյալ կերպ. «Հանրնդհանուր և ուղղակի քվեարկությամբ Եվրոպական խորհրդարանի պատգամավորներ ընտրելու վերաբերյալ ակտը պետք է փոփոխվի այնպես, որպեսզի ապահովվի պատգամավորների ընտրությունը հանրնդհանուր և ուղղակի քվեարկությամբ՝ բոլոր անդամ-պետությունների համար ընդհանուր սկզբունքներին համապատասխան, որն անդամ-պետություններին հնարավորություն կտա ազգային օրենսդրության նորմերն ազատորեն կիրառել այն հարաբերությունների նկատմամբ, որոնք չեն կարգավորվում սույն որոշմամբ»:

Ակտի համաձայն Եվրոպական խորհրդարանի ընտրություններն իրականացվում են համամասնական համակարգով, որի դեպքում խորհրդարանական տեղերի բաշխումն իրականացվում է ըստ ցուցակների կամ մեկ փոխանցվող ձայնի կանոնի համաձայն: Ընդ որում՝ ներպետական իրավական ակտերով կարող է ընտրողներին վերապահվել ցուցակներում իրենց նախընտրած թեկնածուներին նշելու իրավունք (Ակտի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ հնարավոր է համարվում մեկ միասնական ընտրատարածքի ձևավորումը, որն ընդգրկում է անդամ-պետության ամբողջ տարածքը, կամ էլ մի քանի ընտրատարածքների ձևավորում պայմանով, որ այդ դեպքում չի խախտվի «ընտրական համակարգի ընդհանուր համամասնական բնույթը» (Ակտի 2-րդ հոդված):

Պատգամավորական տեղերի բաշխումը կարող է իրականացվել անդամ-պետություններում սահմանված ընտրական շեմի հիման վրա: Առկա է միայն մեկ սահմանափակում, այն է՝ ընտրական շեմը մեկ միասնական ընտրատարածքի դեպքում չպետք է գերազանցի ընտրողների ընդհանուր թվի 5 տոկոսը (Ակտի 2Ա հոդված): Ակտի 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Եվրոպական խորհրդարանն ընտրվում է համընդհանուր ուղղակի ընտրությունների միջոցով՝ ազատ և գաղտնի քվեարկությամբ:

Ընտրությունների անցկացման կարգի կապակցությամբ Եվրոպական Միության իրավասությունը հանգում է միայն ընտրությունների անցկացման կարգի վերաբերյալ ամենաընդհանուր բնույթի պահանջների սահմանմանը:

Եվրոպական խորհրդարանի ընտրություններն անց են կացվում նախորդ գումարման հնգամյա լիազորությունների վերջին տարում: Եթե այդ տարում ընտրություններ չեն կարող անցկացվել, ապա Եվրոպական խորհրդարանի հետ համաձայնեցված Խորհրդի միաձայն որոշմամբ ընտրությունները կարող են նշանակվել տվյալ տարվա ավարտից ոչ ավել, քան երկու ամիս առաջ, սակայն ոչ ուշ, քան հաջորդ տարվա մեկ ամսվա ընթացքում (Ակտի 10-րդ հոդվածի 2-րդ մաս):

Եվրոպական խորհրդարանի ընտրությունների անցկացման ամսաթվերը յուրաքանչյուր անդամ-պետություն որոշում է սեփական հայեցողությամբ, սակայն այն պետք է նշանակվի այն չորս օրվա ընթացքում (հինգշաբթիից մինչև կիրակի), որոնք սահմանված են Խորհրդի որոշմամբ: Եվրոպական խորհրդարանի ընտրությունների անցկացման չորսօրյա ժամկետ սահմանելու վերաբերյալ Խորհրդի որոշումը կարող է ընդունվել միայն միաձայն՝ Եվրոպական խորհրդարանի համաձայնությամբ (Ակտի 9-րդ հոդվածի 1-ին և 10-րդ հոդվածի 1-ին մասեր): Չնայած բոլոր անդամ-պետություններում չորսօրյա ժամկետի պահպանման դժվարությանը, այնուհանդերձ, փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ անդամ-պետություններն անշեղորեն հետևում են Խորհրդի սահմանած կանոններին: Մասնավորապես, Եվրոպական խորհրդա-

րանի 2004 թ. ընտրություններն անցկացվեցին հետևյալ ժամանակացույցին համապատասխան.

- 10 հունիսի՝ Մեծ Բրիտանիա, Նիդերլանդներ,
- 11 հունիսի՝ Իռլանդիա, Չեխիա (Չեխիայում ընտրություններն անցկացվեցին երկու օր՝ հունիսի 11-ին և 12-ին),
- 12 հունիսի՝ Լատվիա, Մալթա,
- 13 հունիսի՝ Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իսպանիա, Իտալիա, Լեհաստան, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Կիպրոս, Ղուկստան, Ղունգարիա, Շվեդիա, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա:

Եվրոպական խորհրդարանի ձևավորման կարգն ուսումնասիրելիս չի կարելի չհանդրադառնալ համընդհանուր ընտրական իրավունքի երաշխիքներին: Սրա կարևորությունը հատկապես պայմանավորված է նրանով, որ Եվրոպական Միության իրավական ակտերով, այսինքն՝ իրավական կանոնակարգման վերազգային մակարդակում չեն բացահայտվում համընդհանուր ընտրական իրավունքի բովանդակությունը, չնայած այն հանգամանքին, որ այդ իրավունքն ամրագրված է Եվրոպական Միության իրավական ակտերում: Կարծում ենք, որ սա մասամբ կարելի է բացատրել նրանով, որ Եվրոպական Միության անդամ-պետությունների ներպետական օրենսդրություններն այս հարցի կապակցությամբ որդեգրել են իրավական կարգավորման միասնական չափանիշներ և սկզբունքներ, որի արդյունքում Եվրոպական Միության ամբողջ տարածքում գործում են միատեսակ սամանադրական նորմեր, որոնք սահմանում են 18 տարին լրացած քաղաքացիների բոլոր հավասար և համընդհանուր ընտրական իրավունքի բովանդակությունը:

Այդ պատճառով էլ Ակտը սահմանափակվում է միայն ընտրական իրավունքի համընդհանուր բնույթի վերաբերյալ միայն ընդհանուր ձևակերպմամբ՝ նշելով, որ ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրող ձայնի իր իրավունքը կարող է իրականացնել միայն մեկ անգամ (Ակտի 8-րդ հոդված):

Վերազգային մակարդակում առավել մանրամասն և հանգամանալից կանոնակարգվում են այն ընտրական իրավահարաբերությունները, որոնք վերաբերում են Եվրոպական Միության քաղաքացիների՝ այն անդամ-պետությունների տարածքում ընտրություններին մասնակցելու իրավունքին, որի քաղաքացի նրանք չեն հանդիսանում: Այսպես, Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական խարտիայի 39-րդ հոդվածի համաձայն «Միության յուրաքանչյուր քաղաքացի կամ քաղաքացուի միության անդամ-պետությունում, որտեղ նա բնակվում է, իրավունք ունի քվեարկել կամ առաջադրվել որպես Եվրոպական խորհրդարանի թեկնածու, այն նույն պայմաններով, ինչ այդ նույն երկրի քաղաքացիները» [1, էջ 439]: Համանման դրույթ է պարունակում նաև Եվրոպայի համար սահմանադրությունը հաստատող պայմանագիրը:

Այս իրավունքի երաշխիքներն ամրագրված են առանձին ակտում՝ «Անդամ-պետություններից որևէ մեկի տարածքում բնակվող և տվյալ անդամ-պետության քաղաքացի չհանդիսացող Միության քաղաքացիների կողմից Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման մանրամասն պայմանների մասին» խորհրդի 1993 թ. դեկտեմբերի 6-ի դիրեկտիվում (այսուհետ՝ Դիրեկտիվ):

Բնակության մշտական վայրում ընտրական իրավունքի իրականացման համար Եվրոպական Միության քաղաքացին պետք է դիմում ներկայացնի ընտրություններին մասնակցելու իր մտադրության մասին (Դիրեկտիվի 8-րդ հոդված): Ընտրողների ցուցակում գրանցվելու համար քաղաքացուց կարող են պահանջվել միայն այն փաստաթղթերը, որոնք նա պարտավոր է ներկայացնել իր քաղաքացիության պետությունում: Դիրեկտիվը սահմանում է նաև համապատասխան դիմումի բովանդակությունը և դրանում արատացուվող տեղեկատվության ընդհանուր նկարագիրը:

Ամրագրելով ըստ բնակության վայրի պետության ընտրական իրավունքի իրականացման հնարավորությունը՝ Եվրոպական Միության օրենսդրությունը միաժամանակ նախատեսում է նաև այդ իրավունքի իրականացման սահմանները: Մասնավորապես, Դիրեկտիվը թույլատրում է սահմանափակել այդ իրավունքը, եթե այդպիսի քաղաքացիների թիվը գերազանցում է տվյալ անդամ-պետությունում գրանցված ընտրողների ընդհանուր թվի 20 տոկոսը: Այս դեպքում ընտրություններին մասնակցելու իրավունքից կարող են օգտվել միայն այն քաղաքացիները, որոնք տվյալ անդամ-պետության տարածքում ապրում են տևական ժամանակ: Նստակեցության այդ ցենզը, ամեն դեպքում, չի կարող գերազանցել 5 տարին (Դիրեկտիվի 14-րդ հոդված):

Պետք է նշել, որ գործնականում այս նորմը շատ սահմանափակ կիրառություն ունի: Մասնավորապես, 2004 թ. ընտրությունների ժամանակ այն կիրառվեց միայն Լյուքսեմբուրգի կողմից:

Գնահատելով Դիրեկտիվը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն աչքի չի ընկնում ընտրական իրավահարարաբերությունների կարգավորման բազմակողմանիությամբ, որը նախ, հնարավորություն չի տալիս պատշաճ կերպով ապահովել ընտրողների իրավունքները, բացի այդ, հնարավորություն է ստեղծում նրանց կողմի չարաշահումների համար: Մասնավորապես, Դիրեկտիվը չի անդրադառնում այն քաղաքացիների կողմից ընտրական իրավունքի իրականացման հարցերին, որոնք միաժամանակ ունեն երկու անդամ-պետության քաղաքացիություն:

Դիրեկտիվը չի բացահայտում նաև «բնակության մշտական վայր» հասկացությունը, որի արդյունքում բազմաթիվ ընտրողներ զրկվում են ընտրական իրավունքի իրականացման հնարավորությունից:

Վերազգային մակարդակում Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորման թերություններից պետք է հա-

մարել նաև ընտրողների վերաբերյալ տվյալների փոխանակման՝ Եվրոպական Միության անդամ-պետությունների միջև գործող տեղեկատվական համակարգի անկատարությունը:

Եվրոպական խորհրդարանի պատգամավորներն ընտրվում են հինգ տարի ժամկետով, որը հաշվարկվում է նորընտիր խորհրդարանի առաջին նստաշրջանի բացման օրվանից (Ակտի 3-րդ հոդված): Եվրոպական Միության իրավական ակտերը չեն սահմանում պատգամավորության թեկնածուներին ներկայացվող տարիքային ցեղ: Այս հարցը շարունակում է մնալ անդամ-պետությունների վարման առարկա: Սակայն վերագրային նակարդակում ամրագրվում են սահմանափակումներ, երբ անձը չի կարող առաջադրվել և ընտրվել պատգամավորի պաշտոնում: Մասնավորապես, Ակտի համաձայն Եվրոպական խորհրդարանի պատգամավոր չեն կարող լինել.

1. անդամ-պետության կառավարության անդամները,
2. Եվրոպական հանձնաժողովի անդամները,
3. Եվրոպական համայնքների դատարանի և Առաջին ատյանի տրիբունալի դատավորները, գլխավոր փաստաբանները և քարտուղարը,
4. Եվրոպական կենտրոնական բանկի տնօրենների խորհրդի անդամները,
5. Եվրոպական համայնքի հաշվիչ պալատի անդամները,
6. Եվրոպական համայնքների օմբուդսմենը,
7. Եվրոպական համայնքների տնտեսական և սոցիալական կոմիտեի անդամները,
8. Եվրոպական համայնքի և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի (Եվրատոմ) հիմնադիր պայմանագրերի հիման վրա ստեղծված մյուս այն կոմիտեների և մարմինների անդամները, որոնց նպատակն է համայնքների միջոցների տնօրինումը, կառավարման անմիջական և ոչ անմիջական գործառույթների իրականացումը,
9. Եվրոպական ներդրումների բանկի տնօրենների խորհրդի, կառավարող կոմիտեի կամ աշխատակազմի անդամները,
10. Եվրոպական համայնքների ինստիտուտների պաշտոնատար անձինք և մասնագիտացված մարմինների, ինչպես նաև Եվրոպական կենտրոնական բանկի ծառայողները:

Բացի վերոնշյալը, 2004 թ. խորհրդարանական ընտրություններից սկսած պասիվ ընտրական իրավունքից չեն օգտվում նաև ազգային խորհրդարանների պատգամավորները: Բացառություն է արված միայն Իռլանդիայի և Մեծ Բրիտանիայի համար, որը գործելու է մինչև 2009թ. [4, էջ 141]:

Եվրոպական խորհրդարանի ընտրությունների հետ կապված հաջորդ երկու կարևոր խնդիրները, որոնք անհրաժեշտ ենք համարում քննարկել սույն հոդվածում, հետևյալն են՝

- խորհրդարանական ընտրություններին քաղաքացիների մասնակցության աստիճանը,

- խորհրդարանի կազմում տղամարդկանց և կանանց հավասարակշռված ներկայացուցչության ապահովումը:

Առաջին հայացքից վերոնշյալ խնդիրները, կարծես, չեն կարող եական նշանակություն ունենալ վերազգային մակարդակում խորհրդարանական ընտրությունների իրավական կարգավորման սկզբունքների վրա: Սակայն, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ քաղաքացիների մասնակցության ցածր աստիճանն ավանդաբար հանդիսացել է Եվրոպական ինտեգրման մտահոգիչ խնդիրներից մեկը, իսկ տղամարդկանց և կանանց հավասարակշռված ներկայացուցչության ապահովմանը նվիրված են վերազգային բնույթ ունեցող բազմաթիվ իրավական ակտեր, ապա առաջադրված խնդիրների քննարկման և լուծման արդիականությունն անվիճելի է:

Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ ընտրազանգվածի՝ աստիճանաբար նվազող ակտիվությունը ներկայումս Եվրոպական Միության առջև ծառայած բարդ խնդիրներից է: 1999 թ. ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո Եվրոպական հանձնաժողովը ստիպված այս հարցի կապակցությամբ ընդունեց կոմյունիկե (Եվրոպական հանձնաժողովի կոմյունիկե «խորհրդի 1993 թ. դեկտեմբերի 6-ի Դիրեկտիվի կիրառման կարգը հաստատելու վերաբերյալ»), որը նախատեսում էր միջոցառումներ ձեռնարկել քաղաքացիների ընտրական ակտիվությունը բարձրացնելու համար¹:

Այնուհանդերձ, Եվրոպական հանձնաժողովի կողմից իրականացված միջոցառումները ցանկալի արդյունքը չապահովեցին: Ավելին, խորհրդարանական ընտրությունների ժամանակ քաղաքացիների ակտիվության ժամանակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր հաջորդ ընտրության ժամանակ ընտրողների ակտիվությունն աստիճանաբար նվազել է²:

¹ Դրանում, մասնավորապես, նշված էր. «Հանձնաժողովը հանձնարարում է բոլոր անդամ-պետություններին ընտրությունների ժամանակ փոստի միջոցով իրավերներ ուղարկել Միության բոլոր այն քաղաքացիներին, որոնք մշտապես բնակվում են տվյալ անդամ-պետության տարածքում: Հնարավորության դեպքում անդամ-պետությունները պետք է թույլ տան քաղաքացիներին ընտրացուցակներում գրանցվել միայն համապատասխան ձևաթուղթ լրացնելու և այն փոստով ուղարկելու միջոցով: Հանձնաժողովը գտնում է, որ պետք է դիտարկվեն բոլոր մյուս հնարավորությունները, մասնավորապես, քաղաքացիներին ընտացուցակներում ընդգրկվելու վերաբերյալ դիմումների ձևեր բաժանելը բոլոր այն դեպքերում, երբ այդ քաղաքացիներն այս կամ այն հարցով դիմում են անդամ-պետությունների իշխանության տեղական կամ կենտրոնական մարմիններին: Ներկայումս անհրաժեշտ է ուժերը կենտրոնացնել ընտրողներին խթանելու և ընտրացուցակներում ընդգրկվելիս աջակցություն ցուցաբերել այն անդամ-պետության տարածքում, որտեղ նրանք մշտապես բնակվում են, ինչպես նաև անհրաժեշտ է տեղեկացնել քաղաքացիներին իրենց ընտրելու և ընտրվելու իրավունքի մասին»:

² 1984 թ. ընտրություններին մասնակցել է ընտրողների 61 տոկոսը, 1989 թ.՝ 58,5, 1994 թ.՝ 56,8, 1999 թ.՝ 49,8, իսկ արդեն 2004 թ. ընտրություններին մասնակցել է ընտրողների ընդամենը 45,7 տոկոսը: Տե՛ս www.europarl.eu.int:

Այս տվյալները, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի ընտրությունների կապակությանը առաջացող իրավահարաբերությունները կանոնակարգող վերազգային իրավական ակտերի բովանդակության վերլուծությունը մեզ թույլ են տալիս եզրակացնելու, որ ընտրական օրենսդրությունն արդյունավետ չէ: Ավելին, երբ կատարում ենք Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորման՝ վերազգային և ներպետական օրենսդրության ու պրակտիկայի համեմատական ուսումնասիրություն, ապա ակնհայտ է դառնում, որ ընտրողների մասնակցության, թեկուզև այդքան ցածր ցուցանիշը հիմնականում հնարավոր է եղել ապահովել անդամ-պետությունների իրավական ակտերի շնորհիվ: Այսպես, ընտրությունների ժամանակ առավել ակտիվությամբ աչքի են ընկել Բելգիայի, Յունաստանի և Լյուքսեմբուրգի ընտրողները, քանի որ այս պետությունների օրենսդրությունն ակտիվ ընտրական իրավունքի կարգավորման առումով կրում է պարտավորեցնող բնույթ:

Մասնակցության համեմատաբար բարձր աստիճան է գրանցվել նաև Իտալիայում և Յունաստանում, ինչը բացատրվում է ոչ այնքան ընտրական գործընթացների իրավական կարգավորման առանձնահատկություններով, որքան քաղաքական ակտիվ պայքարով և պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումներով: Առանձին անդամ-պետություններում ևս՝ Իռլանդիայում, Կիպրոսում և Մալթայում, ընտրությունները բնութագրվել են որոշակի ակտիվությամբ: Իռլանդիայում դա պայմանավորված էր ազգային կառավարության վարած ներքին և համաեվրոպական ակտիվ քաղաքականությամբ, իսկ Կիպրոսում և Մալթայում՝ տնտեսական զարգացման և Եվրոպական Միությանն անդամակցելու արդյունքում ակնկալվող բարեփոխումների սպասումներով:

Մյուս անդամ-պետություններում, սակայն, ընտրողները բավական պասիվ էին հատկապես 2004 թ. ընտրությունների ժամանակ: Որոշ անդամ-պետություններում ընտրողների բավարար մասնակցությունն ապահովելու համար կառավարությունները ստիպված եղան դիմել արհեստական միջոցառումների, մասնավորապես, Եվրոպական խորհրդարանի և ազգային ընտրովի մարմինների, մունիցիպալ մարմինների ընտրությունների միաժամանակյա անցկացումը (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ավստրիա, Իսպանիա և այլն):

Ինչ վերաբերում է Եվրոպական խորհրդարանում զենդերային հավասարակշռման ապահովմանը, ապա Եվրոպական Միության քաղաքական կյանքում սա ունի բացառիկ կարևորություն, որին նվիրված են իրավունքի առաջնային աղբյուրների մի շարք նորմեր: Մասնավորապես, Եվրոպական համայնքի պայմանագրի 2-րդ, 3-րդ և 141-րդ, Եվրոպայի համար սահմանադրությունը հաստատող պայմանագրի մի շարք հոդվածներ նվիրված են այս հարաբերությունների կարգավորմանը:

Երկրորդային իրավունքի համակարգում պետք է առանձնացնել Եվրոպական խորհրդարանի 2003 թ. նոյեմբերի 6-ի բանաձևը՝ «2004 թ.

ընտրություններում տղամարդկանց և կանանց հավասար ներկայացուցչությունն ապահովելու մասին»: Պետք է նշել, սակայն, որ այդ ակտն անդամ-պետությունների համար ուներ ընդամենը խորհրդատվական-հանձնարարական բնույթ և օժտված չէր համապարտադիրությամբ³: Մասնավորապես, բանաձևը նախատեսում էր անդամ-պետությունների ընտրական իրավական ակտերի վերանայում, օրենսդրական մակարդակով կուսակցություններում կանանց ընդգրկելու վերաբերյալ պահանջների սահմանում, և այլ բնույթի միջոցառումների իրականացում, որոնց արդյունքում նախատեսվում էր պատգամավորության կին թեկնածուների թիվը հասցնել 30 տոկոսի:

Անդամ-պետությունների օրենսդրությունների իրավահամեմատական վերլուծությունը մեզ հնարավորություն կտա ամբողջականացնել Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորման ճանաչողության գործընթացը, եզրակացություններ անել ընտրությունները կարգավորող վերազգային և ներպետական իրավական ակտերի արդյունավետության վերաբերյալ, բացահայտել դրանց թերությունները և առավելությունները, ինչպես նաև հիմնավորված առաջարկություններ ներկայացնել դրանց բարելավման և ընտրական իրավունքի ունիֆիկացման համար:

Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ բոլոր անդամ-պետություններում կիրառվում է համամասնական *ընտրական համակարգը*: Ձևավորվում է մեկ ընտրատարածք, որն ընդգրկում է անդամ-պետության ամբողջ տարածքը, կամ էլ՝ մի քանի ընտրատարածքներ: 2004 թ. ընտրությունների ժամանակ մեկ միասնական ընտրատարածքի սկզբունքը կիրառվեց Ավստրիայում, Գերմանիայում, Դանիայում, Եստոնիայում, Իսպանիայում, Լատվիայում, Լիտվայում, Լյուքսեմբուրգում, Կիպրոսում, Զուլնգարիայում, Զուլնաստանում, Մալթայում, Նիդերլանդներում, Շվեդիայում, Չեխիայում Պորտուգալիայում, Սլովակիայում, Սլովենիայում և Ֆինլանդիայում:

Մյուս պետություններում՝ Բելգիայում, Իտալիայում, Իռլանդիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում ձևավորվեցին մի քանի ընտրատարածքներ:

Ինչպես տեսնում ենք, անդամ-պետությունների մեծ մասն ընտրել է մեկ միասնական ընտրատարածքի ձևավորումը, որը մեր կարծիքով պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. նախ, այդ համակար-

³ Եվրոպական Միության իրավունքի աղբյուրների համակարգում ինստիտուտների կողմից ընդունվող բանաձևերը կազմում են իրավունքի երկրորդային աղբյուրների մասը: Բանաձևերի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն իրավունքի մյուս աղբյուրների, դրանք նախատեսված չեն հիմնադիր պայմանագրերով, և Միության ինստիտուտները հիմնադիր պայմանագրերի հիման դրա այդպիսի ակտեր ընդունելու իրավասությամբ օժտված չեն: Սակայն Եվրոպական Միության իրավաստեղծ պրակտիկայի ընթացքում ինստիտուտները ընդունում են այդպիսի ակտեր, որոնք անվանվում են հատուկ ակտեր՝ sui generis իրավունքի աղբյուրներ: Դրանց իրավաբանական բնույթի առանձնահատկություններն արտացոլված են Եվրոպական համայնքների դատարանի նախադեպային որոշումներում:

զը հնարավորություն է տալիս պատգամավորական տեղերը բաշխելիս ավելի հստակ արտահայտել ընտրողների դիրքորոշումը: Բացի այդ, այն ամրապնդում է համազգային կուսակցությունների դիրքերը: Եվ երրորդ՝ այն էապես պարզեցնում է ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացը:

Մի քանի ընտրատարածքների սկզբունքի կիրառումը հանգեցնում է ներպետական ընտրական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերի բարդեցմանը: Այսպես, «Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչներ ընտրելու մասին» Ֆրանսիայի 1977 թ. օրենքը սահմանում է, որ ընտրատարածքների կազմը սահմանվում է այդ օրենքի հավելվածով և դրանց միջև պատգամավորական տեղերը պետք է բաշխվեն «բնակչության թվաքանակին համամասնորեն՝ առավել մնացորդի կանոնի հիման վրա»: 2003 թ. այդ օրենքում կատարված փոփոխության համաձայն ընտրատարածքներում պատգամավորական տեղերի բաշխումն իրականացվում է Ֆրանսիայի նախագահի հրամանագրով: Պետք է նշել, որ մինչև 2004 թ. Ֆրանսիայում Եվրոպական խորհրդարանի ընտրություններն անցկացվում էին մեկ միասնական ընտրատարածքի սկզբունքով:

Մի քանի ընտրատարածքների միջոցով ընտրությունների կազմակերպման մի փոքր այլ կարգ է սահմանված Իռլանդիայում: Այսպես, 1997 թ. ընտրական օրենքն անմիջականորեն սահմանում է ընտրատարածքների կազմը և դրանցից յուրաքանչյուրում ընտրվող պատգամավորների քանակը: Միաժամանակ, օրենքը նախատեսում է յուրաքանչյուր տասը տարին նվազագույնը մեկ անգամ վերանայել ընտրատարածքների կազմը և ձևավորման կարգը:

Այսպիսով, անդամ-պետություններում ընտրատարածքների քանակի և դրանց ձևավորման կարգի միասնականության բացակայությունը բացասաբար է անդրադառնում ընտրական գործընթացի վրա: Պետության տարածքը մի քանի ընտրատարածքների բաժանելը նվազ ժողովրդավարական է, քան մեկ միասնական ընտրատարածքի կիրառումը, քանի որ առաջին դեպքում նախադրյալներ են ստեղծվում ընտրողների հավասար ներկայացուցչության ընդհանուր սկզբունքի խախտման համար: Այս սկզբունքի խախտման վտանգն առավել ակնբախ է, երբ մենք դիտարկում են անդամ-պետություններում *ընտրական շեմի* ոչ միատեսակ կարգավորումը: Ընտրական շեմի մակարդակն ըստ ընտրացուցակներում ընդդրված ընտրողների տարբեր պետություններում այլ է՝

- Յունաստան՝ 3 տոկոս,
- Ավստրիա, Շվեդիա՝ 4 տոկոս,
- Գերմանիա, Յունգարիա, Լիտվա, Լեհաստան, Սլովակիա, Չեխիա, Ֆրանսիա՝ 5 տոկոս:

Ընտրական շեմի սահմանումը հնարավորություն է ստեղծում գոյություն ունեցող ուժեղ կուսակցությունների մենաշնորհային դիրքերը պահպանելու և ամրապնդելու համար: Դրա արդյունքում արհեստա-

կանոններն ավելանում են Եվրոպական խորհրդարանում այդպիսի կուսակցությունների մանդատները:

Ներպետական իրավական ակտերով *ընտրական ցուցակների* կարգավորումը նույնպես բնութագրվում է խայտաբղետությամբ: Ընդհանուր առմամբ գրեթե բոլոր անդամ-պետություններում ընտրություններն անց են կացվում քաղաքական կուսակցությունների ցուցակներով: Սակայն Եվրոպական Միության անդամ մի շարք պետություններում հնարավոր է անկախ թեկնածուների առաջադրումը: Այսպես, Լատվիայում ընտրությունները կազմակերպվում են կուսակցական ցուցակներով: «Եվրոպական խորհրդարանի ընտրությունների մասին» Լատվիայի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն այս պահանջը ձևակերպված է հետևյալ կերպ. «Թեկնածուների ցուցակները կարող են ներկայացվել.

- Լատվիայի Հանրապետությունում գրանցված քաղաքական կազմակերպության կողմից,
- Լատվիայի Հանրապետությունում գրանցված քաղաքական կազմակերպությունների (կուսակցությունների) միավորման կողմից»:

Լեհաստանում կիրառվում է այլ մոդել: Մասնավորապես, «Եվրոպական խորհրդարանի ընտրությունների մասին» 2004 թ. հունվարի 23-ի օրենքի 47-րդ հոդվածի համաձայն ընտրողները և քաղաքական կուսակցություններն իրավունք ունեն ներկայացնել Եվրոպական խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ցուցակներ: Քաղաքական կուսակցությունները Եվրոպական խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ընդհանուր ցուցակներ ներկայացնելու նպատակով կարող են կազմավորել նախընտրական կոալիցիաներ:

Ինչ վերաբերում է անկախ թեկնածուներին, ապա նրանց կողմից պասիվ ընտրական իրավունքի իրականացումը հնարավոր է որոշ անդամ-պետություններում: Այսպես, «Եվրոպական խորհրդարանի ընտրությունների մասին» Իռլանդիայի օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Եվրոպական ընտրություններում յուրաքանչյուր ոք կարող է առաջադրել իր թեկնածությունը կամ իր համաձայնությամբ կարող է առաջադրվել այլ անձի կողմից, որը գրանցված եվրոպական ընտրող է այն ընտրատարածքում, որտեղ առաջադրվում է տվյալ թեկնածուն:

Այսպիսով, թեկնածուների ցուցակները կարող են լինել համազգային կամ տարածքային՝ կախված այն հանգամանքից, թե ինչպիսին է ընտրատարածքների ձևավորման սկզբունքը Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ: Միակ բացառությունը, թերևս, Գերմանիան է, որտեղ կարող են միաժամանակ ներկայացվել համազգային և տարածքային ցուցակներ:

Պատգամավորական տեղերի բաշխման մեթոդիկան նույնպես միասնական չէ անդամ-պետություններում: Կիրառվում են պատգամավորական տեղերի բաշխման տարբեր մեթոդներ, որոնց շարքում առա-

վել տարածված է Դ՝ Օնդոտի⁴ կամ առավել միջինի մեթոդը [5, էջ 402-403]: Եվրոպական խորհրդարանի 2004 թ. ընտրությունների ժամանակ Դ՝ Օնդոտի մեթոդը կիրառվեց Ավստրիայում, Բելգիայում, Դանիայում, Էստոնիայում, Իսպանիայում, Լեհաստանում, Լյուքսեմբուրգում, Յունգարիայում, Նիդերլանդներում, Պորտուգալիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում:

Համեմատաբար սահմանափակ կիրառություն ունի Չեյրի մեթոդը⁵, որը կիրառվում է հիմնականում Գերմանիայում [5, էջ 403]:

Սլովակիայում, օրինակ, կիրառվում է Դրուպի մեթոդը, որի դեպքում քվոտան որոշվում է քվեարկած ձայների ընդհանուր թիվը մանդատների թվից մեկով, երկուսով, երեքով կամ այլ թվով ավել թվի վրա բաժանելու միջոցով, քանի դեռ չի որոշվել այն քվոտան, որը թույլ է տալիս բոլոր մանդատները բաշխել առանց մնացորդի:

Յուրօրինակությամբ աչքի է ընկնում մեկ փոխանցվող ձայնի մեթոդը, որը 2004 թ. ընտրությունների ժամանակ կիրառվեց Իռլանդիայում, Մալթայում և Մեծ Բրիտանիայի ընտրատարածքներից մեկում՝ Յուլսիսային Իռլանդիայում: Այս պետություններում ընտրողը կարող է իր նախապատվությունը տալ ցուցակում ընդգրկված այս կամ այն թեկնածուին կամ թեկնածուներին: Այսպես, Իռլանդիայում թեկնածուների անունները ցուցակներում նշվում են այբբենական հաջորդականությամբ: Յուրաքանչյուր ընտրող իր ձայնը տալիս է թեկնածուներից որևէ մեկի օգտին, բացի այդ, հաջորդաբար նշում է մյուս նախընտրած թեկնածուներին:

Եվրոպական Միության անդամ-պետություններում տարբեր են նաև *ընտրական իրավունքների ծավալը*: Մի շարք անդամ-պետություններում թույլատրվում է քվեարկել միայն ամբողջ ցուցակի կամ ցուցակների հիման վրա: Այս դեպքում ընտրողները չեն կարող ազդեցություն ունենալ ցուցակում թեկնածուների հաջորդականության և նրանցից յուրաքանչյուրի ընտրվելու հավանականության վրա: Այդպիսին է իրավիճակը, օրինակ, Գերմանիայում, Էստոնիայում, Իսպանիայում, Յունաստանում, Յունգարիայում, Պորտուգալիայում և Ֆրանսիայում:

⁴ Դ՝ Օնդոտը բելգիացի մաթեմատիկոս էր, որը 1879 թ. առաջարկեց այդ մեթոդը: Դրա էությունը հանգում է հետևյալին. յուրաքանչյուր կուսակցության ստացած ձայները հաջորդաբար բաժանվում են պրոգրեսիայով աճող բաժանարարների վրա (1, 2, 3, 4 և այլն): Բաժանման արդյունքում ստացված քանորդները դասավորվում են ըստ նվազման կարգի: Այն քանորդը, որի հերթական համարը համապատասխանում է մանդատների ընդհանուր թվին, համարվում է բաժանարար (քվոտա): Յուրաքանչյուր ցուցակ ստանում է այնքան տեղ, որքան անգամ ընդհանուր բաժանարարը տեղավորվում է տվյալ ցուցակին տրված ձայների թվի մեջ:

⁵ Չեյրի կամ բնական քվոտայի մեթոդի էությունն այն է, որ քվոտան որոշվում է քվեարկած ձայների ընդհանուր թիվը պատգամավորական տեղերի թվի վրա բաժանելու միջոցով, իսկ կուսակցությունների միջև մանդատների բաշխումն իրականացվում է նրանց ստացած ձայները քվոտայի վրա բաժանելու միջոցով:

«Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչներ ընտրելու մասին» Ֆրանսիայի Հանրապետության օրենքը 2003 թ. ապրիլի 11-ին ընդունված նոր խմբագրությամբ հետևյալ կերպ է ձևակերպել այդ դրույթը. «Ընտրություններն անց են կացվում համամասնական ներկայացուցչության համակարգով՝ առավել միջինի կանոնի հիման վրա և առանց մշելու նախապատվությունների: Թեկնածուների միջև տեղերը բաշխվում են ըստ կուսակցական ցուցակներում նրանց հաջորդականության» (3-րդ հոդված):

Ընտրական իրավունքների ավելի լայն ծավալ է նախատեսված Ավստրիայի, Դանիայի, Իտալիայի, Լիտվայի, Լյուքսեմբուրգի, Լեհաստանի, Սլովակիայի, Սլովենիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի իրավական ակտերով: Այս անդամ-պետություններում ընտրողը կարող է քվեարկել և ամբողջ ցուցակի, և առանձին թեկնածուների օգտին: Օրինակ, Սլովակիայում և Շվեդիայում ընտրողը, քվեարկելով ցուցակի օգտին, իրավունք ունի մշել նաև իր նախընտրած թեկնածուին: Լյուքսեմբուրգում ընտրողն իրավունք ունի մշել իր նախընտրած վեց թեկնածուների:

Ընտրողների նկատմամբ ներկայացվող պահանջների տեսանկյունից Եվրոպական Միության անդամ-պետությունների իրավունքը հահեմատաբար միատեսակ է: Բոլոր 25 անդամ-պետություններում ակտիվ ընտրական իրավունքով օժտված են 18 տարին լրացած քաղաքացիները: Առանձին պետություններում, սակայն, ակտիվ ընտրական իրավունքի իրականացման պայմաններն ավելի խիստ են: Մասնավորապես, Լեհաստանի օրենսդրությունը, ակտիվ ընտրական իրավունք վերապահելով 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացու, միաժամանակ թվարկում է այն բացառությունները, որոնց դեպքում քաղաքացիները չեն կարող իրականացնել իրենց ակտիվ ընտրական իրավունքը (դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված քաղաքացիները, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ ընտրական իրավունքից զրկված քաղաքացիները, դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված քաղաքացիները):

Ինչպես արդեն նշվել է, Եվրոպական Միության բոլոր 25 անդամ-պետություններում տվյալ պետության տարածքում ակտիվ ընտրական իրավունքից օգտվում են մյուս բոլոր անդամ-պետությունների քաղաքացիները:

Պարտադիր քվեարկություն նախատեսված է միայն որոշ անդամ-պետություններում: Մասնավորապես, Բելգիայի, Նիդերլանդների, Յունաստանի և Կիպրոսի իրավական ակտերի համաձայն ընտրություններին մասնակցելը պարտադիր է: Սակայն այս պետություններում ակտիվ ընտրական իրավունքի պարտադիր իրականացման երաշխավորման հարցը նույնպես միատեսակ չէ: Կիպրոսում, օրինակ, ընտրություններին մասնակցելը պարտադիր է, սակայն չմասնակցելու դեպքում սանկցիաներ նախատեսված չեն: Իսկ Լյուքսեմբուրգում եթե շրջանա-

յին դատախազն ի հայտ է բերում ընտրություններին չմասնակցելու դեպքեր, ապա նա իրավունք ունի բացատրություններ պահանջել համապատասխան քաղաքացիներից: Եթե չմասնակցելը համարվում է չհիմնավորված, ապա քաղաքացիների նկատմամբ կարող են կիրառվել նյութական պատասխանատվության միջոցներ, որոնց չափն ավելանում է իրավախախտման կրկնվելու դեպքում [4, էջ 147]:

Եվրոպական խորհրդարանի ձևավորման կարգը քննարկելիս չի կարելի չանդրադառնալ նաև *պատգամավորության թեկնածուների մերկայացվող պահանջներին*: Բոլոր անդամ-պետությունների ներպետական իրավունքի համաձայն Եվրոպական խորհրդարանի պատգամավոր կարող են ընտրվել ընտրական իրավունք ունեցող բոլոր այն քաղաքացիները, որոնք հասել են օրենքով սահմանված տարիքի: Եվրոպական խորհրդարանի պատգամավորության թեկնածուի համար ներկայումս գործում են հետևյալ տարիքային ցենզերը՝

- 18 տարեկան՝ Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իսպանիա, Լյուքսեմբուրգ, Զուլցարիա, Մալթա, Նիդերլանդներ, Շվեդիա, Չեխիա, Պորտուգալիա, Սլովենիա, Ֆինլանդիա,
- 19 տարեկան՝ Ավստրիա,
- 21 տարեկան՝ Բելգիա, Լեհաստան, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Սլովակիա,
- 23 տարեկան՝ Ֆրանսիա,
- 25 տարեկան՝ Իտալիա, Զուլնաստան, Կիպրոս:

Բացի տարիքային ցենզից, ներպետական իրավական ակտերով սահմանված են պասիվ ընտրական իրավունքի իրականացման այլ պահանջներ ևս: Այսպես, Էստոնիայի օրենսդրության համաձայն Եվրոպական խորհրդարանի պատգամավորության թեկնածուներ կարող են լինել հանրապետության մշտական բնակիչները, որոնք զրկված չեն ընտրական իրավունքից: Չեն կարող առաջադրվել նաև սահմանափակ գործունակ անձինք և իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացիները: Լեհաստանում այդ իրավունքից չեն օգտվում դիտավորյալ հանցագործության համար դատապարտված անձինք և նրանք, ովքեր չեն հանդիսանում Լեհաստանի մշտական բնակիչներ ու նրանց՝ Լեհաստանի կամ Եվրոպական Միության այլ անդամ-պետության քաղաքացիություն ունենալու ժամկետը հինգ տարուց պակաս է:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ պասիվ ընտրական իրավունքի կարգավորման հարցում անդամ-պետությունների իրավական համակարգերն ավելի խայտաբղետ են, քան ընտրական իրավունքի մյուս հարաբերությունների կարգավորման բնագավառում: Ավելի հաճախ պասիվ ընտրական իրավունքը սահմանափակվում է այնպիսի հիմքերով, ինչպիսիք են բնակչության մշտական վայրի բացակայությունը, դատարանի որոշման հիման վրա ազատագրվումը կամ գործունակության սահմանափակումը: Մի շարք պետություններում էլ պասիվ ընտրական իրավունքի սահմանափակման հիմք է հա-

մարվում անվճարունակությունը (Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Իտալիա, Մալթա, Ֆրանսիա): Իսկ Դանիայում չեն կարող առաջադրվել և ընտրվել այն անձինք, ովքեր կորցրել են հասարակության վստահությունը և որոնք Ֆուլկետինգի որոշմամբ ճանաչվել են Եվրոպական խորհրդարանում Դանիան ներկայացնելու համար ոչ արժանավոր քաղաքացիներ:

Անդամ-պետությունների մեծամասնության օրենսդրական ակտերը դրույթներ են պարունակում նաև Եվրոպական խորհրդարանի մանդատների և համապատասխան պաշտոնների անհամատեղելիության վերաբերյալ, բացառությամբ Դանիայի և Շվեդիայի, որտեղ Եվրոպական խորհրդարանի ընտրությունները կարգավորող իրավական ակտերն այդպիսի նորմեր չեն պարունակում: Սովորաբար Եվրոպական խորհրդարանի պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել և ընտրվել պետությունների և կառավարությունների գլուխները, ազգային խորհրդարանների, կառավարությունների և դատական իշխանության բարձրագույն մարմինների անդամները, մունիցիպալ մարմիններում ընտրովի պաշտոն զբաղեցնող քաղաքացիները, ոստիկանության և զինված ուժերի ծառայողները: Առանձին պետություններում, մասնավորապես, Ավստրիայում, Յունաստանում, Իսպանիայում Եվրոպական խորհրդարանի պատգամավոր չեն կարող լինել գործարարական գործունեության որոշակի տեսակներով զբաղվող քաղաքացիները:

Անդամ-պետությունների օրենսդրությունները սահմանում են թեկնածուների առաջադրման տարբեր մոդելներ: Այսպես, Շվեդիայում և Լիտվայում քաղաքական գործունեության ազատության ընդհանուր սկզբունքի հաշվառմամբ նախատեսված է թեկնածուների առաջադրման պարզ ընթացակարգ, որի պայմաններում իրենց ցուցակները ներկայացնելու իրավունքից օգտվում են բոլոր կուսակցությունները, որի համար պահանջվում է միայն լրացնել և ներկայացնել համապատասխան ձևաթուղթը:

Առաջադրման ընթացակարգը համեմատաբար բարդ է Դանիայում, որտեղ առաջադրման իրավունքից անվերապահորեն օգտվում են այն կուսակցությունները, որոնք առնվազն մեկ պատգամավորով ներկայացված են Ֆուլկետինգում կամ Եվրոպական խորհրդարանում: Մյուս կուսակցությունների ցուցակները գրացվում են, եթե նրանք ներկայացնում են վերջին խորհրդարանական ընտրությունների մասնակցած ընտրողների ընդհանուր թվի առնվազն երկու տոկոսի ստորագրությունները: Ընտրողների ստորագրություններ են պահանջվում նաև Յունգարիայում, Իսպանիայում և մի շարք այլ պետություններում: Որոշ պետություններում էլ նախատեսված է ընտրական գրավի ինստիտուտը (Մեծ Բրիտանիա, Յունաստան, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Մալթա և այլն):

Ընտրությունների հետ կապված մյուս հարաբերությունները, ինչպիսիք են, օրինակ, նախընտրական քարոզարշավը, դրա ֆինանսավորումը և այլն, նույնպես միատեսակ կարգավորում չեն ստացել ան-

դամ-պետությունների իրավական ակտերով: Ավելին, որոշ պետություններ՝ Մեծ Բրիտանիան, Կիպրոսը, Յունգարիան, Լատվիան, Շվեդիան ընդհանրապես այս հարցը թողել են իրավական կարգավորման շրջանակներից դուրս: Մնացած պետությունները, որոնք իրավական կարգավորման են ենթարկել ընտրությունների ֆինանսավորումը, պայմանականորեն կարելի բաժանել երեք հիմնական խմբի՝ հիմք ընդունելով ընտրությունների ֆինանսավորման՝ անդամ-պետությունների իրավակարգավորիչ պրակտիկան:

1. Պետություններ, որտեղ իրավական կարգավորման են ենթարկվում միայն այն հարաբերությունները, որոնք առաջանում են պետական բյուջեի միջոցների հաշվին ընտրությունները ֆինանսավորելու կապակցությամբ (օրինակ՝ Սլովակիան):

2. Պետություններ, որոնք սահմանափակվում են միայն մասնավոր միջոցների հաշվին ընտրական գործընթացների ֆինանսավորման իրավական կարգավորմամբ (Դանիա, Էստոնիա և այլն):

3. Պետություններ, որոնք համալիր իրավական կարգավորման են ենթարկում ընտրությունների ֆինանսավորումը (Իռլանդիա, Իսպանիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովենիա, Ֆրանսիա):

Այսպիսով, ընդհանրացնելով Եվրոպական խորհրդարանի ձևավորման կարգը, ուսումնասիրելով և վերլուծելով ընտրությունների կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները կարգավորող ամբողջ իրավական բազան, մենք հանգում ենք հետևյալ եզրակացության՝

1. Եվրոպական խորհրդարանի ձևավորման կարգը սկզբունքորեն համապատասխանում է ներպետական մակարդակում ազգային խորհրդարանների ձևավորման ավանդույթներին: Այլ խոսքերով ասած՝ Եվրոպական խորհրդարանը ձևավորվում է համընդհանուր և ուղղակի ընտրությունների միջոցով՝ գաղտնի ու ազատ քվեարկությամբ: Սրանով ընդգծվում է Եվրոպական խորհրդարանի բացառիկությունը Եվրոպական Միության ինստիտուցիոնալ համակարգում, քանի որ ընտրությունների միջոցով ձևավորվելու փաստի ուժով խորհրդարանը փաստացի միակ ինստիտուտն է, որն իր մանդատը ստանում կամ լեգիտիմացվում է անմիջականորեն Եվրոպական Միության քաղաքացիների կողմից: Սա էապես նպաստում է Եվրոպական Միության հանրային իշխանության համակարգում ժողովրդավարության պակասի լրացմանը և Միության ինստիտուտների ու քաղաքացիների միջև կապի ամրապնդմանը:

2. Եվրոպական խորհրդարանի ընտրությունների իրավական կարգավորման դուալիզմը չի նպաստում ընտրողների հավասար և արդար ներկայացուցչության ապահովմանը, ինչպես նաև վերազգային ընտրական համակարգի կայացմանը: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ ենք համարում ունիֆիկացնել ընտրական հարաբերությունները կարգավորող իրավունքի աղբյուրները: Դա հնարավոր է իրականացնել միայն այս ոլորտում Եվրոպական Միության բացառիկ իրա-

վասությունը սահմանելու միջոցով: Այսինքն, Եվրոպական խորհրդարանի ընտրությունների կարգավորման վերաբերյալ իրավական ակտեր ընդունելու՝ անդամ-պետությունների իրավասությունը պետք է աստիճանաբար սահմանափակվի և արդյունքում բացառվի, որը պետք է փոխարինվի վերազգային ինստիտուտների իրավասությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Շ. Հարությունյան**, Եվրոպական Միություն, Երևան, «Պետական ծառայություն» իրատ., 2005:
2. **В. В. Маклаков**, Европейский Парламент. М., 2001, ст. 10:
3. **Гилберт Горниг, Оксана Витвицкая**. Право Европейского Союза, М., Питер, 2005, ст. 202:
4. **В. И. Лафитский**, Выборы в Европейский Парламент.//Журнал российского права, № 4-2005:
5. Сравнительное конституционное право. Ред. Коллегия: **А. И. Ковлер, В. Е. Чиркин** (отв. ред.), **Ю. А. Юдин**. М., 1996:

ARTYOM GEGHAMYAN

*Post-graduate Student of the Public Administration
Academy of the Republic of Armenia*

LEGAL REGULATION PECULIARITIES OF THE EUROPEAN PARLIAMENT ELECTIONS

The European Parliament is the only EU institution being formed by means of the direct and general elections. Therefore, the European Parliament is fairly considered to be the most democratic institution within the institutional framework of the European Union. Direct elections to the European Parliament were first held in 1979. EU legal acts do not implement the regulation of all relationships in connection with the European Parliament elections. Only basic legal principles are established under the provisions of supranational law. Member states are obliged to follow those basic principles, which establish the requirement of direct elections and the requirement to electoral systems.

The fact that European Parliament elections are regulated both under supranational and domestic law, is not an effective solution. Very often provisions of supranational and domestic law are in contradiction.

The second problem is the low level of turnout during the European Parliament elections. Domestic legislations obligatory provisions support the voters turnout. There are two explanations of low turnout: attitudinal explanations and institutional explanations.

ՄԻՍԱԿ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տնտեսական կարգավորման գործում կենտրոնական բանկի դերը և նրա ինքնուրույնության աստիճանը մեծապես կախված են ազգային ավանդույթներից և բանկային համակարգի յուրահատկություններից:

XX դարի 70-ական թվականների կեսերից մինչև 80-ականների կեսերը՝ տնտեսության մեջ պետության միջամտության մեծացման ժամանակաշրջանում աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում հաստատվել էր կենտրոնական բանկերի հզորության տեսությունը: Որպես դրա արդյունք կենտրոնական բանկերի հեղինակությունը բարձրացել էր, ինչն արտահայտվում էր կարգավորման վարչական մեթոդների ուժեղացմամբ: Այս հիման վրա բարեհաջող զարգանում էր կենտրոնական բանկերի միջև միջազգային համագործակցությունը, հատկապես Եվրոպական արժութային համակարգի շրջանակներում և Եվրոպական կենտրոնական բանկի ստեղծման պլանների մշակման հետ կապված:

Սակայն XX դարի 80-ական թվականների կեսերին արտասահմանյան գիտական շրջանակներում կենտրոնական բանկերի հզորության տեսության կողմնակիցների թիվն էականորեն նվազեց: 80-ականների կեսերին Արևմտյան Եվրոպայում ինչպես արժութային քաղաքականության կանխորոշման, այնպես էլ արժութային շուկայում իրականացվող գործառնությունների նկատմամբ հսկողության ոլորտում նկատվում էր կենտրոնական բանկերի դերի անկում [1, c. 16]:

Ընդհանրապես կարելի է բավականին հստակ զուգահեռներ տանել կենտրոնական բանկի կարգավորման մեխանիզմի բնորոշ գծերի և տնտեսագիտական տեսությունների՝ տվյալ ժամանակաշրջանում իշխող ուղղությունների միջև: Այսպես, քայնականության ուժեղացման ժամանակաշրջանում կենտրոնական բանկերի դիրքերն ամրանում էին՝ լայնորեն կիրառվում էին կարգավորման վարչական մեթոդներ և ընդհակառակը՝ մոնետարիստական տեսությունների ազդեցության մեծացմանը և տնտեսության մեջ պետական միջամտության թուլացմանը զուգընթաց կենտրոնական բանկերն անցնում էին առավելապես տնտեսական կարգավորման շուկայական կառուցակարգերին: Ընդ որում կենտրոնական բանկը դրամավարկային և արժութային քաղաքականության հիմնախնդիրների լուծման հետ կապված իր լիազորու-

յունների մի մասը փոխանցում է ֆինանսների նախարարությանը կամ զանձապետարանին:

Այսպիսով, տնտեսության մեջ կենտրոնական բանկի դերի և կարգավորման մեթոդների փոփոխության կապը իշխող տնտեսագիտական տեսությունների հետ կարելի է դասել օբյեկտիվ փաստարկների շարքին:

Սակայն, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, տնտեսության մեջ կենտրոնական բանկի դերի փոփոխության վրա մեծապես ազդեցություն են թողնում նաև սուբյեկտիվ գործոնները, որոնք հաճախ կապված են բանկի ղեկավարության որակի հետ [2, p. 3]: Օրինակ՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում 70-ական թվականներին կենտրոնական բանկերի հզորության մեծացման փաստը որոշ տնտեսագետներ բացատրում էին նրանով, որ ազգային բանկային համակարգերը ղեկավարում էին հայտնի ֆինանսական գործիչներ, որոնց հեղինակությունը կառավարությունում և միջազգային շրջանակներում բավականին բարձր էր [3, p. 14]: Հենց դրա շնորհիվ էր հնարավոր այդ ժամանակաշրջանում իրականացնել «կոշտ քաղաքականություն», որը հաճախ հակասության մեջ էր մտնում կառավարության այն տնտեսական միջոցների հետ, որոնք վտանգ էին ստեղծում ազգային արժույթի մրցունակության համար:

Այնուամենայնիվ, կենտրոնական բանկերի զարգացման պատմությունը, ինչպես նաև պատմականորեն ձևավորված, նրանց կարգավիճակը բնորոշող և միայն այդ կարգավիճակին հատուկ համապատասխան գործառնությունների, լիազորությունների, խնդիրների և նպատակների առանձնահատկությունների թելադրանքով ստեղծվել և ներկայում կենտրոնական բանկի կարգավիճակի անկյունաքարային գործոններից է հանդիսանում նրա անկախությունը:

Օրենսդրորեն ամրագրված կամ տվյալ երկրի պատմական զարգացման արդյունքում ձևավորված կենտրոնական բանկի անկախությունը թույլ է տալիս նրան ազատ լինել քաղաքական կոնյուկտուրայից և ապահովել ազգային արժույթի կայունությունը՝ ընտրելով դրամավարկային կարգավորման առավել արդյունավետ գործիքներ:

Հետևաբար, կենտրոնական բանկի անկախություն ասելով ընդհանրապես կարելի է հասկանալ նրա քաղաքական ինքնուրույնությունն ու ենթակայության բացակայությունը:

Իհարկե, բանկային համակարգի կառավարման համար անհրաժեշտ է որպեսզի նրա վերին մակարդակում առկա լինի ուժեղ և անկախ կենտրոնական բանկ, և կենտրոնական բանկը իշխանության որևէ ճյուղից կախվածություն ունեցող մարմին դարձնելը դատապարտված է ձախողման և ռազմավարապես սխալ է [4, c. 106]:

Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Ալբերտո Ալեսինան տարբեր երկրների վերաբերյալ առկա նյութերի հիման վրա ընդհանրացրեց կենտրոնական բանկերի անկախության աստիճանի՝ մակրոտնտեսական գործընթացների վրա ազդեցության վերաբերյալ գնահատական-

ները: Խոսքը գնում է կենտրոնական բանկի անկախության և նրա հաջող հակազանաճային քաղաքականության, գործազրկության աստիճանի, տնտեսական աճի տեմպի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապի բացահայտման մասին: Կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ հստակ հարաբերակցություն առկա է միայն կենտրոնական բանկի անկախության մակարդակի և գնաճի միջև: Մյուս ցուցանիշների հետ կապված ուղղակի կախվածություն առկա չէ [5, p. 25]: Այդ են վկայում նաև ավելի վաղ կատարված մի շարք այլ հետազոտություններ:

Կենտրոնական բանկի անկախությանն աջակցող հայեցակարգը գիտական գրականության մեջ լայն տարածում ստացավ բոլորովին վերջերս՝ միայն 80-ական թվականների վերջերին [6, p. 50]: Սովորաբար այդ հայեցակարգի գիտական հիմնավորումը կապում են 1985 թվականին Կ. Ռոգոֆֆի կողմից իրատարակված հետազոտության հետ [7]: Այս ոլորտում Ռոգոֆֆի՝ որպես այդ հայեցակարգի առաջին հեղինակներից մեկի՝ այս ոլորտում առաջնայնության մասին է խոսում այն հանգամանքը, որ բավականին լայն կիրառում էր ստացել «Ռոգոֆֆի հայեցակարգ» եզրույթը՝ որպես «կենտրոնական բանկի անկախության հայեցակարգի» հոմանիշ: Ստեղծվեց և գիտական գրականության մեջ լայն կիրառության մեջ դրվեց նույնիսկ «ռոգոֆֆ-բանկիր» (The Rogoff banker) եզրույթը, որի տակ հասկացվում է կենտրոնական բանկի ուժեղ ղեկավար: Սկսած 90-ական թվականների սկզբից գիտական շրջանակներում ընդունվում էր, որ անկախ կենտրոնական բանկը հանդիսանում է արդյունավետ ուղի դեպի ազգային արժույթի կայուն զնոդունակության և գների կայունության ապահովում: Այս հայեցակարգն իր արտացոլումը գտավ բանկային գործի և ֆինանսների մասին դասագրքերում:

Համաշխարհային գրականության մեջ լայնորեն ընդունվում է, որ կենտրոնական բանկին անկախություն շնորհելը ենթադրում է գնաճի նվազեցում գների կայունության նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների վստահության միջոցով [8, p. 335-359]:

Կենտրոնական բանկի անկախության հայեցակարգը ներկայումս լայն տարածում ունի ոչ միայն գիտական գրականության մեջ, այլև ստացել է իր համակողմանի իրավական կարգավորումը բազմաթիվ երկրների բանկային օրենսդրության մեջ և դարձել է հիմնարար և ելակետային դրույթ: Օրինակ.

1. «Սլովենիայի բանկի մասին» ակտի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Սլովենիայի բանկը և նրա կառավարման մարմինների անդամներն անկախ են և սույն ակտով սահմանված խնդիրներն իրականացնելիս չեն կարող կաշկանդված լինել պետական կամ այլ մարմինների որևէ որոշմամբ, տեսակետներով, հանձնարարականներով [9, p. 11]»:

2. «Սերբիայի ազգային բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված խնդիրներն իրականացնելիս Սերբիայի ազգային բանկն ինքնավար ու անկախ է և

իր գործողությունների համար հաշվետու է Սերբիայի Հանրապետության Ազգային ժողովին [10, p. 1]»:

3. «Պորտուգալիայի բանկի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Պորտուգալիայի բանկը հանրային իրավաբանական անձ է վարչական և ֆինանսական ինքնավարությամբ ու անձնական սեփականությամբ [11, p. 5]»:

4. «Ֆինլանդիայի բանկի մասին» ակտի 1-ին հոդվածի համաձայն՝ Ֆինլանդիայի բանկը հանրային իրավունքով ղեկավարվող անկախ ինստիտուտ է [12, p. 12]:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից»:

Այդպիսի երկրների օրենքները, նախապես հռչակելով կենտրոնական բանկի անկախության սկզբունքը, այնուհետև սահմանում են համապատասխան կառուցակարգեր, որոնք նպատակ ունեն ապահովել այդ անկախությունը:

Կենտրոնական բանկի մասին այս կամ այն երկրի օրենսդրական ակտերը՝ որպես կանոն, ամբողջովին չեն արտացոլում նրա անկախության աստիճանը: Սակայն օրենքը տալիս է կենտրոնական բանկի գործունեության հիմնական ինստիտուցիոնալ բնութագրիչները, այդ թվում՝ բանկի և նրա կառավարման մարմինների նպատակները, խնդիրները, գործառույթները, հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը: Միևնույն ժամանակ կենտրոնական բանկի և պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունների, ինչպես նաև նրանց գործունեության կոորդինացման հիմնախնդիրները սովորաբար կենտրոնական բանկի մասին օրենսդրությամբ չեն կարգավորվում:

Կենտրոնական բանկի իրավաբանական անկախությունը ինքնուրույն դրամավարկային քաղաքականության մշակման համար անհրաժեշտ պայման է, սակայն դրա արդյունավետությունը որոշվում է դրամավարկային և ընդհանուր տնտեսական քաղաքականության կոորդինացման աստիճանով: Կենտրոնական բանկի իրավաբանական անկախությունը պետք է ապահովված լինի նրա ֆինանսական անկախությամբ:

Իրավաբանորեն կենտրոնական բանկի առջև դրված նրա գործունեության հիմնական նպատակի ազգային արժույթի կայունության ապահովման իրագործումը ենթադրում է առաջին հերթին գործադիր իշխանության մարմիններից նրա անկախության որոշակի աստիճանի առկայություն: Որպեսզի գնահատենք, թե որքանով է այս կամ այն կենտրոնական բանկն անկախ իր գործունեության ընթացքում, անհրաժեշտ է բնորոշել անկախության հասկացությունը և բացահայտել դրա չափանիշները:

Արտասահմանյան գրականության մեջ գոյություն ունեն կենտրոնական բանկի անկախության որոշման մի քանի տարբերակներ: Հիմնականում տարբերում են կենտրոնական բանկի քաղաքական և տնտեսական անկախությունը:

Կենտրոնական բանկի քաղաքական անկախության աստիճանը որոշվում է անհրաժեշտ դրամավարկային քաղաքականության ընտրության և իրականացման ընթացքում պետական կառավարման մարմինների հետ հարաբերություններում նրա շատ կամ քիչ ինքնուրույնությամբ:

Տնտեսական անկախությունը դրամավարկային քաղաքականության գործիքների ընտրության հարցում կենտրոնական բանկի ինքնուրույնությունն է և դրա իրականացման համար անհրաժեշտ սեփական նյութական միջոցների առկայությունը:

Տնտեսապես զարգացած երկրների կենտրոնական բանկերի անկախության գնահատման բազմաթիվ գործոնների միջից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Կենտրոնական բանկի կապիտալում և նրա շահույթի բաշխման գործում պետության մասնակցությունը,

2. Բանկի ղեկավարության նշանակման կամ ընտրության ընթացակարգը,

3. Կենտրոնական բանկի նպատակների և խնդիրների՝ օրենսդրորեն արտացոլված լինելու աստիճանը,

4. Դրամավարկային քաղաքականությանը միջամտելու պետության իրավունքները,

5. Կենտրոնական բանկի կողմից պետության ծախսերը ֆինանսավորելու հնարավորությունը կարգավորող կանոնները:

Ընդհանրապես կարելի է առանձնացնել հետևյալ տարրերը, որոնք միասին կազմում են «կենտրոնական բանկի անկախություն» հասկացությունը.

- ինստիտուցիոնալ անկախություն,
- գործառույթային անկախություն,
- գործիքային անկախություն,
- գույքային անկախություն,
- բյուջետային անկախություն,
- ֆինանսական անկախություն,
- կադրային անկախություն [4, c. 109]:

Ինստիտուցիոնալ անկախությունը որոշվում է պետական իշխանության մարմինների համակարգում կենտրոնական բանկի զբաղեցրած դիրքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե կենտրոնական բանկը ներգրավված է պետության իշխանությունների տարանջատման համակարգում, թե՛ ոչ:

Այս առումով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ՀՀ կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի

միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Կենտրոնական բանկը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներին համապատասխան:

Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից:

Կենտրոնական բանկը և կառավարությունը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, եթե այդպիսիք չեն ստանձնել (1-ին հոդված):

Նշենք, որ ՀՀ կենտրոնական բանկի կարգավիճակը սահմանող իրավական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր գործառույթներով և իրավասությունների շրջանակով տարբերվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրորեն տարանջատված պետական իշխանության երեք ճյուղերից: Բայց այնուամենայնիվ սահմանադրությամբ հստակեցված չէ նրա դիրքը իշխանությունների տարանջատման համակարգում:

Մյուս կողմից ինստիտուցիոնալ անկախության կազմի մեջ են մտնում և Կենտրոնական բանկի կողմից գների կայունության ապահովման հնարավորությունը որոշող կարևոր գործոններ են հանդիսանում իշխանության պետական մարմինների հետ հաստատված փոխհարաբերությունները: Կենտրոնական բանկի և պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների միջև անընդհատ շփումները բարձրացնում են վերջիններիս՝ կենտրոնական բանկի գործողությունների նկատմամբ վստահության աստիճանը և օգնում նրան հասնելու իր գլխավոր նպատակին՝ գների կայունության ապահովմանը: Օրինակ՝ տվյալ խնդրի լուծմանը կարող է օժանդակել իր գործունեության վերաբերյալ կենտրոնական բանկի կողմից խորհրդարանին պարբերաբար ներկայացվող հաշվետվությունը [13, c. 12]:

Այս առումով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է.

ա) իր խնդիրներն իրականացնելիս Կենտրոնական բանկը համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ:

Կենտրոնական բանկի նախագահը կամ նրա տեղակալը պարբերաբար պարզաբանումներ կամ բացատրություններ են տալիս Ազգային ժողովին և նրա հանձնաժողովներին՝ Կենտրոնական բանկի քաղաքականության մասին:

Կենտրոնական բանկը մասնակցում է կառավարության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև աջակցում է դրանց իրականացմանը, եթե դա չի հակասում Կենտրոնական բանկի խնդիրներին: Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ընթացքում Կենտրոնական բանկը խորհրդակցում է կառավարության հետ: Կենտրոնական բանկի նախագահը կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել կառավարության բաց նիստերին և գրավոր կարծիք ներկայացնել քննարկվող հարցերի վերաբեր-

յալ: Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչը կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Կենտրոնական բանկի խորհրդի բաց նիստերին և գրավոր կարծիք ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ (7-րդ հոդված): Ընդ որում կառավարության լիազոր ներկայացուցիչը կարող է պահանջել Կենտրոնական բանկի խորհրդի նիստի արձանագրության մեջ իր կարծիքի մանրամասն արտացոլում (21-րդ հոդված):

բ) Կենտրոնական բանկը, մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամկետում հրապարակում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված՝ նախորդ ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը:

Կենտրոնական բանկը պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ հրապարակում է Կենտրոնական բանկի նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվեկշիռը և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված իր խնդիրների իրագործմանը վերաբերող այլ տեղեկատվություն (17-րդ հոդված):

Գործառուրթային անկախությունը նշանակում է որոշումների ընդունման ազատության այն աստիճանը, որի պայմաններում կենտրոնական բանկը կարող է իր դրամավարկային քաղաքականությունն ուղղել օրենքով սահմանված նպատակներին:

Գործիքային անկախությունը նշանակում է դրամավարկային քաղաքականության գործիքների օգտագործման գործում կենտրոնական բանկի ինքնուրույնության աստիճանը:

Թե՛ գործառուրթային և թե՛ գործիքային անկախության տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ կենտրոնական բանկը որոշումների ընդունման հարցում կաշկանդված չէ պետական այլ մարմինների պահանջներով: Սակայն վերը հիշատակված որոշ դրույթներ (օրինակ՝ «Կենտրոնական բանկի նախագահը կամ նրա տեղակալը պարբերաբար պարզաբանումներ կամ բացատրություններ են տալիս Ազգային ժողովին և նրա հանձնաժողովներին՝ Կենտրոնական բանկի քաղաքականության մասին» կամ «Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ընթացքում Կենտրոնական բանկը խորհրդակցում է կառավարության հետ» և այլն) առաջնորդվում են ընդամենը կենտրոնական բանկի և մյուս պետական մարմինների գործողությունները համակարգելու նպատակով և որևէ կերպ չեն կարող սահմանափակել կենտրոնական բանկի կողմից որոշումների ընդունման ազատության շրջանակները:

Գույքային անկախությունը նշանակում է իրեն պատկանող գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման ընթացքում կենտրոնական բանկի ինքնուրույնության աստիճանը:

Այս առումով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելու նպատակով կարող է իր անունից՝

- կնքել պայմանագրեր, ձեռք բերել իրավունքներ, ստանձնել պարտավորություններ, այդ թվում՝ վերցնել վարկեր,
- հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող,
- սույն օրենքով նախատեսված դեպքերում ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ (1-ին հոդված):

Այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկը՝ որպես իրավաբանական անձ, ի տարբերություն ՀՀ պետական այլ մարմինների, ներկայումս հանդիսանում է քաղաքացիական իրավունքի լիարժեք սուբյեկտ, և նրա կողմից քաղաքացիական իրավունքներ կամ պարտականություններ ձեռք բերելիս կամ փոխանցելիս գործում է ինքնուրույն, և դրա համար անհրաժեշտ չէ այլ պետական մարմնի թույլտվություն:

Բյուջետային անկախությունն իր հերթին կարող է քննարկվել հետևյալ 3 տեսանկյունից.

- այն արտահայտվում է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հետ կապված կառավարության պահանջումներին բավարարման հարկադրանքին դիմակայելու՝ կենտրոնական բանկի ռեալ ունակության մեջ.
- որոշվում է կենտրոնական բանկի շահույթից պետական բյուջե փոխանցվող բաժնի չափը և դրա փոխանցման կարգը.
- բնորոշվում է կենտրոնական բանկի կապիտալում պետության մասնակցության չափով:

Այս առումով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է.

ա) կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ այլ պետական մարմիններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարկավորելը կամ այլ կերպ ֆինանսավորելն արգելվում է՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի (34-րդ հոդված): Նշենք, որ հստակ չէ, թե որոնք են օրենքով բացառություն արված վերը նշված դեպքերը: Այդ պատճառով տարակարծություններից խուսափելու նպատակով մեր կարծիքով անհրաժեշտ է օրենքով հստակ թվարկել այն դեպքերը, որոնք դիտվում են որպես ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը կամ պետական մարմիններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարկավորելու կամ այլ կերպ ֆինանսավորելու արգելքից արված բացառություններ:

Մեր կարծիքով նման բացառությունների շարքին պետք է դասել օրինակ.

- օրենքի 12-րդ հոդվածը, որի համաձայն օրենքով սահմանված մասհանումները կատարելուց հետո ֆինանսական տարվա արդյունքում ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե (12-րդ հոդված),

- օրենքի 10-րդ հոդվածը, որը Կենտրոնական բանկին հնարավորություն է տալիս երկրորդային շուկայում ձեռք բերել պետական արժեթղթեր, և այլն:

բ) Կենտրոնական բանկի շահույթը հաշվարկվում է որպես տվյալ ֆինանսական տարվա ընթացքում ստացված բոլոր եկամուտների և կատարված բոլոր ծախսերի տարբերություն, և օրենքով սահմանված մասհանումները կատարելուց հետո ֆինանսական տարվա արդյունքում ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե (12-րդ հոդված):

գ) Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց (11-րդ հոդված):

Ֆինանսական անկախությունն արտացոլում է իր սեփական ներքին բյուջեի որոշման գործում կենտրոնական բանկի ինքնուրույնության աստիճանը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական անկախության ամրագրումը ՀՀ օրենսդրությամբ ամենախստակն է և տարատեսակ մեկնաբանությունների տեղիք չի կարող տալ: Մասնավորապես՝ Կենտրոնական բանկն իր եկամուտները պլանավորում է ինքնուրույն: Կենտրոնական բանկի եկամուտները ենթակա չեն հաստատման Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, ասվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում:

Կադրային անկախությունը նախ և առաջ բնորոշվում է կենտրոնական բանկի կադրերի ընտրության և նշանակման, նրանց պաշտոնավարման ժամկետի առանձնահատկություններով, ինչպես նաև կենտրոնական բանկի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հնարավորությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի ղեկավարների նշանակման և պաշտոնավարման ժամկետի տեսանկյունից օրենսդրորեն սահմանված է, որ Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ ՀՀ նախագահի առաջարկությամբ՝ յոթ տարի ժամկետով (18-րդ հոդված), իսկ Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին նշանակում է ՀՀ նախագահը՝ հինգ տարի ժամկետով (19-րդ հոդված):

Ազգային ժողովը ՀՀ նախագահի առաջարկությամբ պաշտոնից ազատում է Կենտրոնական բանկի նախագահին, նրա տեղակալին, իսկ ՀՀ նախագահը՝ խորհրդի մյուս անդամներին, եթե նրանք՝

- ա) դադարել են Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինել,
- բ) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար,

գ) թերացել են պաշտոնեական պարտականությունները կատարելիս,

դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել են կամ զրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից,

ե) հիվանդության կամ այլ պատճառով վեց ամսից ավելի չեն կատարել իրենց պաշտոնեական պարտականությունները,

զ) մեկ տարվա ընթացքում ավելի քան հինգ անգամ անհարգելի բացակայել են խորհրդի նիստերից (22-րդ հոդված):

Եթե վերը նշված հիմքերը մեծամասամբ հանդիսանում են օբյեկտիվ, ապա նույնը չի կարելի ասել պաշտոնեական պարտականությունները կատարելիս թերացման հիմքի մասին: Այդ առումով կարծում ենք, որ ճիշտ կլիներ պաշտոնից ազատելու այս հիմքի համար պահանջվեր հենց Կենտրոնական բանկի խորհրդի՝ որպես Կենտրոնական բանկի նախագահի, տեղակալի, խորհրդի մյուս անդամների կողմից իրենց լիազորությունների կատարման ամենօրյա ականատեսի նախաձեռնությունը (եզրակացությունը, առաջարկությունը):

Նշենք, որ նման փորձ առկա է նաև միջազգային պրակտիկայում: Օրինակ՝ «Իսպանիայի բանկի ինքնավարության մասին» օրենքի 3-րդ գլխում սահմանված այլ իրավասությունների հետ մեկտեղ սահմանվում է, որ Իսպանիայի բանկի կառավարման խորհուրդը կառավարությանը ներկայացնում է առաջարկություններ խորհրդի անդամի պաշտոնանկության վերաբերյալ (separation proposals):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ գիտական գրականության մեջ առկա են նաև «կենտրոնական բանկի անկախություն» հասկացությունը բնութագրող տարրերի դասակարգման այլ տեսակներ: Օրինակ՝ հակառակ վերը նշված բաժանման, գերմանացի հետազոտողներն առանձնացնում են «կենտրոնական բանկի անկախություն» հասկացության միայն երեք բաղադրատարրեր.

- գործառույթային (ինստիտուցիոնալ) անկախություն,
- տնտեսական (գործիքային) անկախություն,
- կադրային անկախություն [14, c. 198]:

ՀՀ կենտրոնական բանկի կարգավիճակի և նրա անկախության երաշխիքների՝ վերը նշված առանձնահատկությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի գործունեության պրակտիկան հիմք են տալիս ենթադրելու, որ սխալ է սահմանափակվել պետական իշխանության եռանդամ կառուցվածքով: Հակառակ դեպքում ստացվում է, որ առկա է մի կառույց, որը միանշանակ իրականացնում է պետական գործառույթներ, օժտված է պետաիշխանական լիազորություններով, և չի մտնում պետական իշխանության երեք թևերից որևէ մեկի մեջ:

Այս առումով անհրաժեշտ է հիշատակել, որ պետական իշխանության տարանջատման սկզբունքը ձևավորվել է XVIII դարում: Այդ ժամանակներից պետության գործառույթները բազմաթիվ անգամներ փոփոխվել են և էական չափով բարդացել են, որի հետևանքով հնարավոր է դրանք տեղավորել պետական իշխանության եռանդամ կառուցված-

քում: Այդ պատճառով կարծում ենք, որ սահմանադրորեն հստակ սահմանվող իշխանության թերի թվարկը հասարակության զարգացման արդի փուլում իրեն այլևս չի արդարացնում, և անհրաժեշտ է արդեն մտածել պետական կառուցակարգերի էվոլյուցիոն զարգացման արդյունքում ձևավորված իշխանության նոր թերի ամրագրման և արդյունավետ գործունեության համար սահմանադրորեն ամրագրված հիմքերի ստեղծման մասին:

Հետևաբար, հաշվի առնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի գործողության արդյունքում ձևավորված ՀՀ կենտրոնական բանկի փաստացի կարգավիճակը, կարծում ենք, որ անհրաժեշտ է սահմանադրորեն հստակեցնել կենտրոնական բանկի տեղը իշխանությունների տարանջատման համակարգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Шенаев В., Наумченко О.**, Центральный банк в процессе экономического регулирования. Зарубежный опыт и возможности его использования в России. М., 1994.
2. Central Bank Independence & Macroeconomic Performance: Some Comparative Evidence, Harvard University, CERP & NBER. 1991.
3. **Downes Patric, Vaez-Zaden Resa**, The Evolving Role of Central Banks, Central Banks Department IMF, 1990.
4. **Тосунян Г., Викулин А.**, Деньги и власть, М., 2000.
5. Central Bank Independence & Macroeconomic Performance: Some Comparative Evidence Harvard University, CERP & NBER. 1991.
6. **Forder J.**, Central Bank Independence-conceptual clarifications & interim assessment.// Oxford Economic papers. NS. Oxford. 1998 Vol. 50. N. 3.
7. **Rogoff K.**, Central Bank Independence & Macroeconomic Performance: Some Comparative Evidence Harvard University, CERP & NBER. 1991
8. **Posen A.**, Central Bank Independence and disinflationary credibility: a missing link? // Oxford economic Papers. NS. Oxford. 1998. Vol. 50. N. 3.
9. Bank of Slovenia Act /Official Gazette of the Republic of Slovenia No. 58/02/
10. Law on the National Bank of Serbia /RS Official Gazzete, No. 72/2003, 55, 2004.
11. Organic Law on Banco de Portugal /approved by Law No. 5/98 of 31 January 1998.
12. Act on the Bank of Finland /issued in Halsinki on 27 March 1998, No. 214, 1998.
13. **Поляков В., Московкина Л.**, Структура и функции Центральных банков. Зарубежный опыт. Учебное пособие. М., 1996.
14. Немецкий Федеральный банк. Денежная политика Федерального банка, с. 198:

MISAK BABAJANYAN

*Post-graduate Student of the Public Administration
Academy of the Republic of Armenia*

**THE CONCEPT OF THE CENTRAL BANK'S INDEPENDENCE AND
THE PECULIARITY OF ITS LEGAL FORMULATION IN THE
REPUBLIC OF ARMENIA**

The research paper touches the problem of the development of the Central Bank's independence concept in its historical retrospective and the problems of its being fixed in the legislation of RA.

In particular the research paper is formulated on the supposition that the concept of neutral Bank's independence necessarily implies institutional, functional, instrumental, financial, budgetary independence as well as independence as to human resources. Starting from this point the Law on The Central bank of RA is analyzed as the main act which shapes the legal foundations of the Central bank of RA's independence. Then a comparison is made between the law and the current challenges of Central Bank's independence concept.

ՏՆՈՒՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (Կառավարում)

ԱՐԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության Նախագահի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ,
տնտեսագիտության թեկնածու*

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԱՐԱԴԻԳՄԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Լինելով մտածող էակ՝ մարդը ձգտում է ճանաչել իր միջավայրը, հետազոտել հասարակությունը, ձևակերպել օրենքներ և օրինաչափություններ, որոնցով առաջնորդվում է հանրությունը և որոնք գործելու են նաև իր համար, ցանկանում է յուրացնել ու ներառել այն ամենը, ինչը բացահայտվել, ընդունվել, պահպանվել է իր նախնիների կողմից: Իր և միջավայրի էության հետազոտման այդ գործընթացը համահունչ է մարդու էությանը, պայմանավորված է գիտակից և մտածող էակ լինելու իրողությամբ: Դրա արդյունքները ծառայում են մարդու և հասարակության զարգացմանը, ուստի այն շարունակվելու և խորանալու է մշտապես՝ քանի դեռ գոյատևում ու զարգանում է մարդկությունը:

Որպես մարդու և իր միջավայրի զարգացմանն ուղղված ակտիվ գործունեություն՝ հետազոտությունը հանդիսանում է մարդկային գործունեության մշտատև, լայն ընդգրկում և իր արդյունքների մշանակությամբ կարևորություն ունեցող տեսակ և ոլորտ: Այն կարող է.

ա/ էականորեն նպաստել նոր գիտելիքների ստեղծմանը և տարածմանը (փոխանցմանը),

բ/ օգնել անհատին՝ սովորելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու, իր աշխատանքում դրանք կիրառելու,

գ/ դրական ազդեցություն ունենալ մարդկային ներուժի և կապիտալի ձևավորման ու աճի, անհատի մասնագիտական որակավորման բարձրացմանը,

դ/ հասարակության սուբյեկտների մոտ հիմք հանդիսանալ իրենց կյանքի և գործունեության ընթացքում առաջացող խնդիրների լուծման ճիշտ և հիմնավորված վճիռներ ընդունելու համար,

ե/ այդ բոլորի արդյունքում՝ հանգեցնել անհատի և խմբերի աշխատանքի արտադրողականության և գործունեության արդյունավետության բարձրացման:

Հետազոտությունների կարևորությունն առավել ցայտուն արտահայտված է գիտության և կառավարման բնագավառներում: Առաջինում այն ծառայում է նոր գիտելիքների ձեռքբերմանը, երկրի գիտատեխնոլոգիական առաջընթացին, իսկ երկրորդում՝ դառնում է հիմք գիտագործնական պահանջվող հիմնավորվածություն և բարձր արդյունավետություն ունեցող կառավարչական վճիռներ ընդունելու համար, քանի որ հետազոտությունների միջոցով են, որպես կանոն, ձևավորվում այդ վճիռների հիմնարար ծրագրերը: Եվ քանի որ գիտությունն ու կառավարումը գործունեության ցանկացած ոլորտի անհրաժեշտ և անբաժանելի տարրերն են, ապա դրանցում կատարված հետազոտությունների արդյունքները վերջին հաշվով օգտագործվում են տնտեսության ճյուղերում և իրենց դրական ազդեցությունն են ունենում դրանց գործունեության արդյունավետության վրա:

Հասկանալի է, որ հասարակությունը չի կարող անտարբեր գտնվել իր զարգացման համար այդպիսի օգտակար արդյունքներ ապահովող գործունեության ոլորտի հանդեպ, ինչպիսին հետազոտություններն են: Առավել ևս, եթե նկատի ունենալ, որ դրանց իրականացումը, որպես մարդկային գիտակցված գործունեություն, կապված է համապատասխան գիտական, կադրային, ֆինանսական, կազմակերպական, բովանդակային, տեխնիկական, տեխնոլոգիական, գործառույթային, տեղեկատվական և այլ բնույթի տարբեր մոտեցումների և ռեսուրսային ապահովումների կիրառության հետ, ուստի, կարիք ունի նաև դրանց մշակմանն ու ապահովմանն ուղղված ջանքերի: Առանց վերջինների իրողության հազիվ թե հնարավոր լինի ապահովել հետազոտությունների բարձր արդյունավետություն: Հետևաբար, պետք է ենթադրել, որ հետազոտությունների ոլորտի խնդիրների լուծումը կառավարող մարմինների գործառույթներում առաջնայնությունների ցանկում է գտնվելու, իսկ ոլորտը զարգացման մշտական միտում է ունենալու: Ինչ խոսք, դա կպահանջի համապատասխան ուշադրություն և միջոցների հատկացում: Գիշտ է, տնտեսության ներկա վիճակը հնարավորություն չի տալիս կառավարությանն իրականացնել նշված ջանքերը, դրանք համապատասխանեցնել հետազոտությունների ոլորտի կարևորությանը: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ այդ պատճառով չստացվող հնարավոր արդյունքները զգալի չափով գերազանցում են դրանց ապահովումը պայմանավորող ծախսերին, ինչն այդպիսի քաղաքականությանը պայմանավորված կորուստի չափն է ցույց տալիս: Ցավոք, այն քանակապես գնահատել դեռ չի հաջողվում, ինչը թույլ չի տալիս հավաստի ձևով որոշել նաև այդ քաղաքականության արդյունավետությունը:

Լինելով մտածող էակ՝ մարդը հետազոտության գործընթացն իրականացնում է գիտակցված՝ օգտագործելով կուտակած գիտելիքը և ձգտելով ստեղծել նորը: Իր հետազոտության հիմքում ամրագրվում են որոշակի սկզբունքներ. դրանք ձևակերպելով կան ընտրելով այնպես, որպեսզի դրանց օգտագործումը նպաստի հետազոտվող օբյեկտի վե-

րաբերյալ սպասվող նոր գիտելիքը ստանալուն: Այստեղից կարևորվում է այն հիմնարար սկզբունքների միանշանակ ձևակերպումն ու համակարգումը, որոնց կիրառությունն առավել չափով կնպաստի ցանկացած հետազոտության արդյունավետ իրականացմանը:

Այս նպատակով ներկայացնում ենք տնտեսագիտական հետազոտությունների համար հետաքրքրություն և օգտակարություն ունեցող և մեր կողմից ձևավորված հիմնարար սկզբունքների համակարգված ցանկի տարբերակ:

Այն նախատեսվում է *ծրագրային հետազոտություններում* օգտագործելու համար (տարաբնույթ ծրագրերի, ծրագրային միջոցառումների, կառավարչական կամ օրենսդրաիրավական որոշումների հիմնավորումների մշակման գործողությունների համալիր)՝ անհրաժեշտության դեպքում ներառելով նաև արդյունքների կիրառմանն առնչվող խնդիրների լուծման աշխատանքները: Նկատի ունենալով այս ուղղվածությունը, յուրաքանչյուր դեպքի համար այդպիսի հետազոտությունները, ներառած նաև իրենց կիրառելի արդյունքները, աշխատանքում անվանվել են նաև *ծրագրային ապահովում*:

Չնայած առաջարկվող ցանկը, ինչպես նշեցինք, նախատեսվում է օգտագործել ծրագրային ապահովումներ մշակելիս, սակայն նկատի ունենալով դրանում բերված սկզբունքների ընդհանրական բնույթը, կարծում ենք, այն օգտակար կիրառություն կարող է ունենալ նաև այլ ուղղվածությամբ կամ ոլորտներում իրականացվող հետազոտություններում: Նշենք, որ այդ ցանկը ցույց է տալիս նաև սույն հոդվածում փաստացի օգտագործված սկզբունքների կազմը, դրանով իսկ բավարար պատկերացում տալով ստացված արդյունքների հիմնավորվածության մասին նաև այդ տեսանկյունից:

Նախքան սկզբունքների ցանկի ներկայացումը, բերենք այն ձևավորելու հիմքում դրված որոշ դրույթներ, որոնք կարծում ենք, ավելի ընկալելի կդարձնեն ցանկը և դրա կառուցվածքը:

1. Թյուրըմբռնումից խուսափելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է նախապես միանշանակ ձևակերպել, թե ինչ բովանդակություն է այստեղ վերագրվում *«հետազոտություն»* հասկացությանը: Գիտական գրականությունում այն ընդհանուր առմամբ բացատրվում է որպես ուսումնասիրություն, վերլուծություն, զննում կամ գիտական գործունեություն՝ իմաստային որոշակիացում և մանրամասնեցում՝ կատարելով հետազոտության օբյեկտի կամ խնդրի էության և առանձնահատկությունների առումով [1, 331 c.], [2, 300 c.], [3, 432 c.], [4, 196 c.], [5, 618 c.], [6, էջ 586]:

Հոդվածում *«հետազոտություն»* տերմին–հասկացությունը ընկալվում և բացատրվում է ավելի լայն՝ որպես մարդկային գործունեության ուրույն ոլորտ: Այն իրականացվում է հասարակության ու տնտեսության ցանկացած մակարդակում, գործունեության ամեն մի ոլորտում և ճյուղում, տարատեսակվում է դրանցում հետազոտության առարկա հանդիսացող օբյեկտների ու խնդիրների բնութագրերին և առանձնա-

հատկություններին համապատասխան: Ձևակերպված սահմանումից արդեն իսկ երևում է գործունեության այդ ձևի բազմաբնույթ էությունն ու տեսակների մեծ բազմությունը, ինչը պահանջում է նաև դրանցով զբաղվող սուբյեկտների մասնագիտացում և համապատասխան ուսուցում: Ընդ որում, որոշակի հետազոտություններով, կախված դրանց ընդգրկումից և մասշտաբից, կարող են զբաղվել անհատ մասնագետներ և գործարարներ, դրանց խմբեր, ինչպես նաև մասնագիտացված բաժիններ, լաբորատորիաներ, խորհրդատվական կազմակերպություններ, գիտահետազոտական ինստիտուտներ:

Ըստ նպատակի և ուղղվածության՝ կարելի է առանձնացնել հետազոտության տարբեր տեսակներ: Թվարկենք մի քանիսը՝ տեսամեթոդաբանական, գործնական, գիտագործնական, ճանաչողական, նկարագրային, գնահատումային, ստուգման-հսկողական, վերլուծական, տեխնոլոգիական, կանխատեսումային, փորձաքննական, ընդունված վճիռների հիմք ստեղծելու, լուծումներ գտնելու կամ ընդունված (թեկուզ ինտուիտիվ) վճիռը հիմնավորելու և այլն:

Յուրաքանչյուր տեսակն իր հերթին կարելի է տարատեսակել ըստ հետազոտությունը բնութագրող այլ հատկանիշների, օրինակ՝ ըստ իրականացնող սուբյեկտի, առևտրայնացման աստիճանի, ժամանակի տևողության, տարբեր ռեսուրսների նկատմամբ պահանջի և դրանց առկայության, տեղեկատվական ապահովման և այլն: Նկատի ունենանք, որ հնարավոր են նաև համալիր՝ միաժամանակ տարբեր ուղղվածությամբ հետազոտություններ ներառող տեսակներ:

Այս ամենն, ինչպես արդեն նշել ենք, ցույց են տալիս հետազոտությունների կիրառման լայն դաշտը, հետևաբար և դրանց բարձրորակ իրականացման կարևորությունը տնտեսության զարգացման համար: Սույն աշխատանքում դիտարկվում են կառավարման ծրագրային ապահովման նպատակով իրականացվող հետազոտությունները: Եթե նկատի ունենանք, որ կառավարումը համընդհանուր գործունեություն է, ընդգրկում է տնտեսության բնագավառներն ու հատվածները, դրանցում իրականացվող գործառույթները, առկա ցանկացած ուղղվածության խնդիրները, ապա հասկանալի է դառնում այս բնագավառի հետազոտության լայն ընդգրկումն ու դժվարությունները: Օրինակ՝ կառավարման բնագավառում առկա որևէ հիմնախնդրի հետազոտությունում ընդհանուր դեպքում ներառվում են հետևյալ աշխատանքները [7, 178 ձ.].

- հիմնախնդրի բացահայտում, ճանաչում և իրավիճակի գնահատում,
- հիմնախնդրի առաջացման, բովանդակության, բնութագրերի գործողության և զարգացման օրինաչափությունների որոշում,
- գիտելիքների կուտակման համակարգում տվյալ հիմնախնդրի և դրա իրավիճակի դիրքի սահմանում,
- հիմնախնդրի վերաբերյալ նոր գիտելիքների բացահայտում և լուծման համար դրանք օգտագործելու նոր ուղիների, միջոցների և հնարավորությունների մշակում,

- հիմնախնդրի լուծման տարբերակների մշակում, դժվարությունների, սահմանափակումների, թերությունների և այլ խոչընդոտների չեզոքացում,
- հիմնախնդրի լուծման լավագույն տարբերակի ընտրություն օպտիմալությամբ, արդյունավետության չափանիշների հիման վրա:

Այս թվարկումից արդեն կարելի է եզրակացնել, որ կառավարման ծրագրային ապահովման հետազոտությունների սկզբունքների ստորև ներկայացվող ցանկն իսկապես կունենա կիրառման ավելի լայն դաշտ:

2. Պարզորոշման և միանշանակ բացատրության կարիք ունի նաև այն հարցը, թե ինչ բովանդակությամբ է այստեղ օգտագործվում «սկզբունք» տերմին-հասկացությունը: Այն անգլերեն *principle* [8, 254 c.] բառի (ռուսերեն որսուստ [5, 543 c.]) հայերեն հոմանիշն է [9, էջ 285], [6, էջ 380]: Սկիզբ է առել լատիներեն *principium* բառից, նշում է որևէ գիտության, ուսմունքի, տեսության, ինչպես նաև մտածելակերպի և գործելակերպի սկզբնարար կամ հիմնարար դրույթը կամ հիմնական կանոնը [10, 520 c.]: Այս բովանդակությունը համարյա բոլոր բացատրական բառարաններում վերագրվում է «սկզբունք» հասկացությանը և այս բացատրությամբ էլ այն օգտագործվում է տնտեսագիտական գրականությունում [11, 561 c.], [1, 778 c.], [7, 368 c.]: Ստորև ներկայացվող ցանկում ներառված սկզբունքները ևս ունեն նման նշանակում՝ դրանք մեր կողմից դիտվել են որպես *հետազոտությունն* իրականացնելու նպատակով օգտագործվող հիմնարար դրույթներ և մոտեցումներ:

Ինչ-որ չափով նման բացատրություն է ենթադրվում նաև «պարադիգմ» տերմինի համար (ծագում է հունարեն *paradeigma* *օրինակ՝ նմուշ* բառից, հայերենում օգտագործվում է նաև *պարադիգմա* ձևը [12, էջ 22], սակայն ի տարբերություն սկզբունքի, գրականությունում դրա բովանդակության բացատրությունները խիստ տարատեսակ են:

Պարադիգմը համարվում է փիլիսոփայության առանցքային հասկացություններից մեկը և այն առաջադրել է Թ. Կունը՝ իր «Գիտական հեղափոխությունների կառուցվածքը» աշխատանքում: Ինչպես նշում է Չարվարդի համալսարանի պրոֆեսոր Յա. Կորնաին, որն առաջադրել է համակարգային պարադիգմի գաղափարը, Կունը չի տվել այդ հասկացության հստակ սահմանումը: Եվ այն դարձել է խնդրի շուրջ ցայսօր շարունակվող բազմաթիվ բանավեճերի առարկա [13, 4 ն.]: Ըստ Կունի՝ *պարադիգմը* ներկայացնում է համոզմունքների, արժեքների ու տեխնիկական միջոցների միասնություն, որոնք ընդունված են գիտական հանրության կողմից և ապահովում են գիտական ավանդույթը: Այն այդ հանրության ընդհանրական մտածողության երկարատև գործող միջոց է: Պարադիգմի փոփոխությունը ներկայացնում է գիտական հեղափոխություն [14, 227 ն.]:

Պարադիգմի շուրջ տարակարծությունը ներկայացնելու նպատակով մեջբերենք դրա մի քանի սահմանումներ ևս:

Օտար բառերի բառարանում այն բնութագրվում է որպես «պատմությունից վերցրած օրինակ՝ համեմատության, հիմնավորման հա-

մար» [10, 472 ձ]: Տնտեսագիտական մեծ բառարանում [1, 657 ձ.] այն սահմանվում է որպես խնդիրների դրվածքի, դրանց լուծման, հետազոտության ելակետային հայեցակարգային ուրվագիծ (կամ մոդել): Մեծ ընդհանրացումով է բացատրվում այդ հասկացությունը Ռիչարդ Դաֆտի կողմից, այն ներկայացնելով որպես մտածողության, աշխարհն ընկալելու և հասկանալու հիմնարար եղանակ [16, 836 ձ.]: «Կառավարիչի բառարան-տեղեկագրքում» [7, 342-343 ձ.] *պարադիգմ* հասկացությունը սահմանելով որպես՝ (1) հետազոտության հայեցակարգի ձևավորման հիմքում դրված առանցքային գաղափար և (2) հետազոտվող խնդիրների բացատրության, դրվածքի և լուծման ելակետային դիրքորոշում (հասկացություն, մոդել), դրա էությունը կապակցվում է քննարկվող օբյեկտի առանձնահատկությունների և դրա առանձին կողմերի բնութագրերի էության հետ, դրանով իսկ ենթադրելով յուրաքանչյուրի համար իր համապատասխան պարադիգմի գոյությունը:

Պարադիգմ և սկզբունք տերմինների էության գիտական հանրության կողմից ընդունված միանշանակ սահմանումների բացակայությունն որոշակի անորոշություն է ստեղծում, ինչը պատճառ է դառնում դրանց նույնացման դեպքերի: Հետազոտությունում որպես պարադիգմ հաճախ օգտագործվում է կարևոր սկզբունքը: Լինում են նաև դեպքեր, երբ սկզբունքի դերում հանդես է գալիս պարադիգմը:

Նպատակ չունենալով խորանալ պարադիգմի էության և սահմանման շուրջ ծավալված բանավեճում՝ նշենք միայն, որ սույն աշխատանքում «*պարադիգմ*» հասկացությունը մեր կողմից ընդունված է որպես տվյալ հետազոտությանը մոտեցման նախասկզբնական (ելակետային) հիմնարար գաղափար կամ սխեմա, որն ընդունված է կամ գոնե մերժված չէ գիտական հանրության կողմից և նախկինում կիրառություն է ունեցել այլ հետազոտություններում: Այսպիսով, այն հետազոտության համար փաստորեն արքսիոմատիկ բնույթ է ստանում: Սակայն, մյուս կողմից, դրա ճիշտ ընտրությունը հետազոտողի կողմից պահանջում է ծանոթություն այդ գաղափարին, դրա էության իմացություն և տվյալ հետազոտության հիմքում դնելու օգտակարության գիտակցում: Այսինքն՝ պարադիգմի ընտրությունը պայմանավորված է նաև հետազոտությունն իրականացնողի գիտելիքների պաշարով և ինտուիցիայով, ուստի չի բացառվում նաև, որ նա կօգտվի որևէ գոյություն ունեցող պարադիգմից:

Ամփոփելով վերը ներկայացված դատողությունները՝ անրագրենք, որ սույն աշխատանքում ընդունված են հետևյալ սահմանումները. *պարադիգմը* որոշում է հետազոտության մեթոդաբանական ուղղվածությունը և տեսական ընդհանրական հիմքը, իսկ *սկզբունքները* ցուցում են այն իրականացնելու մեթոդական մոտեցումները: Դրանք ընտրվում են գիտական հանրության կողմից ճանաչված, ընդունված և նախկինում փորձարկում անցած պարադիգմի և սկզբունքների բազմություններից, իսկ անհրաժեշտության դեպքում (առավելապես նորագույն

ուղղություններում) ձևավորվում են՝ ելնելով հետազոտվող խնդրի առանձնահատկություններից:

3. Հետազոտություններում օգտագործվելիք սկզբունքների բազմությունը մեկընդմիջտ տրված ցանկ չէ, որը համընդարարվի օգտագործել ցանկացած հետազոտությունում: Որոշակի հետազոտությունների համար այդ բազմության կազմն ու կառուցվածքը պայմանավորված է շատ գործոններով, որոնց թվում զգալի ազդեցություն կարող են ունենալ, օրինակ, հետազոտություն կատարող սուբյեկտի մասնագիտական նակարդակը և հետազոտվող օբյեկտի առանձնահատկությունները, հետազոտության նպատակը, ժամանակային սահմանափակվածությունը, ակնկալվելիք արդյունքները, դրանց կարևորությունը և օգտագործման ուղղություններն ու ոլորտները, խնդրի մշակվածության աստիճանը, անհրաժեշտ տեղեկատվության առկայությունն ու հավաստիությունը, հետազոտությանը ներկայացվող պահանջները և շատ այլ: Այս գործոնները կարող են ունենալ տարբեր ազդեցություններ, ուստի որոշակի դեպքերում, ելնելով դրանց առկայությունից, ազդեցության փաստացի ուղղություններից և չափից, կպահանջվի նաև տարբեր կազմով սկզբունքների խմբի կիրառություն:

Նկատի ունենալով գործոնների նշված տարատեսակությունը և որոշակի դեպքի համար հետազոտություն իրականացնող սուբյեկտին կիրառվելիք սկզբունքների հիմնավորված ընտրություն կատարելուն օժանդակելու նպատակով, օգտակար կլինի ձևավորել ընդհանուր դեպքում հետազոտությունների հիմքում դրվելիք սկզբունքների հնարավոր ընդգրկուն ցանկ, հետազոտողին թողնելով դրանցից ընտրություն կատարելու իրավունքն ու պատասխանատվությունը: Կարծում ենք, ըստ էության, հնարավոր և նպատակահարմար կլինի նմանատիպ ցանկ ձևավորել նաև հետազոտությունների պարադիգմների համար, չնայած որ դա համեմատած սկզբունքների ցանկի հետ, ավելի մեծ դժվարությունների կհանդիպի: Դա բացատրվում է ինչպես «պարադիգմ» հասկացության բարդությամբ և գիտական հանրությունում դրա շուրջ շարունակվող վիճաբանություններով, այնպես և դրա էության ոչ միանշանակ արտահայտվածությամբ տարբեր հետազոտություններում:

Սկզբունքների (նաև պարադիգմների) այդպիսի ընդգրկուն ցանկերի հիման վրա, ելնելով հետազոտության օբյեկտների առանձնահատկություններից, հետազոտությունների ուղղվածությունից, նպատակներից և այլ բնութագրերից, դրանք որոշակի ձևով խմբավորելով, կարելի է ձևավորել նաև սկզբունքների (պարադիգմների) մասնակի կամ մասնագիտական ցանկեր, ներառելով դրանք սկզբունքների մանրամասնեցված համակարգի կազմում որպես ենթահամակարգեր:

4. Նշենք նաև, որ եթե հետազոտությունների՝ տվյալ ժամանակում հայտնի և փորձաքննություն անցած (ընդունելություն գտած) սկզբունքների լայն ընդգրկումով ընդհանրական համակարգ ձևավորվի, ապա չի կարելի հավաստել, որ դրա կազմը կպահպանվի հետագա ժամանակահատվածում: Ջարգացման և շարունակական, որոշ դեպ-

քերում զգալի ինտենսիվությամբ իրականացվող փոփոխությունների պայմաններում, նկատի ունենալով նաև գիտության զարգացումը հետազոտվող ոլորտում, այդ սկզբունքների կազմը, կախված նաև տվյալ երկրի կամ տարածաշրջանի առանձնահատկություններից և զարգացման նպատակներից, նույնպես փոփոխությունների կենթարկվի: Նպատակահարմար կլինի կիրառությունից դուրս բերել որոշ սկզբունքներ և ցանկում ներառել տվյալ ժամանակի պայմաններին համապատասխանող նոր սկզբունքներ: Այսինքն՝ համակարգում ներառվող սկզբունքների ցանկը որոշակի պարբերականությամբ, կախված պայմանների փոփոխության ինտենսիվությունից, հարկ կլինի վերանայել և ճշգրտել: Դա կդառնա սկզբունքների առաջարկվող համակարգի գործառնություններից մեկը, որի որակյալ իրականացումը, կարծում ենք, դրական ազդեցություն կունենա հետազոտությունների որակի վրա, կնպաստի ակնկալվելիք արդյունքների հիմնավորվածության աստիճանի և արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

5. Հետազոտությունը, լինի այն գիտական թե վերլուծական-նկարագրային կամ ունենա կառավարչական վճիռների հիմնավորման ուղղվածություն, ստեղծագործական աշխատանք է: Դրա իրականացման ընթացքում, նաև կախված ստացվող միջանկյալ արդյունքներից, հնարավոր է հետազոտության օբյեկտի և քննարկվող խնդրի շուրջ գիտելիքի և պատկերացումների, ինչպես նաև հետազոտության նպատակների որոշակի փոփոխություններ: Դրանք կարող են պայմանավորել նաև հետազոտության սկզբունքների փոփոխություն կամ լրացման անհրաժեշտություն: Հետևաբար, ձևավորելով տվյալ հետազոտության իրականացման սկզբունքների սկզբնական փաթեթ-համալիրը, միաժամանակ չպետք է խուսափել նաև հետազոտության ընթացքում այն վերանայելու և ճշգրտելու հնարավորությունից, եթե դա օգտակար և նպատակահարմար համարվի: Պատճառն այն է, որ հետազոտության էությանն ու նպատակին չհամապատասխանող կամ անբավարար հիմնավորվածություն ունեցող սկզբունքների օգտագործումը, ինչպես նաև գիտական հանրության կողմից ընդունված այնպիսի սկզբունքների չօգտագործումը, որոնց կիրառությունը օգտակար կլիներ հետազոտության հաջողության համար, իր բացասական ազդեցությունը կարող է ունենալ ակնկալվելիք արդյունքների վրա դրանց ընդգրկման, ճշգրտության, հիմնավորվածության աստիճանի տեսանկյունից և պատճառ դառնալ տնտեսությունում որոշակի կորուստի, թեկուզ սպասվող կամ հնարավոր արդյունքը չստանալու ձևով:

Մյուս կողմից, եթե սկզբունքների այդպիսի ընթացիկ ճշգրտումը կամ լրացումը էապես տարբերվում է գիտական հանրությանը հայտնի և նրա կողմից ընդունված սկզբունքներից (առավել ևս պարադիգմի պարագայում), ապա այն կարիք ունի հետազոտողի կողմից մանրամասն պատճառաբանման և հիմնավորման:

6. Կոնկրետ հետազոտության համար ընտրությունը հեշտացնելու նպատակով օգտակար կլինի սկզբունքների բազմությունը տեսակա-

վորել ըստ տարբեր բնութագրերի: Դա ինքնուրույն ծավալուն հետազոտության խնդիր է, որն այս հոդվածում մանրամասնորեն չի քննարկվում: Կանդիդատական քննության միայն մի քանի հարցի, որոնք անմիջականորեն առնչվում են պարադիգմի ցանկի ձևավորմանը:

ա) Կարելի է տարանջատել ընդհանրական և մասնակի սկզբունքներ: Առաջինները կիրառելի են ցանկացած հետազոտության համար, իսկ մասնակի սկզբունքները օգտագործվում են որոշակի օբյեկտների կամ որոշակի ուղղվածություն ունեցող հետազոտությունների համար: Նկատի ունենալով հետազոտվող օբյեկտների խնդիրների մեծ բազմությունը և մասնակի սկզբունքների կոնկրետացման դժվարությունները դրանց համար, ներկայացվող ցանկում ներառված են միայն ընդհանրական բնույթ ունեցող սկզբունքները: Ենթադրվում է, որ դրանք հիմք կարող են հանդիսանալ որոշակի մասնակի սկզբունքների ձևավորման համար:

բ) Կարելի է առանձնացնել խոշորացված (ագրեգատային) և մանրամասնացված (որոշակի) սկզբունքներ: Առաջինները, որպես կանոն, ձևավորվում են նույն ուղղվածություն ունեցող սկզբունքների միավորման ճանապարհով:

գ) Հետազոտությունների գործընթացը մեծամասամբ տրոհվում է փուլերի, որոնք առանձնացվում են ինչպես ժամանակի մեջ իրենց հաջորդականության, այնպես և ըստ իրականացվող աշխատանքների մասնագիտական ուղղվածության՝ անկախ դրանց ժամանակային բաշխվածությունից: Սկզբունքները, կախված ինչպես ողջ հետազոտության, այնպես և դրա փուլերի առանձնահատկություններից, կարող են ունենալ ընդհանուր կիրառություն՝ օգտագործվել հետազոտության բոլոր փուլերում կամ օգտակար լինել առանձին փուլերում աշխատանքների կատարման համար: Դա որոշակիացվելու է հետազոտությունն իրականացնող սուբյեկտի կողմից:

7. Ընդհանրական սկզբունքների ցանկը հնարավորինս ընդգրկուն և բազմակողմ դարձնելու նպատակով, մանավանդ նկատի ունենալով, որ այն հիմք է ծառայելու նաև մասնակի սկզբունքների ձևավորման համար, հավաքագրել և խմբավորել ենք ինչպես գրականությունում այդ նպատակի համար առաջարկվող, այնպես և տարբեր բնույթի գիտական հետազոտություններում օգտագործված սկզբունքները, անհրաժեշտության դեպքում դրանցում որոշակի փոփոխություններ կատարելով: Ներառել ենք նաև մեր կողմից ձևավորված մի շարք սկզբունքներ: Ցանկն էլ ավելի ընդլայնելու համար, կարծում ենք, նպատակահարմար կլիներ հանրապետության գիտական հանրության շրջանում փորձագիտական հարցում կատարել՝ հետազոտություններով զբաղվող անձանց կողմից կարևոր համարվող սկզբունքների օրինակներ հավաքագրելու նպատակով: Արդյունքները հնարավորություն կընձեռեին նաև գնահատել դրանց կարևորության աստիճանը ըստ հարցերին տրված պատասխանների կրկնողականության: Նման մոտեցում մեր կողմից կիրառվել է մասնակիորեն և ոչ պաշտոնական ձև տալով դրան:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. *Աիւծօի է յեիւի է-աիւծե նեիւծու. Ի ի Թա. Ա.Բ. Աճծեայրա, Ի ., Էիւծ. Ի ի Թի է յեիւի էե, 2002, 1280 թ.*
2. *Կիւծի է-աիւծե է Թծե-աիւծե նեիւծու, Ի ., Ի ի Էծեծա, 1991, 414 թ.*
3. *Նեիւծու նիւծաիւծի է յեիւի է-աիւծե Թիւծ. Ի Թ. ն ի Թ., Ի ., Էիւծ ԹԹ-Ի ., 1997, 608 թ.*
4. *Նեիւծու ի յեիւի է. Ի Թ. ն ի Թ., Նիւծ, “Կիւծի է-աիւծե Թիւծ”, 2004, 752 թ.*
5. *Թիւծիւծ Է.Թ., Ածծու ի Կ.Է., Աիւծ-Թծե յեիւի է-աիւծե նեիւծու, Ի ., Էճ-Թ “Թծ. Թիւծ”, 2000, 880 թ.*
6. *Ուծ-հայերեւոյ տնտեսագիտական տերմինների բառարան, Եր., «Հայաստան», 1964, հ. 1, էջ 738:*
7. *Նեիւծու - նիւծաիւծի է ի Թիւծ, Էիւծ ԹԹ -Ի ., 1996, 608 թ.*
8. *Աիւծօի է ի Թիւծ-Թծե նեիւծու Թ 2-Թ ի Թ, Ի ., Էճ-Թ “Նիւծ. Կիւծիւծիւծ”, 1972, 2 Թ.*
9. *Սիւծիւծ Ս., Ածծերեւոյ բառարան, Եր., 1998, 425, էջ 285:*
10. *Նեիւծու է ի Թծաիւծ նեիւծ, Ի ., Էճ-Թ “Նիւծ. Կիւծիւծիւծ”, 1964, 784 թ.*
11. *Աիւծիւծ Ա.Ա., Աիւծօի է յեիւի է-աիւծե նեիւծու. -Ի ., Էիւծիւծ ի Թ, 2006, 860թ.*
12. *Ուծ-հայերեւոյ բառարան, չորս հատորով, ԳԱ հրատ. 22, 1957, հ.3:*
13. *Էիւծիւծ Բ., Նեիւծիւծ ի Թիւծիւծ. “Աիւծիւծ յեիւի էե” 2002, թ. 22.*
14. *Նիւծաիւծ ի Թ չիւծիւծ Թիւծ: Նեիւծու, Ի ., Ի ի Էծեծա, 1991, 414 թ.*
15. *Ածծ Թ., Ի ի Թիւծիւծ. Ի Թ. ն ի Թ., Նիւծ - Ի Թ, 2006, 864 թ.*

ARA GYURJYAN

*Deputy Chief of Staff Presidency
Republic of Armenia,
Doctor of Economics*

**THE IDEA AND FORMATION APPROACHES TO THE PRINCIPLE
AND PARADIGM RESEARCH OF MANAGEMENT PROGRAMMIC
PROVISION**

Conscientious activity is the primary condition and the main means of mankind's global goals, that is safe survival and sustainable development. The implementation of these goals envisions targeted and effective management of any activity and action undertaken by a human being at any phase of his/her survival and environment. A targeted and effective knowledge based management requires grounded managerial decision making as well as control over its implementation process, monitoring and evaluation of results, realization of actions aimed at its improvement.

The implementation of these functions, which requires development of management programs, is indicated in the article as *Research of management programmic provision* – RMPP.

In its essence, the RMPP becomes an important sphere of men's activity. Among the conditions aimed at the high quality implementation of its functions – the formulation of its development of main principles and conscientious use. Emphasizing the existence of RMPP principle provision, the article suggests an approach to its formulation, as well as presents the main conditions of its implementation. The possibility of their use for the formation of paradigm provision for the development of management programs is also discussed in the article.

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՁՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՁՅԱՆ

*ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության
վերլուծության և զարգացման վարչության
պետի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու*

ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանրային կառավարման տեսանկյունից, և հատկապես Հայաստանի նման սակավահող երկրների համար, խիստ կարևոր նշանակություն և առանձնահատուկ դեր ունեն հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, այդ ռեսուրսների կառավարման ու հաշվառման համակարգերի օպերատիվությունն ու ճկունությունը, ինչպես նաև հողային ֆոնդի օգտագործման և կառավարման բնագավառում ծագող բազմաբնույթ հիմնախնդիրների հնարավորիս արագ ու նպատակամետ լուծումը: Այս առումով, մեր հանրապետությունում ներկայումս ձևավորվել է բավականին բարդ և, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման առումով, կարելի է ասել վտանգավոր իրավիճակ, ինչն իր արտացոլումն է գտնում գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածության ու կտրտվածության երևույթներում, հողերի խախտման ու դրանց բնապահպանական վիճակի վատթարացման, և որպես հետևանք՝ գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի անկման միտումներում: Վերջինս պայմանավորված է ինչպես հանրահայտ օբյեկտիվ պատճառներով, այնպես էլ հողային բարեփոխումների իրականացման գործընթացում տեղ գտած թերություններով, բացթողումներով և սուբյեկտիվ մի շարք գործոններով:

Նշված միտումների ուսումնասիրությունը և հանրապետությունում հողօգտագործման վիճակի վերլուծությունները հանգեցնում են այն մտքին, որ գյուղատնտեսության ոլորտի զարգացման, տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացման և հանրապետության հողային սակավ ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից առաջնային հիմնախնդիր է դառնում կամավոր հիմունք-

ներով հողերի միավորումը, այդ նպատակով պետական ռազմավարական ծրագրի մշակումը և դրա հետևողական իրականացումը:

Հետխորհրդային հանրապետություններից Հայաստանն առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ հողային բարեփոխումների իրականացմանը՝ դեռևս խորհրդային իշխանությունների գոյության պարագայում: Աննախադեպ և լայնամասշտաբ այս քայլն իրականացվեց 1991թ. հունվարի 22-ին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի հիման վրա, ըստ որի վերացվեց հողի նկատմամբ պետական սեփականության մենաշնորհը և ճանաչվեց ինչպես պետական, այնպես էլ կոլեկտիվ ու մասնավոր սեփականության հիման վրա գյուղատնտեսական գործունեություն կազմակերպելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը [2]:

Գյուղացիական տնտեսություն վարելու համար հողամասերը որպես սեփականություն առաջին հերթին տրամադրվեցին գյուղական բնակավայրերում 1990 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ մշտապես բնակվող քաղաքացիներին, իսկ այս հիմունքներով հողամասեր տրամադրելուց հետո, չբաժանված հողատեսքեր մնալու դեպքում, դրանք նախատեսվում էին տրամադրել հանրապետությունում բնակվող՝ տվյալ բնակավայրի նախկին այն բնակիչներին, որոնք մշտական բնակություն կհաստատեին և կգրանցվեին այնտեղ, իսկ այնուհետև՝ հանրապետությունում բնակվող ՀՀ այն քաղաքացիներին, որոնք ցանկություն կհայտնեին մշտական բնակություն հաստատելու գյուղում և վարելու գյուղացիական տնտեսություն: Բարեփոխումների ընդունված ռազմավարությանը համապատասխան, գոյություն ունեցող խորհտնտեսությունները լուծարվեցին, որոնց, սակայն, հնարավորություն տրվեց ձեռք բերելու պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների կարգավիճակ՝ դրանց աշխատողների կողմից (ընտանիքների չափահաս անդամների մեծամասնության գրավոր համաձայնությամբ) իրենց հասանելիք հողաբաժինների և արտադրության մյուս միջոցների պետական սեփականության հիման վրա տնտեսության գործունեությունը շարունակելու և հողի սեփականության իրավունքի իրացումից հրաժարվելու պայմանով: Իսկ առկա կոլտնտեսություններին տրվեց իրենց նախկին կարգավիճակը լրիվ կամ մասնակի պահպանելու հնարավորություն՝ նույնպես հողի սեփականության իրավունքի իրացումից հրաժարվելու և հողօգտագործումը (կոլտնտեսությունում միավորված ժխերին հասանելիք հողաբաժինների սահմաններում) վարձակալական հիմունքներով իրականացնելու պայմանով: Բացի նշվածներից, նոր ձևավորվող տնտեսությունների համար դրվեցին նաև այլ սահմանափակումներ, մասնավորապես՝ գյուղատնտեսական հողերը քաղաքացիներին որպես սեփականություն տրամադրվեցին մասնակի հատուցմամբ (առաջին երկու տարվա ընթացքում հատուցման գումարների գանձման պայմանով), տնամերձ (օժանդակ) հողամասերը որպես սեփականություն տրամադրվեցին անհատույց, բացառությամբ այն քաղաքացիների, որոնք արդեն մեկ անգամ իրացրել էին հողի սեփականության իրենց իրավունքը, հողի նկատմամբ

սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո առաջին երեք տարիների ընթացքում արգելվեց գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողամասերի օտարումը, արգելվեց գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու համար հատկացված գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նպատակներով օգտագործելը և այլն:

Օրենքով ամրագրվեց նաև, որ հողային բարեփոխումների իրականացման նպատակով ՀՀ Նախարարների խորհուրդն իրականացնում է հողահանդակների ամրակցում բոլոր բնակավայրերին (այդ թվում՝ նաև լքված գյուղական բնակավայրերին), ելնելով այն սկզբունքից, որ բնակավայրերին ամրակցվող հողահանդակների մեջ հնարավորին չափով ընդգրկվեն այդ բնակավայրերին ավանդաբար պատկանող հողերը և հնարավորության սահմաններում հողեր առանձնացվեն այն գյուղական բնակավայրերի համար, որոնք արհեստական ճանապարհով միացվել են քաղաքներին կամ վերակազմավորվել ավանների, իսկ բնակավայրերին ամրակցված վարելահողերի և այլ հողահանդակների միջին հաշվով 20%-ը հողային բարեփոխումների սկզբնական փուլում չսեփականաշնորհվեց և պահպանվեց որպես պետական պահեստային ֆոնդ:

Գյուղացիական տնտեսություն վարելու համար քաղաքացիներին որպես սեփականություն տրամադրվող հողամասի չափը սահմանվեց ընտանիք (ծուխ) - անդամ (շունչ) հարաբերությամբ, հետևյալ կարգով.

- մինչև երեք անդամ ունեցող ընտանիքներին՝ մեկ հողաբաժին¹,
- չորսից վեց անդամ ունեցող ընտանիքներին՝ երկու հողաբաժին,
- յոթ և ավելի անդամ ունեցող ընտանիքներին՝ երեք հողաբաժին:

Ըստ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (ԱԳԿՊԿ) 2000թ. գույքագրման տվյալների, հանրապետության մասշտաբով արդեն քաղաքացիների սեփականությանն էր հանձնված համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի 44.3%-ը (նույն տվյալներով համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվել են մոտ 324.9 հազ. հա գյուղատնտեսական հողատեսքեր կամ ընդհանուրի 23.2%-ը), այդ թվում՝ Արագածոտնի մարզում 47.6%-ը, Արարատում՝ 52.1%-ը, Արմավիրում՝ 64.7%-ը, Գեղարքունիքում՝ 43.3%-ը, Լոռիում՝ 42.4%-ը, Կոտայքում՝ 52.2%-ը, Շիրակում՝ 47.5%-ը, Սյունիքում՝ 28.7%-ը, Վայոց ձորում՝ 29.4%-ը և Տավուշում՝ 42.3%-ը [4]:

Խոտհարքների սեփականաշնորհման առումով սահմանվեց, որ գյուղացիական տնտեսություններին որպես սեփականություն դրանք պետք է տրամադրվեն վարելահողերի հատկացման կարգով՝ ընտանիքների ներկայացուցիչների ժողովի համաձայնությամբ: Ընդ որում, խոտհարքների հնարավոր մասնատումը և այլ կատեգորիայի հողատեսքերի վերածումը կանխարգելելու նպատակով ընտանիքների կողմից խոտհարքները կոլեկտիվ հիմունքներով տնօրինելու մասին որոշում կայաց-

¹ Ներառյալ տնամերձ (օժանդակ) հողամասի չափը, իսկ հողամասերի առավելագույն չափերը պետք է սահմանվին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից:

նելու դեպքում այդ հողերը մասնակի հատուցման արտոնյալ պայմաններով և ՀՀ Նախարարների խորհրդի կողմից սահմանվող կարգով պետք է տրվեին ստեղծվող գյուղացիական կոլեկտիվ տնտեսության ընդհանուր տնօրինմանը:

Բարեփոխումների ընթացքի սահունության և արագության, ինչպես նաև սկզբնական շրջանում տնտեսավարման համար նպաստավոր պայմանների ապահովման նպատակով սահմանվեցին տարաբնույթ արտոնություններ՝ սկսած առաջին երկու տարիներին բոլոր տեսակի հարկերից ազատումից մինչև վարկային, գույքային և ինստիտուցիոնալ բնույթի մյուս արտոնությունները (նոր ստեղծված գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին լուծարվող կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքով տրամադրում, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում և այլն): Սակայն, այդ արտոնությունների և նախատեսված սահմանափակումների մեծ մասը, կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք հանգամանքների հետ, ըստ էության, մնաց թղթի վրա՝ հանգեցնելով բազմաթիվ բացասական երևույթների ու միտումների ձևավորմանը:

Այնուհետև, 2001թ. մայիսի 2-ին ընդունված նոր Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն, համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերը սեփականության իրավունքով անհատույց փոխանցվեցին համայնքներին, որի իրականացման համար նախատեսվեց չորսամյա ժամկետ [1]: Այս գործընթացը ներկայումս շարունակվում է, որը կատարվում է կառավարության որոշումների և հողամասի հատակագծի հիման վրա: Ընդ որում, օրենսգիրքը նախատեսում է նաև, որ համայնքի սեփականությանը կարող են պատկանել համայնքի վարչական սահմանից դուրս գտնվող և համայնքի սեփականությանը հանձնված կամ համայնքի ձեռք բերած հողամասեր, ինչը իրավական և վարչական որոշակի նախադրյալներ է ստեղծում առաջիկայում համայնքային հողերի միավորման համար:

Մյուս կողմից, հողի սեփականաշնորհման և ընդհանուր առմամբ գյուղատնտեսության ճյուղում իրականացված կտրուկ վերափոխումները պահանջում էին զուգահեռաբար և համարժեք վերափոխումներ իրականացնել նաև ագրոարդյունաբերական համալիրի մյուս ենթաճյուղերում (առաջին հերթին՝ գյուղմթերքների վերամշակման ոլորտում), որը, սակայն, տեղի ունեցավ բավականին ուշ և չէր կարող ապահովել անցումային շրջանի սկզբում հողի սեփականաշնորհման հետ կապված ակնկալվող արդյունքները: Սրան նպաստեց նաև այս փուլում իշխանությունների կողմից մասնավոր սեփականության ինստիտուտի և գյուղացու մոտ սեփականատիրոջ հոգեբանության արմատավորման գործոնների գերազնահատման հանգամանքը, որի հետևանքով գյուղատնտեսության համալիր վերափոխումների և զարգացման հիմնահարցերը, ըստ էության, տևական ժամանակով դուրս մղվեցին իշխանությունների ուշադրության կենտրոնից: Հատկապես 1991-1995թթ. գրեթե կազմալուծվեցին ագրովերամշակման, մթերման, նյութատեխնիկական

մատակարարման, արտադրական սպասարկման, ֆինանսավարկային և ապահովագրական համակարգերը, որի հետևանքով գյուղատնտեսական գործունեության վարման համար անհրաժեշտ արտադրության միջոցների և ծառայությունների գները զգալիորեն գերազանցեցին գյուղատնտեսական արտադրանքի գներին՝ կտրուկ նվազեցնելով գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակը՝ սահմանափակելով ճյուղի բնականոն, ինքնաբավ վերարտադրության հնարավորությունները:

Համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) և ԱԳԿԿ պաշտոնական տվյալների [5], 1991թ. մարտից մեկնարկած հողի սեփականաշնորհման արդյունքում նախկինում գոյություն ունեցած մոտ 1200 կոլտնտեսությունների, խորհունտեսությունների և միջտնտեսային ձեռնարկությունների հիմքի վրա կազմավորվեցին բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից միայն գյուղացիական տնտեսությունների քանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 337906 միավոր, իսկ վերջիններիս կողմից տնօրինվող գյուղատնտեսական հողատեսքերը² (ըստ 2000թ. գույքագրման տվյալների) կազմել են համայնքների վարչական սահմաններում գտնվող հողային ֆոնդի 44.3%-ը (կամ 477.1 հազ. հա), որից՝ վարելահողերը՝ 29.3%-ը կամ 315.2 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 2.2%-ը կամ 23.4 հազ. հա, խոտհարքները՝ 5.6%-ը կամ 60.5 հազ. հա և տնամերձները՝ 7.2%-ը կամ 77.4 հազ. հա:

Ներկայումս միջին հաշվով մեկ «պայմանական» տնտեսությանը հանրապետության մասշտաբով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսք (այդ թվում՝ 0.9 հա վարելահող), որի տարածքային բաշխվածությունն ըստ առանձին մարզերի ունի բավականին դիֆերենցված և անհամաչափ բնույթ, ինչով էլ զգալիորեն պայմանավորված են գյուղմթերքների արտադրության բնագավառում մարզերի մասնագիտացման հիմնական ուղղությունները: Սասնավորապես, միջին հաշվով մինչև 1 հա հողատեսք ունեն Արարատի (0.6 հա) և Արմավիրի (0.9 հա) մարզերի տնտեսությունները, 1-2 հա՝ Արագածոտնի (1.5 հա), Գեղարքունիքի (1.4 հա), Լոռու (2.0 հա), Կոտայքի (1.2 հա), Վայոց ձորի (1.3 հա) և Տավուշի (1.3 հա) մարզերի, իսկ 2-3 հա՝ միայն Շիրակի (2.4 հա) և Սյունիքի (3.0 հա) մարզերի տնտեսությունները:

Բոլոր մարզերում (բացառությամբ Երևան քաղաքից) տնտեսություններին պատկանող հողատեսքերի կառուցվածքում գերակշռում են վարելահողերը, որոնք հանրապետության մասշտաբով կազմում են գյուղատնտեսական հողատեսքերի 66.1%-ը: Այս առումով ամենաբարձր ցուցանիշն ունի Շիրակի մարզը (այստեղ վարելահողերը կազմում են մարզի գյուղատնտեսական հողատեսքերի 84.1%-ը), իսկ ամենացածրը՝ Լոռու մարզը (51.4%), որը պայմանավորված է ինչպես մարզերի ռելիեֆով, այնպես էլ բնակչության խտությամբ, և հուշում է հողերի

² Ներառյալ Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերը :

միավորման գործընթացում վարելահողերի, որպես առաջնային նպատակային թիրախի, ընտրության անհրաժեշտությունը:

Ընդհանուր հողատեսքերում ունեցած մասնաբաժնի տեսանկյունից երկրորդ համեմատաբար հավասարաչափ բաշխվածություն ունեցող և խոշոր մասը կազմում են տնամերձերը՝ բացառությամբ, թերևս, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի: Մյուս մարզերում այս կատեգորիայի հողատեսքերին բաժին են ընկնում ընդհանուրի 11.6%-ից (Շիրակի մարզում) մինչև 26.4%-ը՝ Արարատի մարզում (բացառությամբ Երևան քաղաքի): Ինչ վերաբերում է խոտհարքների տակ հատկացված հողատեսքերին, բնականաբար, ամենամեծ տեսակարար կշիռ ունեն անասնապահության գծով մասնագիտացված մարզերը (Լոռու մարզում այս հողատեսքերը կազմում են ընդհանուրի 33.2%-ը և Գեղարքունիքի մարզում՝ 21%-ը), իսկ մասամբ էլ Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը, որտեղ այս հողատեսքերը կազմում են ընդհանուրի համապատասխանաբար՝ 16.9%-ը, 16.8%-ը և 12.1%-ը: Մնացած մարզերում տվյալ հողատեսքերի տեսակարար կշիռները տատանվում են 0.5%-ից մինչև 6.1%-ը:

Ըստ էության, տնտեսությունների նման փոքր չափերը գյուղացիական տնտեսություններին ինդուստրիալ տեխնոլոգիաների ներդրման և կիրառման համար հնարավորություններ չեն ընձեռում, ինչն էլ, անշուշտ, խոչնդոտում է գյուղատնտեսության վարման արդյունավետության և ապրանքայնության մակարդակների բարձրացմանը: Վերջինս պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գյուղատնտեսական մթերք արտադրողների ճնշող մեծամասնությունը ներկայումս փոքր, ոչ մասնագիտացված և պարզ վերարտադրությամբ զբաղվող տնտեսավարող միավորներ են: Այդուհանդերձ, չնայած վերը նշվածին, 1995 թվականից աստիճանաբար սկսեց աշխուժություն նկատվել գյուղատնտեսության ճյուղի զարգացման առումով, որը համեմատաբար լայն թափ ստացավ 2001-2002 թվականներից: Դրան նպաստեցին ոչ միայն բուն գյուղատնտեսության ճյուղում, այլև սպասարկող ենթակառուցվածքներում ներդրումային տարբեր ծրագրերի իրականացումը (ռոռզման և էներգետիկ համակարգեր, ճանապարհային ցանց, վերամշակող ձեռնարկությունների մասնավորեցում և այլն), ինչպես նաև ինստիտուցիոնալ բնույթի որոշ հիմնահարցերի լուծումը (մասնավորապես՝ անշարժ գույքի միասնական կադաստրի համակարգի ձևավորումը, պետական մարմինների ու համայնքների իրավասությունների որոշ հստակեցումը, պետական միջոցների հաշվին հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացի իրականացումը և դրա իրավական պաշտպանվածության երաշխավորման հիմքերի ստեղծումը, տեղական ինքնակառավարման մարմիններին անհատույց կարգով համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի փոխանցումը և այլն), որոնց արդյունքում նկատելի դարձան հողի շուկայի և գյուղատնտեսության ճյուղի կայունացման ու զարգացման միտումները: Այսպես, վերջին տարիներին, պայմանավորված մակրոտնտեսական իրավիճակի կայունացմամբ և նշված հանգամանքներով, հանրապետության գյուղատնտեսությունում

տեղի են ունեցել կառուցվածքային որոշակի փոփոխություններ, և առաջին հերթին՝ զգալիորեն փոխվել է մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը: Մասնավորապես, ըստ ՀՀ ԳՆ տվյալների, նախորդ տարվա համեմատությամբ 2004թ. ավելացել են հացահատիկային մշակաբույսերի (2.6%-ով) և կարտոֆիլի (10.2%-ով) ցանքատարածությունները, որը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ բանջարանոցային, բոստանային, կերային և տեխնիկական մշակաբույսերի, ինչպես նաև պտղի, հատապտղի ու խաղողի ցանքատարածությունների կրճատման:

Նախորդ տարվա համեմատ 2004թ. զգալիորեն աճել են նաև գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի արտադրության ծավալները, բացի բոստանային կուլտուրաներից, որի գծով տեղի է ունեցել շատ փոքր՝ 2.1%-ի անկում: Հացահատիկի արտադրությունը, որի նկատմամբ պահանջարկը հիմնականում բավարարվում է ներմուծման հաշվին, 310.0 հազ. տոննայից 2004թ. հասել է 456.0 հազ. տոննայի՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով ավելի քան 47%-ով, կարտոֆիլի արտադրությունը՝ 13.5%-ով (կամ 68.5 հազ. տոննայով), բանջարեղենի արտադրությունը՝ 5.4%-ով, պտղի արտադրությունը՝ 9.6%-ով (կամ 9.9 հազ. տոննայով), իսկ խաղողի արտադրությունը՝ 81.4%-ով կամ 66.4 հազ. տոննայով, որը գլխավորապես պայմանավորված է խաղողի վերամշակման (դեպի արտահանում կողմնորոշված) արտադրությունների ակտիվացմամբ, մթերման աշխատանքների բարելավմամբ և կազմակերպական որոշ հիմնահարցերի լուծմամբ:

Խաղողի մթերման ծավալները (կապված հիմնականում գինեգործության ճյուղի արագ տեմպերով զարգացման հետ), 2001թ. 37 հազ. տոննայից 2002թ. հասել է 47 հազ. տոննայի՝ աճելով մոտ 27%-ով, 2003թ. մթերման ծավալների աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 8.3% կամ մոտ 4.0 հազ. տոննա, իսկ 2004թ.՝ 56.1% կամ 28.6 հազ. տոննա (2001թ. համեմատությամբ՝ 114.8% կամ ավելի քան 42.5 հազ. տոննա): Իսկ ահա բանջարեղենի և պտղի մթերման գործընթացը ծավալային առումով առավելապես ունի անկման միտում՝ կապված այս մթերքների արտադրության ինքնարժեքի համեմատաբար բարձր մակարդակի և դրանց նկատմամբ ոչ բարձր պահանջարկի, ինչպես նաև բնակչության կողմից այս մթերքների պահածոյացման ավանդաբար մեծ ծավալների առկայության հետ: Այսպես. բանջարեղենի մթերման ծավալները (որի գերակշիռ մասը՝ միջին հաշվով 98.0%-ը կազմում է լուիկը) 2004թ. հասել է 35.8 հազ. տոննայի, որը չնայած մոտ 40.0%-ով գերազանցում է 2001թ. մակարդակը, սակայն նախորդ տարվա համեմատ նվազել է 64.2%-ով կամ ավելի քան 61 հազ. տոննայով: Ինչ վերաբերում է պտղի մթերմանը, ապա 2001թ. 10.2 հազ. տոննայից 2004թ. մթերման ծավալները հասել են 4.4 հազ. տոննայի՝ նվազելով 57.1%-ով, այդ թվում՝ խնձորի մթերման ծավալները՝ 65.7%-ով, դեղձինը՝ մոտ 80.0%-ով, իսկ ծիրանինը՝ 79.0%-ով:

Գյուղատնտեսության ճյուղում արտադրության նախկին ծավալների վերականգնման և ավելացման հետ միասին, բարեփոխումների դժվարին

ճանապարհին ձեռք բերված ամենաեական արդյունքերից մեկը, մեր կարծիքով, կայանում է գյուղացու մոտ հողի սեփականատիրոջ գիտակցության և շուկայական տնտեսավարման մտածելակերպի արմատավորումը, ինչը բարոյահոգեբանական լավ նախադրյալ է հողը սոցիալական գործոնից արտադրության գործոնի վերածելու և հողերի միավորման գործընթացն արդյունավետ իրականացնելու համար: Սակայն, հարկ է արձանագրել նաև, որ չնայած քանակական ցուցանիշների որոշ բարելավմանը դեռևս բավականին ցածր մակարդակի վրա են գտնվում գյուղատնտեսության զարգացման որակական ասպեկտը բնութագրող հիմնական ցուցանիշները: Այսպես.

ա) Վերջին 5-7 տարիներին գյուղատնտեսության ոլորտում գնալով խորացել է աշխատանքի արտադրողականության և աշխատանքային եկամուտների միջև հարաբերակցությունը, որի արդյունքում միավոր աշխատանքի գինը, տնտեսության այլ ճյուղերի (մասնավորապես՝ արդյունաբերության և շինարարության) համեմատությամբ, առաջին հայացքից գյուղատնտեսությունում դարձել է ամենաբարձրը: Գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականությունը, որն ունեցել է անկման միտում, 2003թ. կազմել է արդյունաբերության ոլորտում աշխատանքի արտադրողականության 29.2%-ը, իսկ շինարարության ոլորտում՝ 10%-ը, մինչդեռ գյուղատնտեսության ոլորտում աշխատանքային եկամուտները, որոնք նույնպես ունեցել են նվազման միտում, 2003թ. կազմել են արդյունաբերության և շինարարության ոլորտներում աշխատանքային եկամուտների համապատասխանաբար 47.4% և 49.3%-ը: Այսինքն, ստացվում է, որ գյուղատնտեսությունում միավոր աշխատանքի արժեքը 1.6 անգամ գերազանցել արդյունաբերության և մոտ 4.9 անգամ՝ շինարարության մեջ միավոր աշխատանքի արժեքին, սակայն, եթե նկատի ունենանք գյուղատնտեսության ոլորտի աշխատանքային եկամուտների կառուցվածքում ինքնարժեքի գերակշիռ մասը և մինչև 2004թ. գյուղմթերքների գների անկման միտումը, կարելի է պնդել, որ գյուղացիական տնտեսությունների կողմից իրական տնօրինվող եկամուտներն ավելի ցածր են եղել քան տնտեսության մյուս ճյուղերում:

բ) Գյուղատնտեսության ոլորտում ներդրումների գրավչությունը և հնարավորությունը շատ ավելի սահմանափակ է եղել, քան տնտեսության այլ ոլորտներում, որի արդյունքում 1999-2004թթ. գյուղատնտեսությանը (ներառյալ գյուղական ենթակառուցվածքներին), ըստ պաշտոնական տվյալների, բաժին է ընկել հիմնական միջոցներում ընդհանուր ներդրումների անհամեմատ փոքր մասնաբաժինը՝ 1999թ. 20%-ից 2004թ. հասնելով 4.9%-ի՝ կազմելով ընդամենը 7.3 մլրդ. դրամ: Արդյունքում, գյուղական ենթակառուցվածքների, և մասնավորապես՝ ոռոգման համակարգի դեռևս անբավարար վիճակը մեծապես ազդում են գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքի վրա՝ տնտեսություններին ստիպելով մշակել այնպիսի մշակաբույսեր, որոնք համեմատաբար քիչ են կախված ոռոգման ջրի մատակարարման ծավալից, հուսալիությունից և որակից, ավելի հեշտությամբ կարող են պահպանվել ու գործածվել

ներքին սպառման մեջ կամ իրացվել փոխանակման միջոցով: Սա էլ հենց հացահատիկի (մասնավորապես՝ ցորենի) արտադրության ոչ համաձայնական բարձր տեսակարար կշռի հիմնական պատճառն է, որը, չնայած հացահատիկային կուլտուրաների աճեցման համար ՀՀ-ում գոյություն ունեցող անբարենպաստ պայմաններին, 1995-2004թթ. զբաղեցրել է ընդհանուր ցանքատարածությունների գերակշիռ մասը՝ այլ կուլտուրաների համեմատությամբ ունենալով եկամտաբերության ամենացածր մակարդակը:

զ) Համայնքային ճանապարհների անմխիթար վիճակը և բեռնափոխադրման ծախսերի՝ միջինից մոտ երկու անգամ ավելի բարձր մակարդակը, ինչպես նաև ոռոգման ջրի անհամաչափ մատակարարմամբ պայմանավորված բերքատվության տարածաշրջանային նշանակալից տարբերությունները, այն հիմնական գործոններն են, որոնցով պայմանավորվում է հանրապետությունում գյուղատնտեսության արտադրանքի առևտրայնացման և դրամայնացման ցածր մակարդակը և բնատնտեսության մեծ տեսակարար կշիռը: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների [3], առևտրայնացման (այն է՝ բոլոր տեսակի եկամուտների տեսքով իրացման) միջին մակարդակը գյուղատնտեսության ոլորտում 2002թ. կազմել է գյուղատնտեսական ընդհանուր արտադրանքի մոտ 54%-ը, ընդ որում. ցորենի գծով՝ 27.3%-ը, կարտոֆիլի գծով՝ 42.8%-ը, կաթի գծով՝ 37.1%-ը, մսի գծով՝ 78.5%-ը և այլն, իսկ դրամայնացման կամ կանխիկով կատարվող վաճառքի մակարդակը 1.1-ից (մսի և խաղողի դեպքում) մինչև մոտ երկու անգամ (ցորենի դեպքում) զիջել է դրանց առևտրայնացման մակարդակին:

Նշված ցուցանիշների համեմատությունը 1990-1995թթ. նույն ցուցանիշների հետ ակնհայտորեն ցույց է տալիս, որ վերջին հինգ տարիներին զգալիորեն անկում է ապրել հողի օգտագործման արդյունավետության մակարդակը, ինչը ներկայումս լուրջ խոչընդոտ է հանդիսանում հողերի միավորման տեսանկյունից:

Հողի՝ որպես արտադրության գործոնի նկատմամբ պահանջարկի գնահատման առումով որոշակի պատկերացում կարող է տալ հողերի նկատմամբ իրականացված գործարքների քանակական շարժը, որը 1998-2003թթ. ունեցել է հիմնականում անկանոն աճի դինամիկա: Համաձայն ԱԳԿՊԿ-ի տվյալների, եթե մինչև 2000թ., կապված ընդհանուր առմամբ անշարժ գույքի պետական գրանցման հայտնի դժվարությունների հետ, հողի նկատմամբ բավականին քիչ գործարքներ էին իրականացվում, ապա 2000 թվականից սկսած հողի շուկայում սկզբից կտրուկ, ապա նաև նվազող տեմպերով աշխուժություն արձանագրվեց: Մասնավորապես, այս գործարքների քանակը 1999թ. 3151-ից 2000թ. հասավ 3663-ի՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 16.2%-ով, 2001թ.՝ 9556-ի (աճը 61%), 2002թ.՝ 12256-ի (աճը 28.2%) և 2003թ.՝ 14596-ի (աճը 19.1%), որը, սակայն, գյուղատնտեսական գործունեության ակտիվացման առումով չի կարելի միանշանակ դրական միտում համարել: Խնդիրը կայանում է նրանում, որ նախ՝ ընդհանուր առմամբ

անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների կառուցվածքում հողերի նկատմամբ իրականացված գործարքների տեսակարար կշիռը բավականին փոքր է (1999թ. 7%-ից 2002-2003թթ. այն կայունացել է 20%-ի սահմաններում), ինչը խոսում է անշարժ գույքի այլ տեսակների համեմատությամբ հողի գրավչության ցածր մակարդակի մասին, և երկրորդ՝ անշարժ գույքի (այդ թվում՝ հողի) նկատմամբ իրականացված գործարքների մոտ կեսն իրականացվել են Երևան քաղաքում (առանձին տարիներին այն տատանվել է 49-54%-ի սահմաններում):

Հաշվի առած նաև Երևանի գործոնը, հողերի նկատմամբ իրականացված գործարքների մեծ մասը (ըստ առանձին տարիների առավելագույնը 81.6% և նվազագույնը 54.3%) իրականացվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ, ընդ որում՝ աճի միտում են ունեցել այդ հողերի օտարման (2000-2003թթ. միջին հաշվով 49.6%-ով) և մասամբ էլ գրավադրման գործարքները (2002թ.՝ 2%-ով և 2003թ.՝ 60.2%-ով), ինչը, բացի նշվածներից, պայմանավորված է նաև վերջին 2-3 տարիներին գյուղացիական տնտեսությունների համար միկրովարկավորման ծրագրերի իրականացմամբ, գյուղատնտեսական նշանակության հողերի գրանցման գործընթացի պարզեցմամբ, գրանցման վճարների նվազեցմամբ և վերջին հաշվով՝ հանրային կառավարման համակարգի գործունեության որոշակի բարելավմամբ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման գործընթացը (առանց Երևան քաղաքի) ունեցել է տարածքային ընդգծված բնույթ, մասնավորապես՝ 2003թ. այս գործարքների մեծ մասը՝ 74.8%-ն իրականացվել են հիմնականում դաշտավայրային ռելիեֆ ունեցող մարզերում (Արարատում, Արմավիրում, Կոտայքում և Արագածոտնում), 20.5%-ը՝ հիմնականում նախալեռնային գոտիներում գտնվող մարզերում (Գեղարքունիքում, Լոռիում և Շիրակում), իսկ ամենափոքր մասը կան 4.7%-ը հիմնականում լեռնային գոտիներում գտնվող՝ Տավուշի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, ինչն ակնհայտ է դարձնում հողերի միավորման գործընթացում դրանց տարածաշրջանային և աշխարհագրական դիրքերի խիստ կարևորությունը:

Ամփոփելով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ-ում տնտեսական ընդհանուր իրավիճակը, հողօգտագործման իրավական հիմքերը և հողային ռեսուրսների կառավարմանն առընչվող մյուս գործոնները, կարելի է արձանագրել այն նպաստավոր հանգամանքները և նախադրյալները, որոնք բավականին փաստացի ներուժ են պարունակում հողերի միավորման գործընթացի իրականացման համար: Դրանցից հատկանշական պետք է համարել՝

- կայուն մակրոտնտեսական իրավիճակի առկայությունը և ինտենսիվ տնտեսական զարգացման փուլ մտնելու հնարավորությունը,
- ֆինանսավորման ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից ռեսուրսների ներգրավման հնարավորությունների առկայությունը,

- համայնքներին դրանց վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերի փոխանցումը,
- գյուղատնտեսության ճյուղում և սպասարկող ենթակառուցվածքներում ներդրումային որոշ ծրագրերի իրականացումը,
- անշարժ գույքի միասնական կադաստրի համակարգի ձևավորումը,
- պետական միջոցների հաշվին հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացի իրականացումը և դրա իրավական պաշտպանվածության երաշխավորման հիմքերի ստեղծումը,
- գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների մեծացումը և գյուղատնտեսական գործունեության որոշ աշխուժացումը,
- գյուղացու մոտ հողի սեփականատիրոջ գիտակցության և շուկայական տնտեսավարման մտածելակերպի արմատավորումը,
- հողերի (հատկապես կամավոր հիմունքներով) միավորման գործընթացը սկսելու համար բավարար իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի առկայությունը:

Հողօգտագործման փաստացի իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ հողերի միավորման գործընթացի իրականացման համար, նպաստավոր պայմանների առկայության հետ միասին, գոյություն ունեն մաս բազմաթիվ և տարաբնույթ խոչընդոտներ, որոնցից են՝

- գյուղատնտեսության բնագավառում շահութաբերության ցածր մակարդակը և բնականոն ճանապարհով կամ շուկայական մեխանիզմների ազդեցությամբ հողերի համակենտրոնացման միտումների և ֆինանսատնտեսական իրական հիմքերի գրեթե բացակայությունը,
- հողի՝ որպես արտադրության գործոնի դերի ու նշանակության անկումը, ինչպես նաև դրանով պայմանավորված գործոնային եկամտի ցածր մակարդակը,
- գյուղատնտեսության աճի համեմատաբար ցածր տեմպերը, ճյուղում ներդրումների ծավալների անկումը և ներդրումային գրավչության ցածր մակարդակը,
- հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման վրա բնակլիմայական պայմանների ունեցած մեծ ազդեցությունը և ճյուղի խիստ արտահայտված սեզոնային բնույթը,
- արտաքին առևտրաշրջանառության մեջ գյուղատնտեսության ճյուղի կայուն և փոքր մասնաբաժինը,
- գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսի անկման միտումները, որոնք բացասական ազդեցություն են ունեցել գյուղմթերքների տեղական արտադրողների եկամտաբերության ու շրջանառու ակտիվների ցուցանիշների վրա,
- ընդհանուր առմամբ հողի հարկի գծով հարկային վարչարարության ու մեթոդաբանության և հարկի ֆիզիկական ծավալների հաշվարկման առումներով չլուծված հիմնահարցերի առկայությունը,

- հողերի բարելավման և հողաշինարարության հիմնախնդիրների լուծման համար պետական բյուջեից հատկացումների փոքր ծավալները,
- գյուղատնտեսության ճյուղում ապրանքայնության ցածր աստիճանը,
- ընդհանուր առմամբ հասարակության եկամուտների գերբեռնացվածությունը և եկամուտների անհավասարության ու աղքատության խորացումը, ինչպես նաև աղքատության մակարդակների տարածքային տարբերությունների առկայությունը,
- գյուղական բնակչության շրջանում մարդկային աղքատության բաղադրիչի համեմատաբար բարձր մակարդակը և գյուղական աղքատության կրճատման համեմատաբար ցածր տեմպերը,
- գյուղացիական տնտեսությունների համար փոխառու ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորությունների սահմանափակությունը,
- գյուղմթերքների իրացման հիմնական շուկաների հետ ճանապարհային կապի անբավարար վիճակը,
- հողն արտադրության միջոցից աստիճանաբար սոցիալական գործոնի վերածվելու միտումը,
- ագրովերամշակման, մթերման, նյութատեխնիկական մատակարարման, արտադրական սպասարկման, ֆինանսավարկային և ապահովագրական համակարգերի զարգացման ոչ բավարար վիճակը,
- տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ գյուղացիական տնտեսությունների կողմից իրական տնօրինվող եկամուտների ցածր մակարդակը,
- գյուղական ենթակառուցվածքների, և մասնավորապես՝ ոռոգման համակարգի, ոռոգման ջրի մատակարարման ծավալների, հուսալիության և որակի դեռևս անբավարար վիճակը,
- գյուղատնտեսության արտադրանքի առևտրայնացման և դրամայնացման, ինչպես նաև հողօգտագործման արդյունավետության ցածր մակարդակը և բնատնտեսության մեծ տեսակարար կշիռը,
- հողի շուկայի կայացման ու զարգացման դանդաղ տեմպերը և անշարժ գույքի այլ տեսակների համեմատությամբ հողի գրավչության ցածր մակարդակը,
- հողօգտագործման և հողերի միավորման առումով տարածաշրջանային առանձնահատկությունների բազմազանությունը,
- հողերի բնապահպանական իրավիճակի խիստ վատթար վիճակը, հողերի պահպանության ու վերականգնման համար պետական հատկացումների շատ փոքր ծավալները:

Հողերի միավորման առումով վերը նշված նախադրյալների, նպաստավոր գործոնների և խոչընդոտների ցանկը, բնականաբար, սպառիչ չէ, և գոյություն ունեն նաև մի շարք այլ հանգամանքներ: Ուստի, հողերի

միավորման և դրա հետ կապված մյուս հիմնախնդիրների լուծումը պահանջում է լայնածավալ ու նպատակային բազմաթիվ հետազոտություններ, թեմատիկ ուսումնասիրություններ և այդ հիմնախնդիրների լայն քննարկումներ, որոնք էլ կարող են հիմք հանդիսանալ ծրագրային տարբեր փաստաթղթերի մշակման, տվյալ բնագավառում հանրային կառավարման կատարելագործման և ի վերջո՝ համապատասխան ռազմավարության ձևավորման ու իրականացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք,
[//http://www. parliament.am/legislation](http://www.parliament.am/legislation)
2. «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենք,
[//http:// www. parliament.am/legislation](http://www.parliament.am/legislation)
3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 1999-2005թթ. պաշտոնական տեղեկագրեր, [//http:// www.armstat.am/arm](http://www.armstat.am/arm)
4. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական տվյալներ,
[//http:// www.cadastre.am](http://www.cadastre.am)
5. ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական տվյալներ [//http:// www.minagro.am](http://www.minagro.am)

VARDAN BOSTANJYAN

*Yerevan State University; Department of Economics
Head of Chair of Finance and Accountancy,
Doctor of Sciences (Economics), Professor*

ARTUR TAMAZYAN

*National Assembly of the RA
Deputy Head of Department of Analysis
and Development of Legislation,
Doctor of Economics*

**PROBLEMS OF LAND RESOURCE MANAGEMENT IN THE
REPUBLIC OF ARMENIA**

It has been a long time since the land reform has started to be implemented in the Republic of Armenia. While this process is still going on in relation to certain issues, it may be stated that in contextual sense it is basically accomplished. The review conducted by our group, as well as the recap of analyses performed by a number of specialists allows one to state that along with certain material achievements, this process has brought about negative outcomes, not fully justifying the previously expected effects anticipated from the land privatization process at the initial phase of agricultural reforms. One of the aforementioned adverse effects is the fragmentation of the land resources of the country resulted from land privatization that entailed the formation of small and non-specialized farms involved in plain reproduction, as well as the reduction of efficiency and commodity level in agricultural sector.

In this sense, the article deals with the course of land reform implemented in the Republic of Armenia, highlights the structure of land use as per types of ownership, as well as the distribution of land resources of the marzes and other substantial facts related to land management, which makes it possible to identify and represent the set of factors enhancing and impeding the solution of the problems linked to land consolidation. This problem, in our view, is of primary importance, the solution of which can become a reality based on a specially developed project and a relevant strategy.

ԳԱՐԻԿ ՔԵՆՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի պրոֆեսոր,
քաղաքագիտության դոկտոր*

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱՎՈՐՄԱՆ
ՄԵԹՈՂՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Աշխատի ժողովուրդների և երկրների քաղաքական զարգացման պատմական, սոցիալական, տնտեսական և այլ պայմանների բազմազանությունը հանգեցրել է տարբեր տեսակի կուսակցական կառույցների առաջացման, որոնք տարբերվում են իրարից կազմակերպական կառուցվածքով, գործառույթներով, գործունեության առանձնահատուկ գծերով և այլն: Անցյալում, քաղաքական մտքի կողմից կատարվել են առաջին փորձերը դասակարգել կուսակցություններն ըստ որոշակի ընդհանուր հատկանիշների, սակայն այն կրել է բավականին մակերեսային բնույթ և թեքվել է դեպի բարոյական («լավ» և «անազնիվ» միություններ) ու քանակական («մեծ» և «փոքր» կուսակցություններ) չափանիշները:

XVIII դարի կեսերին, անգլիացի փիլիսոփա Դավիթ Հյունն առաջին անգամ առաջարկեց կուսակցությունները դասակարգել ըստ շահերի՝ ըստ այս կամ այն քաղաքական գործչի հետ կուսակցության կապվածության: Նա նշեց երկու տիպի կուսակցություն - «աֆեկտի կուսակցություն» և «սկզբունքների կուսակցություն» [1]:

Ժամանակակից քաղաքագիտությունը մշակել է կուսակցությունների տիպաբանության բավականին բարդ ու հակասական համակարգ: Գոյություն չունեն միասնական կամ գոնե մեծամասամբ հանրակնող մոտեցումներ ո՛չ ամերիկյան, ո՛չ արևմտաեվրոպական և ո՛չ էլ հետկոմունիստական երկրների քաղաքագետների կողմից: Բավական է փաստել, որ որոշ հեղինակներ նշում են քաղաքական կուսակցությունների երկուսից երեք տիպ (Մ.Դյուվերժե, Ժ.Բլոնդել), մինչդեռ կան քաղաքագետներ, որոնք առանձնացնում են տասից մինչև քսան քսանհինգ տիպի կուսակցություններ: Այս փաստարկն արդեն ապացուցում է, որ խնդիրը լուծված չէ և դեռ բավական ժամանակ այն կմնա քաղաքական կուսակցությունների հետազոտությամբ զբաղվող քաղաքագետների ուշադրության կենտրոնում: Օգտագործելով ժամանակակից կուսակցությունների տիպաբանության ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների նախորդ փորձը, աշխատենք ներկայացնել դասակարգման մեր տարբերակը: Այս նպատակին հասնելու հա-

մար առաջին հերթին պետք է պարզենք, թե ի՞նչ ենք հասկանում **քաղաքական կուսակցության տիպ** ասելով և ի՞նչ բովանդակություն ենք դնում այդ հասկացության հիմքում:

Կուսակցության տիպ ասելով քաղաքագիտության մեջ մեծամասամբ հասկանում են կուսակցությունների **էական հատկանիշների համակարգը**, որոնց մեջ արտահայտվում է սոցիալական բնույթը, գաղափարական հիմքը, գլխավոր սոցիալական նշանակության ֆունկցիան, ներքին կառուցվածքի առանձնահատկությունները և գործունեության մեջ գերակշռող մեթոդների բնույթը [1; 3, c.201; 4, c.310; 5, c.343]: Այս մոտեցումը գերակշռում է հետխորհրդային ժամանակահատվածում հրատարակված գրականության մեջ: Արևմուտքում, ինչպես որ քաղաքական կուսակցության սահմանման պարագայում, հարցին մոտենում են **սահմանադրաիրավական** տեսանկյունից: Հատկանիշների համակարգի մեջ մտցվում են հետևյալ գործոնները՝ «ինչ ձևով է որոշակի քաղաքական կուսակցությունը վերաբերվում պետական իշխանությանը և ինչպես է ընկալում պետության գործառույթները, ինչպիսիք է տնտեսական զարգացման նրա հայեցակարգը՝ մասնավորապես վերաբերունքը մասնավոր սեփականության ինստիտուտի և հարկերի նկատմամբ, ինչ ուշադրություն է նա հատկացնում սոցիալական խնդիրներին և դրանց լուծման մեթոդներ և ճանապարհներ է տեսնում» [6, c.164]: Նման դիրքորոշման հիմնական նպատակը կուսակցության առանձին տիպի վերլուծության միջոցով հասարակական զարգացման գործընթացում և պետության ներսում կուսակցության դերի բացահայտումն է, նրա բնույթի պարզաբանումը: Քաղաքագիտական գրականության մեջ եղած մյուս տեսակետները մեծամասամբ շատ մոտ են այս դիրքորոշումներին, ուստի նպատակահարմար չենք համարում առանձին-առանձին մանրամասնել դրանք և անմիջապես նախընտրում ենք անդրադառնալ միայն այդ հայեցակարգերին: Վերցնենք առաջին հայեցակարգը: Հնարավոր է քաղաքական կուսակցությունները խմբավորել ըստ նրանց էական հատկանիշների համակարգի: Պատասխանը կարող է լինել հետևյալը, իհարկե կարող ենք, բայց ոչ միշտ: Եթե մենք այդ հատկանիշների համակարգով փորձենք տիպավորել կուսակցություններն անընդհատ կարող ենք ընկնել բարդ իրավիճակների մեջ, որովհետև էական հատկանիշներից (գաղափարախոսություն, սոցիալական բնույթ, կազմակերպական կառուցվածք, ֆունկցիաներ և այլն) ոչ բոլորն են, որ հանդես են գալիս միաժամանակ: Հատկանիշների համակարգով կուսակցությունների տիպավորման մեթոդի կիրառումն այնուամենայնիվ գործնականում բավական դժվար է և աննպատակահարմար: Աննպատակահարմար է նաև կուսակցությունների տիպավորման սահմանադրաիրավական մեթոդը, որովհետև այդ բավականին նեղացնում է դասակարգման հնարավորությունների շրջանակը: Միանգամայն պարզ է, որ ոչ բոլոր կուսակցություններն են գործում իրավական պետության ներսում, ոչ բոլոր կուսակցություններն հնարավորություն ունեն ազատ արտահայտել ի-

րենց վերաբերմունքը պետության, տնտեսության, սոցիալական քաղաքականության, հարկային քաղաքականության, հասարակական զարգացման այլ հարցերի վերաբերյալ: Մարտավարական և ռազմավարական նպատակները, ժամանակաշրջանը, գործունեության պայմանները, ազգային զարգացման առանձնահատկությունները, քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների հետ փոխհարաբերություններն ու բազմաթիվ այլ գործոններ էապես ազդում են քաղաքական կուսակցությունների գործելակերպի վրա: Այս պատճառով որոշ դեպքերում հնարավոր է վերը նշված երկրորդ մեթոդով կատարել կուսակցությունների տիպավորում և տիպի վերլուծություն, իսկ որոշ դեպքերում էլ նման մեթոդի կիրառումն ուսումնասիրողին կարող է զցել փակուղային դրության մեջ: Օրինակ, եթե վերցնենք կրոնական փոքրամասնության շահերը պաշտպանող որևիցե կուսակցություն և փորձենք կատարել նրա տիպի վերլուծությունն ըստ պետության, նրա գործառույթների, սոցիալական, հարկային, տնտեսական քաղաքականության նկատմամբ տվյալ կուսակցության դիրքորոշման, կարող ենք մատնվել անհաջողության, որովհետև ելնելով իր ռազմավարական նպատակներից նա կարող է ընդհանրապես չհրապարակել իր տեսակետներն ու չմասնակցել տվյալ խնդիրների շուրջ ծավալված քաղաքական պայքարին:

Այսպիսով ստացվում է, որ վերոհիշյալ երկու մեթոդներն էլ բավականին սահմանափակում են կուսակցությունների տիպավորման հնարավորությունները, չնայած որ իրենց էությամբ դրանք միանգամայն գիտական են:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ, բավականին տարածում են գտել Մաքս Վեբերի առաջադրած սկզբունքները, ըստ որի կուսակցությունները կարելի է խմբավորել.

ա) հաշվի առնելով կուսակցությունների պատմական էվոլյուցիայի ձևերը,

բ) հաշվի առնելով կուսակցությունների նպատակային դրույթները,

գ) հաշվի առնելով դրանց ձևավորման պայմանները:

Առաջին սկզբունքից ելնելով՝ Վեբերը, որպես պատմական տիպեր նշում է Հին Հունաստանի քաղաքական կուսակցությունները, գվելֆների և գիբելինների կուսակցությունները միջնադարյան Իտալիայում, ազնվականական կուսակցություններն Անգլիայում, նոտաբլների քաղաքական ակունքներն ու եվրոպական երկրների զանգվածային կուսակցությունները համընդհանուր ընտրական օրենքի տարածման ժամանակաշրջանում [7, c. 672, 674]:

Երկրորդ սկզբունքով Վեբերն առանձնացնում է **պատրոնաժային (հովանավորչական-խնամակալական) ու գաղափարական կուսակցությունները**: Պատրոնաժային նա համարում է ԱՄՆ-ի երկու կուսակցությունները, որոնք անսկզբունք են, փոխում են իրենց ծրագիրը՝ ձայներ որսալու նպատակահարմարությունից ելնելով: Ըստ Վեբերի՝

նրանք կողմնորոշված են դեպի «պատրոնաժի համար կարևորագույնը համարվող պաշտոնների վրա հսկողության նախընտրական պայքարին» [8, c.156]: Գերմանիայում գոյություն ունեցող կենտրոնամետ կուսակցությունները և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որոնք կողմնորոշված են քաղաքական նպատակներին հասնել արժեքների որոշակի համակարգի վրա, հակառակ ամերիկյան անսկզբունք և մեծապետական կուսակցությունների, նա համարում է գաղափարական կուսակցություններ [8, c.157]:

Վերերյան տեսության մեջ, կուսակցությունների տիպավորման երրորդ սկզբունքը, հիմնվում է նրա կողմից առանձնացված և քաղաքական պատմության համաչափ զարգացումը պայմանավորող «լեզվ-տիմ կարգերի» կամ քաղաքական տիրապետության ձևերի վրա: Վերերը նշում է լեզվտիմության երեք հիմք. լեզալ-արդյունավետ, ավանդական և խարիզմատիկ տիրապետությունները [8, c.158]: Առաջին լեզալ-արդյունավետ տիրապետությունը բնութագրվում է կառավարման արհեստավարժ ապարատի և իրավական նորմերի առկայությամբ, որը ստեղծում է «չանձնավորված կարգեր»: Երկրորդը՝ ավանդականը, հենվում է իշխողի հեղինակության, բարոյականության նշանակության և գոյություն ունեցող կարգերի նկատմամբ սուրբ հավատի վրա: Երրորդ՝ խարիզմատիկ տիրապետությունը հենվում է միայն առաջնորդի հեղինակության, անհատական հատկանիշների և նրա նկատմամբ անձնական հավատարմության վրա:

Քաղաքական տիրապետության տիպերին համապատասխան Վերերը նշում է կուսակցությունների երեք հիմնական տիպ. **լեզալ-իրավական, խարիզմատիկ, ավանդական**: Նրա համոզմամբ լեզալ-իրավական կուսակցությունները գոյություն են ունենում այնտեղ, որտեղ կառավարությունը ձևավորվում է ազատ քվեարկության հիման վրա և օրենսդրությունն հաստատվում է ազատ քննարկումների գործընթացով: Այսպիսի պայմաններում կուսակցություններն իրենցից ներկայացնում են ընտրողների ծայերի հավաքող կազմակերպություններ: Խարիզմատիկ կուսակցությունները ձևավորվում են, երբ առաջնորդի անհատական հատկանիշների շուրջ կարծիքները տարանջատվում են, կամ այն ժամանակ, երբ դրվում է առաջնորդի թեկնածության հարցը:

Ավանդական կուսակցություններն առաջանում են, երբ հասարակության որևէ հատվածը իր դժգոհությունն է արտահայտում առաջնորդի կողմից ավանդական իշխանության իրականացման ձևերի նկատմամբ [8, c.159]: Պետք է նշել, որ կուսակցությունների տիպաբանության վերերյան մեթոդը բավականին անորոշ է: Ստացվում է, որ միևնույն քաղաքական տիրապետության պայմաններում գործող կուսակցությունները բոլորն էլ պատկանում են միևնույն տիպին: Բացի այդ լիարժեքորեն լուսաբանված չէ խարիզմատիկ և ավանդական կուսակցությունների առաջացման նախադրյալները և տրված չէ նրանց հստակ բնութագրումը: Միևնույն ժամանակ քաղաքական տիրապետության երեք հիմնական տիպերին համապատասխան կուսակցու-

յունների երեք տիպերի առանձնացումը Վեբերը համարում է հարաբերական, որովհետև նրա կարծիքով պատմության մեջ հազվադեպ կարող են լինել ինչպես «տիրապետության մաքուր տիպեր», այնպես էլ «կուսակցությունների մաքուր տիպեր», որովհետև իրականում ավելի հաճախ հանդիպում են ձևափոխված և համակցված տիպեր [9]: Ընդհանուր առմամբ պետք է ընդգծել, որ կուսակցությունների վեբերյան տեսությունն ամբողջությամբ շաղկապված է քաղաքական գործընթացի ըմբռնման յուրահատկության հետ: Եթե Կարլ Մարքսը քաղաքական գործընթացը կապում էր տնտեսական զարգացման գործոնների հետ, ապա Վեբերը հենվում է պատմության մեջ տնտեսականի համեմատ քաղաքական գործոնների առաջնայնության դրույթի վրա, երբեմն էլ ընդունում է տնտեսականի և քաղաքականի «զուգահեռականությունը» [10, c.120]:

Քաղաքական կուսակցությունների առաջին գիտական դասակարգումներից մեկն էլ պատկանում է Մորիս Դյուվերժեին: Նա նախանշեց քաղաքական կուսակցությունների երկու հիմնական տիպ՝ **«կադրային կուսակցություններ»** և **«մասսայական կուսակցություններ»**, որոնց միմյանցից տարանջատեց, հիմք ունենալով նրանց կազմակերպական կառուցվածքները: Կադրային կուսակցությունները համեմատաբար փոքրաքանակ են: Նրանք իրենց շարքերում միավորում են պրոֆեսիոնալ քաղաքական գործիչներին, որոնք հենվում են հասարակության վերնախավային շերտերի ֆինանսական օժանդակության վրա: Այս կուսակցություններում համարյա բացակայում են կազմակերպիչ-ակտիվիստները: Հիմնական նպատակը-իշխանության համապետական և տեղական մարմիններում կուսակցական կադրերի տեղավորումն է, տեղերի նվաճումը իշխանական կառույցներում:

Դյուվերժեի կարծիքով կադրային կուսակցությունները հանդիսանում են քաղաքական ակումբների եվոլյուցիայի արդյունք [11, c.116-123]: Այս կուսակցությունների խնդիրն է հավաքագրել ու համախմբել ընտրական տեղամասերի ազդեցիկ մարդկանց, որոնք ընդունակ են իրենց կողմը գրավել առավելագույնս ավելի շատ ընտրողներ, անկախ սոցիալական ծագումից և գաղափարական կողմնորոշվածությունից: Այս տիպին են պատկանում եվրոպական կուսակցությունների մեծ մասը:

Մասսայական (զանգվածային) կուսակցությունները, ըստ Դյուվերժեի, հանդիսանում են համընդհանուր ընտրական իրավունքի հաստատման արդյունք: Դրանք խոշոր կազմակերպություններ են, որոնք ունեն բարդ ներքին կառուցվածք ու գաղափարականացվածության բարձր աստիճան: Իրենց սոցիալական հենարանը նրանք ձևավորում են հասարակության ստորին խավերից: Դյուվերժեն մասսայական տիպի մեջ է դասում կոմունիստական, սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին: Եվ վերջապես կադրային ու մասսայական կուսակցությունների տարբերությունները նա փնտրում է կուսակցական ենթակառուցվածքների ձևերի մեջ, նշելով, որ «Կադրային կուսակցությունները-կոմիտեի վրա հիմնված, ապակենտրոնացված և

թույլ ինտեգրացված կուսակցություններ են, իսկ մասսայականը՝ ավելի հաճախ սեկցիայի վրա հիմնված կուսակցություններ, ավելի կենտրոնացված և առավել ամուր կառուցվածքով» [11, c.122]:

Հենվելով քաղաքական կուսակցությունների տիպերի վերլուծության գործում ժամանակակից քաղաքագիտության կուտակած փորձի վրա, աշխատենք գտնել և ձևակերպել կուսակցությունների տիպավորման այնպիսի մեթոդ, որն հնարավորություն կտա խուսափել փակուղային իրավիճակներից և առավել ճիշտ ու նպատակային կատարել կուսակցությունների խմբավորումը՝ պահպանելով նաև մեթոդի գիտականությունը:

Առաջին հերթին մեր կարծիքով պետք է կատարել սահմանազատում ժամանակակից քաղաքական կուսակցությունների և անցյալի կուսակցությունների միջև: Հասարակությունը, քաղաքական ինստիտուտները հազարամյակներ ձգվող զարգացման ուղի են անցել, որի ընթացքում փոխվել են պետական քաղաքական համակարգերը և նրանց տարրերը: Փոփոխությունների են ենթարկվել հատկապես քաղաքական կուսակցությունները, որոնք հասարակական զարգացման ամեն մի փուլում ունեցել են տվյալ պատմական ժամանակաշրջանին բնորոշ արտահայտչաձևեր և ուրույն հատկանիշներ: Ինչպես կարող ենք նույն չափանիշներով տիպավորել իր խորհրդարանական խմբակցությամբ, կազմակերպական կառույցներով, քաղաքական հատուկ գաղափարախոսությամբ և զանգվածային լրատվամիջոցներով զինված ժամանակակից կուսակցությունը, հունական պոլիսների, Հռոմի սենատի կամ միջնադարյան արիստոկրատական-պալատական կուսակցությունների հետ: Դժվար է համեմատել նաև մոտ անցյալի կուսակցությունները: Օրինակ՝ վերցնենք դարասկզբի բանվորական կուսակցություններն ու ներկայիս էլեկտորալ կուսակցությունները «գավթիր բոլորին» գործելակերպով և այլն: Պատմական ժամանակաշրջանները իրենց խոր հետքն են թողել քաղաքական կուսակցությունների վրա, իսկ վերջին տասնամյակներում կուսակցությունների զարգացման գործընթացում նկատվող միտումներն արմատապես փոխել են նրանց բազմաթիվ հատկանիշները: Հաշվի առնելով այս անվիճելի և ապացուցման կաիրք չունեցող հանգամանքները՝ մենք առաջարկում ենք **առանձնացնել ժամանակակից կուսակցությունների և անցյալի կուսակցությունների տիպաբանությունը:** Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում գիտական շրջանառության մեջ մտցնել «**քաղաքական կուսակցությունների պատմական տիպեր**» և «**ժամանակակից քաղաքական կուսակցությունների տիպեր**» հասկացությունները:

Պատմական տիպերը ի հայտ են եկել քաղաքական կուսակցությունների ծագման և զարգացման (պարտոզենեզի) փուլերի ընթացքում կրելով ժամանակաշրջանի յուրահատկությունն ու պայմանները, որոնք որ ծնել են կուսակցության տվյալ պատմական տիպն ու այդ պատմական տիպի հատկանիշները: Օրինակ՝ բուրժուական հեղափոխությունների դարաշրջանին բնորոշ էին բուրժուահանրապետական և

ազնվականական-միապետական կուսակցությունները: 19-րդ դարի երկրորդ կեսին ասպարեզ իջան զանգվածային կուսակցությունները՝ լիբերալ, պահպանողական, սոցիալ-դեմոկրատական, իսկ 20-րդ դարի առաջին տասնամյակներին՝ կոմունիստական, ֆաշիստական կուսակցությունները և այլն: Պատմական տիպերի բնութագրումն առավել ծավալուն և առանձին ուսումնասիրության խնդիր է, բայց գործնական-կիրառական առումով քաղաքական գիտությունների համար առավել կարևոր է արդի կուսակցությունների տիպաբանության մեթոդների ու չափանիշների մշակումը:

Ժամանակակից կուսակցությունների դասակարգման հիմքում առաջարկում ենք դնել **առանձին չափանիշները**: Ինստիտուցիոնալացման փուլում քաղաքական կուսակցությունների գործառույթների թվի աճը և քաղաքական համակարգում նրանց դերի բարձրացումը ծնունդ են նոր կազմակերպական, քաղաքական, գաղափարական, սոցիալական և այլ հատկանիշներ: Կուսակցություններին բնութագրող հատկանիշների բազմության ի հայտ գալը թելադրում է, որ այս քաղաքական ինստիտուտը տիպավորվի ըստ որոշակի չափանիշների: **Այս դեպքում մեկ կուսակցությունն ամեն մի չափանիշին համապատասխան կարող է դասվել որոշակի տիպի մեջ**: Եթե, օրինակ, բուրժուական հեղափոխությունների դարաշրջանի կուսակցությունների տիպաբանության հիմքում որպես չափանիշ դրվում է նոր հասարակարգի և պետական կառավարման ձևի նկատմամբ վերաբերմունքը, ըստ որի էլ առանձնացվում է երկու հիմնական տիպ՝ բուրժուա-հանրապետական և ազնվականական-միապետական և դրանով կարծես հարցը լուծվում է, ապա ժամանակակից փուլում քաղաքական **կուսակցությունները իրենց մեջ կարող են մարմնավորել միանգամից մի քանի տիպեր**:

Այստեղ պետք է ընդգծենք, որ տիպավորման չափանիշները բխում են կուսակցությունների բնութագրական հատկանիշներից, որոնք նրան տարբերում են քաղաքական համակարգի մյուս ինստիտուտներից: Ուստի և դրանք մեծամասամբ վերաբերվում են կազմակերպական ձևերին, գործելակերպին, սոցիալական կողմնորոշվածությանը, գաղափարախոսությանը, իշխանական կառույցներում ունեցած դերին և տեղին, քաղաքական պայքարի մեթոդներին և այլն: Այստեղից առաջանում են նոր խնդիրներ, հրատապ է դառնում կուսակցությունների դասակարգման սկզբունքների և չափանիշների ճիշտ որոշումը, որը պետք է լինի առավելագույնս համապարփակ և ընդգրկի կուսակցությունների էական հատկանիշներից բխող հիմնական չափանիշները:

Սա բավականին բարդ խնդիր է, որովհետև համակարգված ու մշակված մոտեցում այս հարցում դեռևս չկա: Որոշ հեղինակներ տիպավորման համար հիմք վերցնում են 2-3, ոմանք էլ՝ մինչև 30 սկզբունք:

Չենվելով նշված հեղինակների քաղաքական կուսակցությունների տիպաբանության ուղղությամբ արդեն կատարված հսկայական աշխատանքների վրա՝ փորձենք հնարավորին չափ հստակ ու համա-

կարգված մոտեցմամբ ձևակերպել կուսակցությունների տիպաբանության չափանիշները: Մեր կարծիքով, դասակարգման առավել բարձր գիտականությունն ապահովելու համար տիպաբանության չափանիշներն անպայման պետք է հիմնավորել:

ա) կուսակցության հատկանիշներով,

բ) գործառույթներով,

գ) գործելակերպով:

Մինևույն ժամանակ անհրաժեշտ է հիերարխիկ ձևով դասավորել դրանք, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գոյություն ունեն կարևոր և երկրորդական հատկանիշներ և գործառույթներ: Այսպիսի հայեցակարգից ելնելով քաղաքական կուսակցությունների տիպաբանության առաջնային չափանիշները կարող ենք համարել **կազմակերպական կառուցվածքները, սոցիալական կողմնորոշվածությունը, գաղափարաքաղաքական ուղղվածությունը:**

Երկրորդային չափանիշների մեջ ընդգրկվում են **վերաբերմունքն իշխող հասարակարգի նկատմամբ, վերաբերմունքը պետական կառավարման ձևի նկատմամբ, քաղաքական համակարգում զբաղեցրած տեղը ու դերը, տեղը քաղաքական դաշտում, քաղաքական գործունեության միջոցներն ու բնույթը, էթնիկական, կրոնական, սեռատարիքային գործոնների ազդեցությունն ու նշանակությունը, կրոնական գործոնի առկայությունը, վերաբերմունքը քաղաքական ռեժիմի (վարչակարգի) նկատմամբ, վերաբերմունքը հասարակական առաջընթացի նկատմամբ, գործունեության տարածքային ընդգրկումը, կուսակցության առաջնորդի և շարքային անդամների փոխհարաբերությունները, կուսակցական ղեկավարման ձևն ու ոճը, կուսակցական համակարգը, որն ուղղակիորեն պայմանավորում է որոշակի տիպերի առաջացումը:**

Պետք է նշել նաև առաջնային ու երկրորդային սկզբունքով չափանիշների բաժանման հարաբերական բնույթը և փոխկապակցվածությունը: Օրինակ՝ որոշակի գաղափարաքաղաքական ուղղվածությունը կարող է արդեն նախապես պայմանավորել կուսակցության վերաբերմունքը իշխող հասարակարգի, պետական կառավարման ձևի նկատմամբ ու որոշել նրա տեղը քաղաքական դաշտում: Եվ ընդհակառակը, ընդդիմադիր կամ իշխանամետ կեցվածքը կարող է կանխորոշել գաղափարաքաղաքական ուղղվածությունը և այլն:

Список литературы

1. **Нарский И. С.**, Давид Юм, М.: 1973.
2. **Кола Доминик.**, Политическая социология (пер. с франц.). – М.: Изд. «Весь Мир», 2001.
3. Политология. Словарь-справочник. **М. А. Василик, М. С. Вершинин** и др. – М.: Гардарики, 2000.
4. **Соловей Т. Г.**, Политические партии, общественные организации и движения. В кн. Политология, под ред. **С. В. Решетникова.** – Мн.: ТетраСистемс, 2000.
5. Политология. Под ред. **М. А. Василика.** – М.: Юристь, 2000.
6. **Даниленко В. Н.**, Политические партии и партийные системы. В кн. Конституционное право зарубежных стран.- М.: изд. НОРМА, 2000.
7. **Вебер М.**, Избранные произведения.- М.: 1990.
8. **Железняк Н. Н., Моргайлик М. А.**, Организационная структура партии в политической социологии К.Маркса и М.Вебера. // Вестник МГУ, Социология и политология, 2001, №3.
9. **Макаренко Б. П.**, Вера, власть и бюрократия: Критика социологии М.Вебера – Ростов-на-Дону, 1988.
10. **Ожиганов Э. Н.**, Политическая социология М.Вебера. Критический анализ. – М.: 1986.
11. **Дюверже М.**, Политические партии. – М.: Академический Проект, 2000.

GARIK KERYAN

Doctor of Sciences (Political)

THE METHOD AND THE CRITERIAS OF TYPOLOGY OF POLITICAL PARTIES

The political thought has attempted to classify the political parties since 18 century, according to certain universal characteriistik features. The contemporary political science does not have a united system of typology of parties. Common position does not exist. Western politology defines concept «typ of political party» from constitutional-juridical position. The typology system for Max Weber and Moris Duverje is widely spread in coneporary politology. We find out that typology system is not of full value, and we offer to separate the classifikatation method of modern parties from classification method of historical parties. We offer to classify historical parties by universal system of signes, and modern parties typology to carry it out based on special criteria.

Primary criteria are the organization structure, the social orientation and the ideological-political direktion. Secondary criteria are the attitude towards prevailing social systems, state authority and form of governing. As well as the means and nature of political activities and scales of territorial activities and so forth.

ՍՈՖՅԱ ԱՎԱԳՅԱՆ

*ՀՀՊԿ ակադեմիայի
հոգեբանության ամբիոնի ասպիրանտ*

**ԻՈՍԻՖ ՍՏԱԼԻՆԻ ԱՆՁԻ ԱՎՏՈՐԻՏԱՐ ԳԾԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

1879թ. դեկտեմբերի 21-ին Թիֆլիսից մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորությամբ գտնվող Գորի քաղաքում Վիսսարիոն և Եկատերինա Ջուղաշվիլիների ընտանիքում ծնվում է նրանց որդին՝ Իոսիֆը: Նրա ծնողների վերաբերյալ պահպանվել են կցկտուր տեղեկություններ: Հայտնի է, որ և՛ Վիսսարիոն Ջուղաշվիլին, և՛ Եկատերինա Գելաձեն ծնվել են ճորտ գյուղացիների ընտանիքում և ազատությունը ստացել են միայն 1864թ. Վրաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո: Վիսսարիոն և Եկատերինա Ջուղաշվիլիի չորս զավակներից ողջ մնաց միայն վերջինը՝ Իոսիֆը, որի ծնունդը որդեկրորույս մորը նոր հույսեր ներշնչեց և նորովի իմաստավորեց նրա կյանքը:

Իոսիֆի կյանքի վաղ շրջանի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պարունակում նրա ընկերոջ՝ Իոսիֆ Իրենաշվիլիի Բեռլինում հրատարակված հուշերը¹: Նրանք ծանոթացել են դպրոցի բակում ընթանալու մրցումների ժամանակ, երբ Սոսո Ջուղաշվիլին Սոսո Իրենաշվիլիին տապալեց գետին՝ բռնելով նրա թիկունքից այն պահին, երբ վերջինս իր շորերից փոշին էր թափ տալիս: Իրենաշվիլիի նկարագրությամբ Սոսոն նիհար, բայց ամրակազմ տղա էր՝ համառ և անվախ հայացքով, քայլում էր հպարտ և հանդգնորեն քիթը ցցած: Անհոգ չէր, ինչպես հասակակիցները, միշտ առույգ էր և ժամանակ առ ժամանակ համառորեն փորձում էր բարձրանալ լեռները կամ ինչքան հնարավոր է հեռու նետել քարը: Առանձնանում էր շրջապատի նկատմամբ անտարբերությամբ, նրան երբեք չէր հուզում իր ընկերների ուրախությունը կամ տխրությունը, ոչ ոք երբեք նրան չէր տեսել լացելիս: Իրենաշվիլին գրում է. «Նրա համար մեծագույն ուրախությունը հաղթանակ տանելու և վախ ներշնչելու մեջ էր... Նա միայն մեկ մարդու էր իսկապես սիրում՝ իր մորը: Որպես տղա և պատանի՝ նա լավ ընկեր էր նրանց համար, ովքեր ենթարկվում էին նրա իշխանական կամքին» [13, էջ 5-6]: Սոսո Ջուղաշվիլին իր տարեկիցների համեմատ զարգացած, ընդունակ, շարժուն երեխա էր և, ինչպես բոլոր երեխա-

¹ Իրենաշվիլին Ջուղաշվիլիի հետ սովորել է Թիֆլիսի թեմական դպրոցում: Հետագայում նա դարձավ մենշևիկ, և նրանք գնացին տարբեր ճանապարհներով: Հեղափոխությունից հետո Իրենաշվիլին դասավանդում էր թիֆլիսյան դպրոցներից մեկում, իսկ 20-ական թ.թ. սկզբներին արտագաղթեց:

ները, սիրում էր չարածճիություններ: Նա ուներ լավ ձայն և երգում էր եկեղեցու դպրոցական երգչախմբում: Մանուկ հասակում ջրծաղիկի հետևանքով նրա դեմքը պատվել էր ցանով: Սոսոն ապրել է նաև իր «տղայական» արկածները: Մի անգամ 10 կամ 11 տարեկան հասակում, եկեղեցական տոնի կապակցությամբ գետի ափին հավաքված ամբոխի մեջ ներխուժեց կատաղորեն սլացող ֆայտոնը: Հարվածի հետևանքով տղան կորցրեց գիտակցությունը և ստացած վնասվածքներից վերականգնվեց միայն երկու շաբաթ անց: Ենթադրվում է, որ հենց այդ ժամանակ արյան վարակման հետևանքով ձախ արմունկային հողը սկսեց վատ ծալվել: Տարիներ անց Ստալինը իր քենուն պատմել էր, որ 1916թ. հավաքագրման ժամանակ ֆիզիկական այդ թերության պատճառով իրեն ճանաչեցին ծառայության համար ոչ պիտանի:

Իրենաշվիլին Եկատերինա Ջուղաշվիլին ներկայացնում է իբրև առաքինի և աշխատասեր կնոջ, որը շատ էր կապված որդուն: Նա անգրագետ, բայց խորապես հավատացյալ կին էր: Սովորաբար կրում էր վրացական ավանդական հագուստ, վայելում էր համայնքի հարգանքը և, հին ավանդույթի համաձայն, իր կյանքը նվիրել էր աստծուն, ամուսնուն և որդուն ծառայելուն: Ստալինի դստեր՝ Սվետլանա Ալիլուևայի հուշերից տեղեկանում ենք, որ Ստալինը ողջ կյանքի ընթացքում իր մոր մասին բարձր կարծիք էր ունեցել՝ նրան համարելով թեև կրթություն չստացած, բայց խելացի կին: Նա պատմում էր, որ երեխա ժամանակ մայրը իրեն ծեծում էր, այնպես, ինչպես և Վիսսարիոնին, երբ նա խմում էր: Մայրը ցանկանում էր, որ որդին դառնա եկեղեցական և միշտ ափսոսում էր, որ այդպես չեղավ: 1935թ., երբ Ստալինն այցելեց մորը, նա ասաց. «Բայց ափսո՛ւ, որ դու այդպես էլ չդարձար քահանա»: Իրեն հայտնի փաստերի հիման վրա Սվետլանա Ալիլուևան հանգեց այն եզրակացության, որ Եկատերինան պոլիտանական (մաքրակրոնական) բարոյականությամբ, խստաբարո և վճռական, համառ և պահանջկոտ կին էր, և այս բոլոր հատկանիշներն անցել էին որդուն, որն ավելի շատ նման էր նրան, քան հորը [1, էջ 5]:

Այլ նկարագրությամբ է ներկայանում Իոսիֆի հայրը՝ Բեսո Ջուղաշվիլին: Ստալինի ժամանակակիցները նշում էին, որ երիտասարդ տարիներին Սոսոն շատ նման էր հորը: Հայտնի է, որ Բեսոն խստապահանջ, բռնկվող մարդ էր, սիրում էր խմել ու, վերջին հաշվով, մահացավ պանդոկում ծեծկռտուքից: Եթե Սոսոն մոր հետ որոշակի կապվածություն ուներ, ապա հոր նկատմամբ բոլորովին այլ զգացմունքներ էր տածում: Իրենաշվիլին պատմում էր, որ հարբած վիճակում Վիսսարիոնը հաճախ դաժան ծեծի էր ենթարկում որդուն, որի պատճառով աստիճանաբար աճում էր Սոսոյի հակակրանքը հոր նկատմամբ: Ապրելով Վիսսարիոնի դաժան արարքներից մշտական վախի մեջ, տեսնելով, թե ինչպես էր գիշեր-ցերեկ մայրն աշխատում, քանի որ հայրը իր ամբողջ վաստակը գինուն էր տալիս՝ Սոսոն աստիճանաբար սկսեց առել այդ մարդուն և հնարավորինս խուսափել նրա-

նից: Սոսոյի բնավորության մեջ սկսեց արտահայտվել ռիսկակալությունը (ինչը հետագայում դրսևորվեց նրա քաղաքաքական գործունեության ընթացքում). *Նա սկսեց ընթրստանալ հայրական իշխանության դեմ*: Այս կապակցությամբ Իրենմաշվիլին գրում է. «Անարդար դաժան ծեծերը տղային դարձրին նույնպիսի խստաբարո և անսիրտ մարդ, ինչպիսին նրա հայրն էր: Քանի որ այն մարդիկ, ովքեր իրենց ուժի կամ ավագության շնորհիվ օժտված էին այլ մարդկանց նկատմամբ իշխանությամբ, նրա պատկերացմամբ նման էին իր հորը, նրա մեջ շուտով զարգացավ քինախնդրության զգացում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կարող էին որևէ իշխանություն ունենալ իր վրա: Դեռ պատանի տարիքից ռիսկակալական մտադրությունների իրականացումը նրա համար դարձավ նպատակ, որին ուղղված էին նրա բոլոր ջանքերը» [13]: 1890թ., երբ Սոսոն 11 տարեկան էր, հարբած ծեծկռտուքի ժամանակ դանակահարությունից մահացավ նրա հայրը, և, ինչպես Իրենմաշվիլին էր գրում. «Հոր վաղաժամ մահը երեխայի վրա որևէ տպավորություն չգործեց: Նա ոչինչ չկորցրեց այն մարդու մահով, որին պետք է կոչեր հայր»: Վիսսարիոնի արարքներից տառապում էր նաև Եկատերինան: Սվետլանա Ալիուևան գրում էր, որ մայրը ծեծում էր տղային, իսկ նրան ծեծում էր անուսինը: Մի անգամ, փորձելով պաշտպանել մորը հորից, Սոսոն, նրա վրա շարտելով դանակը, փախավ և թաքնվեց հարևանների տանը: Ծեծը նրա համար դարձավ առավել արժանի և արդար պատիժ, որին, ըստ նրա, պետք է արժանանային մեղավորները: Այսպես, 1915թ. սիբիրյան աքսորից Լենինին ուղարկած նամակում նա գրում է. «Ոչ ոք չկա, որ նրանց ջարդի, զրոզը տանի: Մի՞թե նրանք այդպես էլ կմնան անպատիժ: Ուրախացրե՞ք ինձ և հայտնե՞ք, որ շուտով կհայտնվի մի մարմին, որտեղ նրանց մոռոթները պիտի մտրակեն, այն էլ, ոնց որ պետք է, առանց հոգնության» [7, էջ 167]:

Այսպիսով, Սոսոն մեծացավ ընտանեկան սուր հակամարտության, ծնողների միջև թշնամական հարաբերությունների պայմաններում, ինչը խորը հետք թողեց նրա հոգեկանի ձևավորման վրա: Բացի այդ ծնողների միջև տարածայնություններ կային նաև որդու ապագայի վերաբերյալ: Մասնավորապես, ինչպես արդեն նշել ենք, մայրը ցանկանում էր, որ նա դառնա քահանա, մինչդեռ հայրը բոլորովին այլ ծրագրեր ուներ որդու համար: Նա ուզում էր, որ իր որդին դառնա կոշկակար և ընտանեկան բազմաթիվ վեճերի ժամանակ հաճախ ասում էր կնոջը. «Դու ուզում ես, որ իմ որդին դառնա միտրոպոլիտ: Երբեք չես տեսնի դա: Ես կոշկակար եմ, և իմ որդին էլ պետք է դառնա կոշկակար, համ էլ միևնույնն է, նա կդառնա կոշկակար»: Եվ նա փորձեց իրականացնել իր մտադրությունը՝ որդուն տանելով ուսումնարանից, ուր նա 1888թ. արդեն սովորում էր, և նրան տեղավորեց Ադելխանովների գործարանում, որտեղ սակայն Սոսոն երկար չաշխատեց: Մայրը, չցանկանալով հաշտվել այդ մտքի հետ, այնուամենայնիվ, դարձյալ որդուն բերում է Գորի և նորից տեղավորում ուսումնարանում: Սոտավորապես այս մի-

ջադեպից մեկ տարի անց մահացավ նրա հայրը, որի մահը, ամենայն հավանականությամբ, երեխայի համար դարձավ մի տեսակ փրկություն և ազատություն ստանալու հնարավորություն, թեև ականատեսները վկայում են, որ այդ ժամանակ նրա բնավորության մեջ արդեն ի հայտ էին եկել թշնամանքի, չարացածության, ոխակալության գծեր, որոնք մեծավ մասամբ բնորոշ էին նաև նրա հորը:

Կենսագիրները նշում են, որ նա բացառիկ կապվածություն ուներ մոր հետ, իրեն նույնացնում էր նրան և աստիճանաբար իր մեջ ներառեց մոր մտածելակերպը, նրա բնավորության գծերը, ինչը մեծ ազդեցություն թողեց նրա անձի ձևավորման վրա: Ֆրեյդն այս երևույթի մասին գրում է. «Տղամարդը, որն իր մոր աներկբա սիրելին է, իր ամբողջ կյանքում պահպանում է հաղթողի զգացումը, հաջողության մեջ այն վստահությունը, որը և հաճախ էլ բերում է իսկական հաջողություն» [11, էջ 37]: Այս դեպքում մենք գործ ունենք մոր կողմից երեխայի նկատմամբ բացառիկ հիացական վերաբերմունքի հետ, երբ մայրը իր բոլոր նպատակները և իր սեփական կյանքի իմաստը կապում է իր երեխայի հետ, նրա մեջ է տեսնում այն բոլոր ցանկությունների և նվիրական երազանքների իրականացնողին, որոնց այս կամ այն պատճառով նա հասնել չկարողացավ: Նման վերաբերմունքը երեխայի նկատմամբ, մեր կարծիքով, ինքնաիրականացման սուրոգատային ձև է: Բացի այդ չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Սոսոն ընտանիքի միակ զավակն էր, և այդ պատճառով, որպես երեխա՝ նա ընտանիքում առհասարակ մրցակցությունից դուրս էր: Նա մոր սիրո և գուրգուրանքի միակ առարկան էր, ընդ որում, այնպիսի սիրո և հոգատարության, որը բացարձակացնում էր, իդեալականացնում նրա անձը, ինչի հետևանքով հետագայում Սոսոն ինքը սկսեց իրեն իդեալականցնել, նրա մեջ ձևավորվեց «հաղթողի զգացում», հաջողության մեջ վստահություն, ինչը հետագայում նրան այդպես էլ հնարավորություն չտվեց լսելու որևէ առարկություն կամ քննադատություն ոչ միայն սեփական անձի, այլև քաղաքական ժրագրերի և որոշումների ընդունման վերաբերյալ: Մեր այս կարծիքը հիմնավորվում է նաև Ադլերի կողմից առաջ քաշած «միակ երեխայի առանձնահատկությունների» դրույթով [2]:

Այսպիսով, Սոսոն սկսեց ինքն իրեն համարել մարդ, որը պարզապես պարտավոր է գերազանցել ուրիշներին ցանկացած հարցում, լինել դա տղայական կռիվ, ուսում, թե այլ նախաձեռնություն, և, ինչպես կտեսնենք նրա քաղաքական գործունեությունը քննարկելիս, սա հետագայում դարձավ նրա առանցքային անձնային գծերից մեկը: Այստեղ պետք է նշենք նաև, որ թեև որդուն փոխանցվեցին նրա ուժերի նկատմամբ մոր վստահությունն ու հավատը, այնուամենայնիվ, գործնականում նրա՝ ուսման մեջ դրսևորած առաջադիմությունը և մարդկանց վրա ներազդելու նրա ընդունակությունները պրակտիկ հիմք հանդիսացան այդ վստահության ամրապնդման համար: Արդեն ընտելացած լինելով մոր հիացական վերաբերմունքին՝ տարիների ընթացքում նման վերաբերմունքը նրա համար դարձավ սովորական ու նաև՝

պարտադիր. Ես ոչ միայն ակնկալում էր հիացական վերաբերմունք, այլև ձգտում էր արժանանալ նման վերաբերմունքի՝ հաճախ միջոցների մեջ ընտրություն չկատարելով: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ վաղ մանկության տարիներին հոր վերաբերմունքը նրա մեջ ձևավորեց անհաջողությունից խուսափելու որոշակի շահադրդում՝ ուրիշների իշխանությունից խուսափելու համար շարունակ բարձրանալ, հասնել փառքի և իշխանության այն գագաթին, որից այն կողմ այլևս չլինի որևէ ուժ, որ կարողանա իշխել նրա վրա և որևէ ձևով բռնանալ նրա կամքին: Դրա համար ես ինքը սկսեց իրեն իդեալականացնել, իր եսասիրության սնուցման համար իբրև մշտական աղբյուր ունենալով մոր բացառիկ վերաբերմունքը, իսկ արտաքին միջավայրում հաճախ նման վերաբերմունք չգտնելով՝ ըմբոստանում էր և սկսում դիմել բանասրկությունների: Այս ամենը հաստատվում է ուսումնարանում դրսևորած նրա վարքով և այն համառությամբ, որով ես փորձում էր ուսման մեջ լինել առաջինը: Ականատեսների վկայությամբ հենց սկզբից ես իրեն դրսևորեց իբրև վերին աստիճանի ինքնավստահ, ամեն ինչում սեփական իրավացիության համոզմունքով և ուրիշներից տարբերվելու պահանջմունքով անհատ: Ուսումնարանի նրա նախկին ընկերներից մեկը հետագայում հիշում է. «Նա դասերին միշտ պատրաստ էր, միայն թե նրան հարցնեին... Նա միշտ ցուցադրում էր իր բացառիկ պատրաստվածությունը և հանձնարարությունները կատարելիս իր կոկիկությունը: Ոչ միայն դասարանում, այլև ամբողջ ուսումնարանում համարվում էր լավագույն աշակերտներից մեկը: Դասերին նրա ամբողջ ուշադրությունը սևեռված էր նրան, որ բաց չթողներ որևէ բառ, որևէ հասկացություն: Նա ամբողջությամբ դառնում էր լսողություն, ես, որ սովորական ժամանակ աշխույժ, շարժուն և ժիր Սոսոն էր» [6, էջ 41]: Ասում էին նաև, որ Սոսոյի հաջողությունները ուսումնարանում սրեցին հարուստ և աղքատ ընտանիքներից երեխաների հարաբերությունները:

1894թ. 15-ամյա Սոսո Ջուղաշվիլին ստանում է գերազանցության վկայագիր, ինչն այդ ժամանակ առհասարակ հազվադեպ էր տրվում աղքատ ընտանիքների երեխաներին: Նրա վարքից երևում էր, որ ես վճռականորեն որոշել էր առաջադիմել, ընդ որում, *առաջադիմել ամեն ինչում*, լինել առաջինը և լինել մրցակցությունից դուրս: Միշտ վստահ լինելով իր իրավացիության մեջ՝ ես երբեք չէր հրաժարվում արդեն մեկ անգամ ասածից: Ականատեսներից մեկի խոսքերով՝ մի անգամ ուսուցչի այն հարցին, թե ինչքան է Սանկտ Պետերբուրգի և Պետերհոֆֆի միջև տարածությունը, Սոսոն տվեց սխալ պատասխան՝ շարունակելով պնդել սեփական կարծիքը, իսկ երբ ուսուցիչը սկսեց նրան սպառնալ և ներողություն պահանջել, Սոսոն լռեց, իսկ նրա աչքերն արնակալվեցին և լցվեցին զայրույթով: Մեկ ուրիշ անգամ, երբ ավագ աշակերտների խումբը ուսումնարանի վերակացուի հետ գնացել էր քաղաքից դուրս, Սոսոն առաջինը թռավ առվակից այն կողմ, իսկ երբ աշակերտներից մեկը իր մեջքը դեմ արեց վերակացուին, որպեսզի

նրան օգնի անցնել առվակը, Սոսոն ասաց. «Դու է՞ջ ես, ինչ է: Ես աստծուն էլ դեմ չի անի իմ մեջքը, ուր մնաց՝ թե վերակացուին» [8, էջ 18]: Այստեղ հետաքրքիր հարց է առաջանում, թե ինչու՞ է հոգևոր ուսումնարանի աշակերտը, որը խորությամբ ուսումնասիրում է աստվածաբանությունը, և, առավել ևս, որի մայրը խորապես հավատացյալ կին է, ու որի ազդեցությունը որդու վրա զգալի է, արդեն այդ տարիքում չի ընդունում նույնիսկ աստծո մեծությունը և առավելությունը իր անձի նկատմամբ: Կարելի կարծել, որ արդեն այս տարիքից նրա մեջ արմատավորված սեփական ես-ի բացառիկության զգացումը ձեռք էր բերել որակապես նոր ուղղվածություն, այսինքն՝ ըմբոստությունն իրենից վեր կանգնած որևէ ուժի նկատմամբ այլևս չի կարող դիտվել իբրև սեփական անձի ազատության և ինքնուրույնության պաշտպանություն, այն արդեն դրսևորվում է իբրև սեփական անձի անգերազանցելիության մեջ վստահության զգացում: Սա արտահայտվում է նաև աստծո նկատմամբ նրա վերաբերմունքում: Եթե պատրիարխալ կրոններում աստված ներկայանում է իբրև հայր, որին պետք է ենթարկվել աներկբայորեն, որի պատգամներն ու պատվիրանները չկատարելու համար պատիժն անխուսափելի է, այսինքն՝ աստծո իշխանությունը բացարձակ է և կասկածի տակ առնվել չի կարող, ապա այս դեպքում աստծո գոյությունը մերժելը մենք չենք կարող դիտել իբրև գաղափարական հանդգնում, այլ ավելի շուտ այն դառնում է ռացիոնալացում՝ մեկ այլ պաշտպանական կառուցակարգ, որով փորձ է արվում հիմնավորել առհասարակ մարդուց վեր կանգնած որևէ իշխանության մերժումը:

Սրանով կարելի է հանգել այն եզրակացության, որ, մեծանալով ընտանեկան ծանր պայմաններում, որտեղ բացակայում էր ներդաշնակությունը, ծնողների միջև բացարձակ անհարգալից հարաբերությունները զուգորդվում էին հոր շարունակական հարբած արարքներով, ծեծով, որին ենթարկվում էին և՛ որդին, և՛ մայրը, հոր կամայականություններով, որոնց դեմ անզորությունը երեխայի մեջ ձևավորեց ոչ միայն ուխակալություն, դաժանություն, կոպտություն, այլև հայրական իշխանության դեմ ըմբոստություն: Սա հետագայում վերածվեց առհասարակ ցանկացած իշխանության դեմ հիվանդագին պայքարի, որին նպաստեց նաև մոր կողմից նրա անձի բացարձակացումը, ինչը նրա մեջ հետագայում դարձավ հանդգնում և ոչ միայն կյանքի նպատակ, այլև գոյության ինքնանպատակ՝ վեր կանգնել մարդկային ցանկացած էակից, չունենալ որևէ ասպարեզում իրեն հավասարը, **դառնալ իշխանություն**: *Դրա համար անհրաժեշտ էր մերժել նաև աստծո գոյությունը:*

Շարունակելով Սոսո Ջուղաշվիլիի ուսումնառության տարիների վերլուծությունը՝ պետք է անդրադառնանք նաև այդ տարիներին նրա գրական նախասիրություններին: Ուսումնարանից դուրս պատանիները տարված էին վրաց գրականության ընթերցանությամբ: Առաջին գիրքը, որը Սոսոն կարդաց, Դանիել Չոնկաձեի «Սումարի ամրոց» վեպն էր, սակայն նրա վրա մեծ տպավորություն գործեց հատկապես Ալեքսանդր Կազեբգիի «Հայրասպան» վեպը: Այս վեպում նկարագր-

վում են 1845թ. լեռնցիների պայքարը ռուսական ջոկատների դեմ: Վեպի գլխավոր հերոսներն են գյուղացի երիտասարդ զույգը՝ Իագոն և Նունուն, որոնց շարունակ բաժանում է ճակատագիրը, և նրանց հավատարիմ ընկերը՝ Կոբան, որը փորձում է ներդնել իր ամբողջ կարողությունը, քաջությունը, պայծառ խելքը նրանց օգնելու համար: Վերջում Իագոն սպանվում է, Նունուն մահանում է, երբ նրան մեղադրում են հարազատ հոր սպանության մեջ, և միայն Կոբային է հաջողվում փրկվել: Վերջաբանում հնչում է Կոբայի վրեժի կրակոցը, և մահացու վիրավոր Գիրգուլան խոստովանում է իր բոլոր չարագործությունները: Ահա գլխավոր հերոսի՝ անվախ և սակավախոս Կոբայի մեջ Սոսո Ջուղաշվիլին տեսավ այն հերոսին, ում նա ուզում էր նմանվել, ում անունը և կերպարը համապատասխանում էին նրա՝ իր մասին սեփական պատկերացումներին: Այս մասին Իրեմաշվիլին գրում է. «Սոսոյի իդեալը և երազանքների առարկան Կոբան էր... Կոբան Սոսոյի համար դարձավ աստված և նրա կյանքի իմաստը: Նա կուզեր լինել երկրորդ Կոբա, մարտիկ և հերոս, հռչակավոր, ինչպես վերջինս: Նրա մեջ Կոբան պետք է հարություն առներ: Այդ պահից սկսած՝ Սոսոն իրեն սկսեց անվանել Կոբա և պահանջել, որպեսզի մենք էլ նրան այդպես կոչեինք: Սոսոյի դեմքը փայլում էր ուրախությունից և հպարտությունից, երբ մենք նրան Կոբա էինք կանչում» [13, էջ 32]: Ստալինի հոգեբանական կերպարը վերլուծելու համար կարևոր է պարզել, թե ինչու՞ Սոսոն նմանակման համար ընտրեց հենց այդ կերպարը, ի՞նչն էր, որ Կոբայի մեջ գրավեց նրան: Կոբան վեպում ներկայանում է իբրև լռակյաց, ուժեղ, անվախ ասպետ, դիպուկ հրաձիգ, ճարպիկ և հաղթող կերպար: Այս հատկանիշները, իհարկե, կգրավեն այդ տարիքում ցանկացած երեխայի, ով ցանկություն ունի իրեն հերոս երևակայել: Սակայն պետք է լինի մեկ այլ հատկանիշ, որով Սոսոն արդեն այդ տարիքում ընդհանրություններ է գտնում իր և Կոբայի միջև: Ամերիկացի հայտնի քաղաքագետ պրոֆեսոր Ռոբերտ Տակերը նման ընդհանրություն է համարում վրեժխնդրությունը, մասնավորապես, նա գրում է. «Բայց Կազբեգի պատմության մեջ Կոբան ի հայտ բերեց ևս մեկ հատկանիշ, որը, անտարակույս, նրան Սոսո Ջուղաշվիլիի համար ավելի գրավիչ դարձրեց. նա հանդես է գալիս իբրև վրիժառու» [10, էջ 84]: Եվ իսկապես, վրիժառության թեման ամբողջովին ողողել է վեպը: Կոբան ցանկանում է ոչ միայն վրեժ լուծել անմիջական շահագործողներից՝ Գիրգուլայից և մյուսներից, այլև ռուսական իշխանություններից, որոնք սատարում էին նրանց: Շամիլին ծառայելու մեջ նա տեսնում է աստժուց տրված հնարավորություն՝ մասնակցելու վրեժխնդրության հավաքական ակտին: Եվ այս վեպը, Սոսոյին տալով իդեալական հերոսի կերպարը, միաժամանակ նրան համոզեց, որ «վրեժխնդրության տրիունֆը» արժանի գործ է, ինչին կարելի է նվիրել ողջ կյանքը: Եվ վերջապես, այստեղ մեծ տեղ ունի նաև վեպում առկա սոցիալական բախումը հարուստ վերնախավի և ճորտ գյուղացիների միջև: Եթե հի-

չենք Սոսոյի ծագումը, ապա զարմանալի ոչինչ չենք գտնի այս վեպին նրա համակրանքի մեջ:

1894թ. Սոսո Ջուղաշվիլին ընդունվում է Թիֆլիսի հոգևոր ճեմարան, ուր զորանոցային կարգապահություն էր իշխում, և ունկնդիրները ցանկացած զանցանքի համար խստորեն պատժվում էին:

Հենց առաջին օրվանից Սոսոն չսիրեց ճեմարանը: Արձակուրդներին, Գորիում եղած ժամանակ, իր ծանոթներից մեկին նա դժգոհություն է հայտնել ճեմարանի կարգերից: Շուտով իր ընկերների հետ նա մասնակցեց երիտասարդ սոցիալիստների ընդհատակյա խմբակի ստեղծմանը: Այդ ժամանակ փոխվեց նաև ուսման նկատմամբ նրա վերաբերմունքը (գտել էր գործունեության այնպիսի ասպարեզ, որտեղ խորը գիտելիքներ պետք չէին): Այլևս առաջվա նման նա չէր ձգտում առաջադիմել բոլոր առարկաներից՝ բացի քաղաքացիական պատմությունից և տրամաբանությունից: Սակայն նրա մեջ չմարեց առանձնամալու, ընդգծվելու պահանջմունքը: Հերոս դառնալու իր ցանկությունը նա տեղափոխեց այլ ոլորտներ, որոնք էին՝ սոցիալիստական ինքնակրթությունը և հետագայում նաև հեղափոխական գործունեությունը: Փոխվեց նաև նրա պահվածքը և ընկերների նկատմամբ վերաբերմունքը: Առույզ և շփվող տղան դարձել էր լռակյաց, զուսպ և ներամփոփ երիտասարդ (սրանք նաև Կորեյի անձնային հատկանիշներն են): Նրա մեջ սկսեցին ի հայտ գալ ծածկանտությունը և մեկուսացվածությունը, որոնք առավել ցայտուն դրսևորվեցին ավելի ուշ շրջանում¹: Նա հայտնի էր նաև իր նեղացկոտ բնավորությամբ: Հետագայում Սերգո Օրջոնիկիձեն հիշում էր, որ Սոսոն ուներ «նեղացկոտ բնավորություն»: «Կորեան չի հասկանում կատակներ: Տարօրինակ վրացի է՝ կատակներ չի հասկանում: Ամենաանմեղ նկատողություններին պատասխանում է բռունցքներով» [5, էջ 92]: Սակայն, չնայած ներամփոփվածությանը և զսպվածությանը, Սոսոն հնարավորություն ստացավ ձեռք բերելու խմբի առաջնորդությունը: Ինքնազարգացման խմբակի անդամները իրենց ղեկավար ընտրեցին ավագ սեմինարիստներից Դևոյանիին, սակայն կարճ ժամանակ անց Ջուղաշվիլին ինքը կազմակերպեց մի քանի խմբակ և սկսեց ղեկավարել դրանց պարապմունքները: Այստեղ ցայտուն կերպով սկսեց դրսևորվել անձնական իշխանության նրա ձգտումը, որն այլոց նկատմամբ յուրատեսակ գերիշխանություն հաստատելու միջոց էր: Իրենաշվիլին հիշում էր, որ ճեմարանում երիտասարդ սոցիալիստների կազմակերպած քննարկումների ժամանակ Սոսոն սովորություն ուներ պնդելու սեփական իրավացիությունը և անգթորեն քննադատելու այ-

¹ Կարծում ենք, որ այս գծերը ևս իրենց հիմքում ունենին վաղ մանկության շրջանում ապրած ընտանեկան սթրեսները և հետագայում տեղի ունեցած մի շարք անձնական իրադարձությունները, որոնք նպաստեցին սրանց սրացմանը և, դառնալով կայուն անձնային գծեր, աստիճանաբար ձեռք բերեցին պատուլոգիական բնույթ և անմիջապես նրա քաղաքական և կառավարչական գործունեության ընթացքում դրսևորվեցին ազդեցիկ պոռթկումների և դրանց ազդեցության տակ ընդունած որոշումների ձևով:

լոց կարծիքները: Եթե այս ժամանակաշրջանում սեփական իրավացիությունը պնդելու և ապացուցելու համար նա ստիպված էր բերել հիմնավորումներ և այլ կարծիքների սխալականությունն ապացուցելու համար դիմել քննադատության, ապա հետագայում, ստանալով իրական իշխանություն, այլախոհության նկատմամբ նրա անհանդուրժողականությունը սկսեց արտահայտվել պատժիչ գործողությունների սանկցիավորմամբ՝ ներառյալ այլախոհների ֆիզիկական ոչնչացումը: Բացարձակ իշխանությունը, որը երաշխավորում էր նրա անպատժելիությունը, նաև իրավական և գաղափարական հիմնավորում էր տալիս այդ մեթոդներին: Սա նրան հնարավորություն էր ընձեռում ոչ միայն իր ագրեսիան արտահայտելու, այլև արդեն ցայտուն դրսևորվող սադիստական հակումները բավարարելու համար (զոհերի հետ «խաղալ», տանջել և սպանել): Ճեմարանում նման պահվածքը հանգեցրեց խմբակի պառակտմանը: Առանձնացան նրանք, ովքեր, զիջելով ճնշումներին, համաձայնվեցին դառնալ Ջուդաշվիլիի հետևորդներ, և նրանք, ովքեր ավելի անկախ էին իրենց մտածողությամբ և չէին ցանկանում զիջել Ջուդաշվիլիի բռնակալական մեթոդներին:

Ճեմարանում Ջուդաշվիլիին տարվեց արգելված գրականության ընթերցանությամբ: Բացի այդ նա աստիճանաբար սկսեց կապեր հաստատել մարքսիստական շարժման ներկայացուցիչների հետ, որոնց հետ շփումները հող պատրաստեցին նրա հեղափոխական գործունեության համար:

ԳՐԱՇՆՈՒԹՅՈՒՆ

1. *Амилуева С.*, Двадцать писем к другу, Москва, Книга, 1989, 216 с.
2. *Адлер А.*, Наука жить, Киев, Port-Royal, 1997, 288 с.
3. *Беладли Л., Краус Т.*, Сталин, Москва, Вся Москва, 1989, 341 с.
4. *Димигенский Г.Г.*, Социально-политическая психология, Москва, Новая школа, 1996, 352 с.
5. Дубинский-Мухадзе, И.М.Орджоникидзе, Москва, Просвещение, 1963, 323 с.
6. *Каминский В., Верещагин И.*, Детство и юность вождя, Москва, Рен, 1939, 386 с.
7. *«Пролетарская революция»*, 1936, N7.
8. Рассказы старых рабочих Закавказья о великом Сталине, Москва, 1937. from <http://tarasej.narod.ru>. May 02, 2006.
9. *Сталин И.В.*, Сочинения, Т. 13, Москва, Искра, 435 с.
10. *Такер Р.*, Сталин. Путь к власти 1879-1929, Москва, Союз, 1991, 486 с.
11. *Фрейд З.*, Очерки по психологии сексуальности, Минск, Попурри, 1997, 480 с.
12. *Юнг К.Г.*, Значение отца в судьбе отдельного человека, в кн. «Психоанализ детской сексуальности» Санкт-Петербург, 1998, Союз, 223 с.
13. *Iremaschwili J.*, Stalin und Tragodie Georgiens., Berlin, 1932. from <http://www.lib.ru>, Murch 21, 2006.

SOFIA AVAGYAN

*Public Administration Academy
of the Republic of Armenia,
Post-graduate Student of Psychology*

**FORMATION OF AUTHORITY CHARACTERISTICS OF IOSIF
STALIN PERSONALITY DURING CHILDHOOD AND YOUTH**

The article presents the analysis of Stalin's childhood. On the basis of biographic data, evidence and other documentary material we have studied the events and processes that have influenced Stalin's personality formation during his childhood which later primarily conditioned his choice of activity field and political behavior.

ԼԵՍԼԻ Ա. ՓԱԼԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ. ԶԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՆՉԱՆԳԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ» ՁԵՌՆԱՐԿԸ



ՀՀ պետական կառավարման ակադեմիան Կանադայի միջազգային կրթության բյուրոյի (CBIE) «Հանրային քաղաքականության գիտելիքների ցանց» ծրագրի շրջանակներում՝ Կանադայի կառավարությանն առընթեր Կանադայի միջազգային զարգացման գործակալության (CIDA) և Բաց հասարակության ինստիտուտի (OSI) «Տեղական ինքնակառավարման ու հանրային ծառայությունների նախաձեռնություն» ծրագրի (LGI) ֆինանսական աջակցությամբ թարգմանաբար հրատարակել է Կանադայի Կարլետոնի համալսարանի հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի տնօրեն, հանրային քաղաքականության և կառավարման դոկտոր, պրոֆեսոր, նշյալ ոլորտի դասական հեղինակ Լեսլի Ա. Փալի «Քաղաքականության վերլուծության շուրջ. հանրային կառավարման հիմնախնդիրներն անհանգիստ ժամանակներում» ձեռնարկը (Երևան, «Պետական ծառայություն», 2005, 496 էջ):

Գրքում լուսաբանված է *հանրային քաղաքականություն* և *քաղաքականության վերլուծություն* հասկացությունների բովանդակությունը: Ձեռնարկում ներկայացված են նաև հանրային քաղաքականության վերլուծության մեթոդաբանությունը՝ հիմնախնդրի սահմանումը, նպատակները և գործիքները, հիմնախնդրի կառուցման մեթոդները՝ սահմանային վերլուծություն, խնդիրների դասակարգման վերլուծություն, աստիճանակարգության վերլուծություն, մտքերի փոխանակություն, ենթադրությունների վրա հիմնված վերլուծություն և այլն, ինչպես նաև քաղաքականության ուղղություններն իբրև հիմնախնդիրների արձագանք:

Ձեռնարկը բովանդակում է նաև քաղաքականության նախագծման, իրականացման կազմակերպման և գնահատման, նոր հանրային կառավարման, ինչպես նաև քաղաքականության իրականացման գործընթացում մասնակիցների դերի մեկնաբանությունը:

Գրքում ներկայացված է նաև քաղաքականության ձևավորման մեջ շահերի նշանակությունն ու դերը, քաղաքականության ցանցերի տեսակները (կորպորատիվ, համաձայնեցման, պետության կողմից կառավարվող, մշտական հաճախորդների բազմակարծիք ցանցեր և այլն) և դրանց սահմանումները, կառավարման մեջ հանրային և մասնավոր հատվածների համագործակցության ու փոխադարձ կապի

կարևորությունը, «ընկերակցություններ-պետություն» կապի ձևերի բացատրությունն ու նկարագրությունը:

Ձեռնարկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ծրագրերի գնահատման հարցին՝ գնահատողներին ներկայացնելով որպես քաղաքականության ոլորտի հաշվապահներ: Ներկայացվել են ծրագրերի գնահատման տեսակները, հիմնական նպատակները (գործընթացի գնահատում, ազդեցության գնահատում և արդյունավետության գնահատում), գործունեության գնահատման վրա ազդող հիմնական գործոնները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ծախսերի և արդյունքների ու ծախսերի արդյունավետության վերլուծությանը, ինչպես նաև անհանգիստ ժամանակներում՝ ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում, անորոշության պայմաններում քաղաքականության ձևավորմանը, քառսային իրավիճակների մոդելավորմանը, ռիսկերի գնահատմանը և կառավարմանը:

Գրքի յուրաքանչյուր գլխի վերջում ամփոփված է դրանում օգտագործված տերմինների բացատրությունը, ընթերցողին է ներկայացված հարուստ գրականության ցանկ և ինտերնետային կայքերի հասցեներ այն բոլոր հարցերի շուրջ, որոնք քննարկվել և մեկնաբանվել են տվյալ գլխում:

Լեսլի Փալի «Քաղաքականության վերլուծության շուրջ. հանրային կառավարման հիմնախնդիրներն անհանգիստ ժամանակներում» ձեռնարկը նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրային կառավարման և քաղաքագիտական մասնագիտություններով սովորողների, պետական ու քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների ունկնդիրների, դասախոսների, հանրային կառավարման համակարգում աշխատողների և հանրային քաղաքականության վերլուծաբանների համար:

Թերեզա Խեչոյան
ՀՀ ՊԿԱ արտաքին կապերի գծով պրոռեկտոր

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (Font): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (Width 14.8 cm, Height 21 cm) չափին, ունենա լուսանցքեր՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում՝ կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1,5 (1,5 lines): Չեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (Justify):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է **հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը**: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը (օրինակ՝ 15.04.2005 թ.):

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ WORD ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին EXCEL ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականի հապավումները բերվում են բացակով և կետով (օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»):

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մե-

կից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Եջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **նզգսված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրապարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսաթիվը, ամիսը, տարին: Օրինակ՝

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:

2. *Борисов А.Б.*, Большой экономический словарь, М., Книжный мир, 2006, 860 с.

3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>,

4. <http://www.oecd.org/dsti/sti>.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

10. Անձնական տվյալներ.

- անուն, ազգանուն՝ 3 լեզուներով,
- հեռախոսի համարը, էլեկտրոնային հասցեն:

Խմբագրական խորհուրդ

Խմբագիր՝	ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝	ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ
Սրբագրիչ՝	ՊԱՏՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝	ԱՍՅԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Չափսը՝ 70x100^{1/16}, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,
ծավալը՝ 8.9 տպ. մամուլ, տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)